

ԼԻԳԱ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՔԻՄԻԱ

10

ԴԱՍԱԳԻՐՔ  
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔԻ ՀԱՄԱՐ



Երևան  
«Ահաւաբեռ»  
2011

ՀՏԴ 373.1671.1 : 54 (075.3)

ԳՄԴ 24 ց 72

U 150

Դասագիրքը հաստատված է Հայաստանի Հանրապետության  
կրթության և գիտության նախարարության կողմից

*Սահմանական Լիդա*

U 150 Քիմիա: Դասագիրք հումանիտար հոսքի համար / Լիդա  
Սահմանական.-Եր.: Անտարես, 2011.- 124 էջ:

Դասագիրքը նախադիմական է ավագ դպրոցի հումանիտար հոսքի 10-րդ դասարանի աշակերտների համար: Այն բնդզլում է 4 բաժին՝ քիմիայի զարգացման պատմություն, շրջակա միջավայրի քիմիա (օրորորդ և մքնուղղակ), էներգետիկա: Յուրաքանչյուր ենթագործություն է հարցերով և վարժություններով, որոնք լարուապոր փորձերի, գործնական աշխատանքների և հետաքրքրի նկարագրությունների հետ միասին ապահովում են դասագրքի մեթոդական կողմը:

Դասագիրքը կազմված է «Ավագ դպրոցի քիմիա առարկայի հումանիտար ուսուցման դասընթացի հափորշչների և ծրագրերի» հիման վրա՝ Ամակարդակի համապատասխան և ապահովում է գիտելիքների նկազագույնը:

ՀՏԴ 373.1671.1 : 54(075.3)

ԳՄԴ 24 ց 72

ISBN 978-9939-51-322-5



© Դասագրքերի շրջանառու հիմնադրամ, 2011  
© Սահմանական Լ., 2011  
© «Անտարես», 2011

# ՆԱԽԱԲԱՆ

Ժամանակակից մարդոք գլոբալային որ բնագավառում էլ աշխատելիս լինի, քիմիայի մասին որոշակի պարկերացում պետք է ունենա, քանի որ քիմիական նյութերի հետ մարդոք կամաք քե ակամա առնչվում է յուրաքանչյուր քայլափոխիք:

Քիմիան կարելի է անվանել գիտություն նյութերի և դրանց փոխարկումների մասին: Այս ծնակերպումը խիստ ընդգրկում է և իր մեջ ներառում է առարկաների և երևոյթների մի հակայական շրջան: Չէ՞ որ այս ամենն, ինչ շրջապատում է մեզ, նյութական է: Պարունական ապակին, շաքարը՝ ճակնդեղում, օդը, փայտը, բուղը կազմված են լրաբեր նյութերից, որոնք անընդհակը շարժման մեջ են գրնալում և անընդհակը փոփոխության են ենթարկվում: Այդ փոփոխությունները երբեմն շատ արագ են ընթանում, երբեմն էլ՝ այնքան դանդաղ, որ չենք նկարում:

Օդը բացառիկ դեր է կապարում մարդու, կենդանիների և բույսերի կենսագործունեությունում՝ խթանելով նյութափոխանակությունը: Օդի բաղադրամասերն այդ ընթացքում փոխարկվում են ուրիշ նյութերի: Օդի բբվածինը մասնակցում է նաև օրգանիզմում ընթացող օրսիդացման ռեակցիաներին: Պարկերացն՝ մեք՝ օդի, ջրի և ածխածնի (IV) օրսիդի ազդեցությամբ հողմահարվում են նոյնախակի լիոնները:

Քիմիան զարգացող գիտություն է: Տեքստիլ արդյունաբերությունում հայտնաբերվում են նոր մանրաթելեր և ներկեր, քիմիական արդյունաբերությունում արտադրվում են պոլիմերային նոր նյութեր, լվացող միջոցներ, փոխափում են վառելանյութերի բաղադրությունն ու տեսակները, գյուղատնտեսությունում լայն կիրառություն ունեն պարարտանյութերն ու միջատասպանները և այլն:

Նյութերի հատկությունների, դրանց փոփոխությունների ուսումնասիրությունը նպաստում է մարդու տրամաբանական մտածողության զարգացմանը:

**Քիմիական գրագիտությունը մարդու ընդհանուր զարգացման անհրաժեշտ լրաբերից մեկն է:**

Հումանիտար հոսքի աշակերտներին ուղղված «Քիմիա» դասագրքի համար հիմք են ծառայել «Հանրակրթության պետական կրթակարգը», «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը» (հաստատված ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 27-ի 20-րդ արձանագրային որոշմամբ), «Կրթության մասին» ՀՀ օրենքը և

«Ավագ դպրոցի քիմիա առարկայի հումանիտար ուսուցման դասընթացների շափորչիչները և ծրագրերը» (ՀՀ ԿԳ նախարարի 04.05.2009 թ. - 381-Ա/Ձ հրաման):

Հումանիտար հոսքի աշակերտների մեծ մասը դպրոցն ավարտելուց հետո ուսումը չի շարունակի բնագիտական ուղղվածությամբ: Այդ առումով ներկայացվող դասընթացի նպատակն է օգնել աշակերտներին.

**◀ *հասկանալու քիմիայի կարևոր դերը մարդկանց կյանքում,***

**◀ *բմբոնելու, որ քիմիայի օրենքների իմացությունը նպաստում է զիգուրյան, արդյունաբերության և հասարակության ու հասարակական կյանքին վերաբերող ժամանակակից հիմնախնդիրների լուծմանը,***

**◀ *պարկերացում կազմելու զիգուրյան ու գեխնահիկայի կիրառման սահմանների ու հնարավորությունների մասին,***

**◀ *ծանորանալու այն գեխնարզիական հիմնախնդիրներին, որոնց բախզում է մեր հասարակությունը և ամրող աշխարհը:***

Դասագիրքը կազմված է երկու մասից՝ երկու ուսումնական տարրա համար (ուսումնական ծանրաբեռնվածությունը շաբաթական 1 ժամ):

10-րդ դասարանի համար նախատեսված դասագիրքն ընդգրկում է չորս բաժին՝ քիմիայի զարգացման պատմություն, շրջակա միջավայրի քիմիան (ջրողորտ և մթնողորտ), քիմիան և էներգետիկան:

11-րդ դասարանում ընդգրկված են քիմիան կենցաղում, քիմիան և սնունդը, քիմիան և առողջությունը, քիմիան և արվեստը:

Յուրաքանչյուր ենթագլուխ ավարտվում է հետաքրքիր հարցերով և վարժություններով: Լարորատոր աշխատանքները (հնարավորության սահմաններում), լարորատոր փորձները և գործնական աշխատանքները, ինչպես նաև հետաքրքիր նկարազարդումներն ապահովում են դասագրքի ներողական կողմը:

Ծրագրով, որի հիմնա վրա գրվել է այս դասագիրքը, կազմված է շափորչիչների Ա նակարդակին համապատասխան և ապահովում է պահանջվող գիտելիքների նվազագույնը:

# ԳԼՈՒԽ I

## ՔԻՄԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

### ՔԻՄԻԱՅԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԵՎՈԼՅՈՒՑԻՎՆ

Պակմությունը կյանքի ուսուցիչն է: Երբեմն պակմությունը գործիք է ծառայում գնահատելու համար զիրությունիք՝ որպես ժամանակակից հոգևոր ու նյութական մշակույթի կարևոր գործիք:

Հարկապես պակմությունն է զիրության ապահովում լավագույն և առավել հուսափի նյութով, որի հիման վրա հնարավորությունն է սրեղծվում ուսումնասիրել մարդկության զարգացման օրինաչափությունները: «Քիմիա» զիրության պակմությունն օգնում է կրկին անգամ վերապարկերել քիմիան իր պրամարանական միասնության մեջ՝ համագործակցելով այդ զիրության զարգացման ինտերակտիվ միտումների հետ:

Քիմիայի պակմությունն անհրաժեշտ է այդ զիրությունն ուսումնասպրոդին և զիրականին, որպեսզի լավ հասկանալ կարարվող փոխությունները և գնահատել ցանկացած ուղղության դեղը զիտելիքների զարգացման բարդ համակարգում:

#### 1.1 ՔԻՄԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՆՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ


Քիմիան շատ հին զիտությունն է: Քիմիական արդյունաբերությունը գոյություն է ունեցել մեր թվարկությունից դեռևս երեք-չորս հազար տարի առաջ: Հին Եգիպտոսում կարողանում էին հանքերից մետաղներ ստանալ (երկար, պղինձ, կապար, անագ, ծարիք), դրանցից էլ՝ համաձայնվածքներ: Ուսկուց և արծաթից կենցաղային իրեր, զարդեր են պատրաստել, արտադրել ապակի, խեցի, ներկեր, օճանելիքներ:



Առաջին զիրական քիմիկուները եղիլ են եգիպտացիները: Նրանք պիտի ապեկում էին բազմաթիվ՝ միևնույն օրու չքացահայրված զարդնիքների: Օրինակ՝ մինչև հիմա հայտնի չեն, թե ինչպիսի էին զիրուսմ մահացած



**Դեմոկրիտոս**  
(մ.թ.ա. 570-460)



**Արիստոտել**  
(մ.թ.ա. 384-322)

Օդ	Ջերմություն		Կրակ
Հոգնավորյուն			Չորություն
Ջուր	Սառնություն		Հող

**Նկ. 1.1 Քիմիան հիմն դարերում Արիստոտելի դիագրամը**

փարավոններին ու մեծահամբավ եգիպտացիներին: Հայրնի չէ նաև որոշ մերկերի քաղադրությունը: Այսպէս՝ հիմն եգիպտական վարպետների կողմից պատրաստված անորների երկնագույն և կապույտ մերկանկութքը մինչ օրս չի խամրում, չնայած որ՝ անցել են հազարամյակներ:

Քիմիական արտադրություններ են եղել նաև Հին Հունաստանում, Հնդկաստանում, Չինաստանում: Այդ են վկայում աշխարհահռչակ Ալեքսանդրիայի գրադարանում պահպանված քիմիայի վերաբերյալ մի շարք աշխատություններ, որը նկարագրված է թորում, շիկացում, սուրլիմացում, ֆիլտրում և այլն:

Կուտակված տեղեկություններից ընդհանրացումներ են կատարվել նյութերի բնույթի և երևույթների վերաբերյալ: Օրինակ՝ հույն հոչակավոր փիլիսոփա **Դեմոկրիտոսը** դեռ 2500 տարի առաջ ենթադրել է, որ բոլոր նյութերը կազմված են մանրագույն, անտեսանելի, հավերժ շարժման մեջ գտնվող մասնիկներից: Այդ մասնիկները հին հույն փիլիսոփաներն անվանել են ատոմներ (հունարեն «ատոմոս» բառը նշանակում է անբաժանելի): Միմյանց միանալիս այդ մասնիկները նոր մարմիններ են կազմում, իսկ իրարից անջատվելիս մարմինը քայլայվում է:

**Արիստոտելի** կարծիքով՝ մշտական շարժման մեջ գտնվող բնույթան հիմքը սկզբնանյութն է, որն ունի չորս հատկություն՝ տաքություն, սառնություն, չորություն, խոնավություն: Նրա կարծիքով՝ այդ չորս հատկությունը կարելի էր առանձնացնել առաջնային նյութից կամ ավելացնել ցանկացած քանակով (նկ.1.1):

Արիստոտելի տեսությունը գաղափարական հիմք հանդիսացավ քիմիայի պատմության առանձին դարաշրջանի, այսպես կոչված, ալիքիմիայի համար: Ենթադրվում է, որ ալիքիմիան սկիզբ է առել Եգիպտոսում մ.թ. III-IV դարերում, այնուհետև ծավալվել է

Հունաստանում, իսկ VII դարի կեսերին անցել է արաբներին: Ալքիմիայի նպատակը երևակայական նյութի՝ «փիլխոփայական քարի» օգնությամբ հասարակ մետաղներն ազնիվ մետաղների՝ արծաթի և ոսկու փոխարկելն էր (նկ.1.2):

Չատ քիմիկոսներ են զբաղվել «փիլխոփայական քարի» աննպատակ փնտրութով, որը, նրանց կարծիքով, կարող էր վերացնել նաև հիվանդությունները, երկարացնել մարդու կյանքը կամ մարդուն անմահություն շնորհել:

«Փիլխոփայական քարը» փնտրելիս ալքիմիկոսները հայտնաբերեցին մեծ թվով նոր նյութեր, մշակեցին դրանց մարդան եղանակները, ստեղծեցին քիմիական սարքավորումներ: Սակայն ալքիմիկոսների մեծ մասն իրենց գործերը թաքցնում էին, քանի որ հարստանալու նպատակ էին հետապնդում:

XVI դարի սկզբում ալքիմիկոսներն իրենց ստացած արդյունքներն սկսեցին օգտագործել արդյունաբերական և բժշկական նպատակներով: Լեռնային գործի և մետաղամշակման բնագավառում աշխատանքների կատարման սկիզբը պատկանում է գերմանացի հանքարան և մետաղագործ Ագրիկոլային (1493-1555), իսկ բժշկության մեջ՝ Պարացելսին (1493-1541):

Միջին դարերում ատոմների մասին ուսմունքը հետապնդվել է կրոնավորների կողմից և արգելակել գիտության զարգացումն ընդհանրապես, իսկ քիմիային՝ մասնավորապես:

Բոլոր քիմիական տեսություններից ամենակարևորը ատոմների մասին տեսությունն է: Ատոմների և մոլեկուլների մասին ուսմունքը զարգացում է ապրել XVI-XVIII դարի սկզբներին և իր վերջնական ճանաչումն է ստացել 1860 թվականին՝ Գերմանիայի Կարլսռուե քաղաքում կայացած քիմիկոսների միջազգային գիտաժողովում:

«Քիմիա» բառի ծագումը վիճելի է: «Խեմի» եզիպտերեն նշանակում է «սև, գաղտնի»: Ստորև ներկայացնում ենք տեսակետներ քիմիա բառի ծագման վերաբերյալ.

1. «Քեմի» (հզիպր.)՝ «սև» (հող): Հին Եզիպտոսի անվանումն է, որին ծևակորպել է քիմիա գիտությունը:

2. «Քեմի» (հզիպր.)՝ «սև» (զիրություն): Ալքիմիա՝ որպես մուր, հրեշտավոր գիտություն, որը համեմատվում է կահարդանքի հետ՝ հիմնված անմաքուր ուժերի ազդեցության վրա:

3. «Խյումա» (հին հունարեն)՝ միկաղների ծովլածք (խեն՝ լցին):

4. «Կիմ» (հին չինարեն)՝ «ոսկի»: Հնում քիմիան կարելի էր համարել ոսկերչություն:




**Նկ.1.2 Ալքիմիկոսները  
փորձ կազարելիս**

## ❖ Առաջարկանք

Գրեթե վորքիկ շարադրություն՝ «Քիմիան ու նրա նշանակությունը հնադարյան քաղաքակրթության մեջ» վերևագրով:

### ❖ Հարցեր և վարժություններ

1. Ալքիմիկուները «փիլիսոփայական քարին» ի՞նչ հարկություններ էին վերագրում:
2. Մեծ թվով ալքիմիկուների աշխատություններ չօգտագործեցին: Ի՞նչն էր պատճառը:
3. Ի՞նչ եք կարծում՝ ալքիմիկուների աշխատանքները նպաստեցի՞ն արդյոք քիմիայի զարգացմանը, թե՞ ոչ:
4. Ո՞ր գիրնականներն են առաջինը կիրառել ալքիմիկուների սկզբանական մեթոդներում:
5. Ինչո՞ւ է միջին դարերում քիմիայի զարգացումն արգելակվել:
6. Վերջնականապես ե՞րբ և որպե՞ս է ճանաչվել նյութի մոլեկուլային և ալորմային կառուցվածքը:



## 1.2 ԱՏՈՄՆԵՐԻ ԵՎ ՄՈԼԵԿՈՒԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Վերցրեք բաժակով ջուր և մեջը մեկ կարիլ թանաք կարեցրեք:  
Ձեր աչքի առաջ թանաքը կտարածվի ջրի ամբողջ ծավալով և կներ-  
կի այն (նկ.1.3):

Չարարի կտորը լուծեք ջրում: Այն «անհետանում» է:  
Սակայն քաղցր համով կարելի է համոզվել, որ ստաց-  
ված լուծույթում առկա են շաքարի անտեսանելի մաս-  
նիկներ: Լուծույթը գոլորշիացնելիս ջուրը հեռանում է  
գոլորշու ձևով, իսկ շաքարի մասնիկները ճգում են միմ-  
յանց՝ առաջացնելով ավելի մեծ մասնիկներ՝ բյուրեղ-  
ներ (նկ.1.4):

Այս երևույթների ենթադրյալ բացատրությունն այն  
է, որ նյութերը կազմված են անզեն աչքով անտեսանե-  
լի մասնիկներից, որոնց միջև առկա են դատարկ  
տարածություններ:

Նյութն առանձին մասնիկներից կազմված լինելու  
ապացույցներից են հոտի տարածումը, պինդ մարմնի  
հալումը, գոլորշիացումը, ջերմաստիճանը փոփոխելիս  
նյութի ծավալի մեծացումը կամ փոքրացումը և այլն: Հասկանալի է,  
օրինակ, որ նյութը կազմող մասնիկները միմյանցից հեռացնելիս  
ծավալը մեծանում է, իսկ միմյանց մոտեցնելիս՝ փոքրանում:

Այն, որ ցանկացած նյութ բաղկացած է փոքրագույն  
մասնիկներից, որպես վարկած՝ առաջարել են Հին  
Հունաստանի գիտնականները, իսկ ավելի կոնկրետ՝  
Դեմոկրիտոսը, մոտ 2500 տարի առաջ (տե՛ս 1.1): Այն  
փորձով հաստատվել է միայն XIX դարում:

**Մասնիկները, որոնցից կազմված են նյութե-  
րը, անվանվում են մոլեկուլներ (լատիներե-  
մի moles՝ փորք զանգված):**


Այսպես՝ սովորական ջուրը կազմված է մոլեկուլներից:

Այդ նյութի բոլոր մոլեկուլները միատեսալ են: Հնա-  
րավոր չեն, օրինակ, տարբերել Սևանա լճի ջուրը Աև  
ծովի ջրից (իհարկե, երկու դեպքում էլ խոսքը վերա-  
բերում է բորած՝ լուծված նյութերից մաքրված ջրին):


**Մոլեկուլը նյութի փորքագույն մասնիկն է,  
որը պահպանում է դրա հիմնական քիմիական հագեկուր-  
յունները:**



**Նկ. 1.3 Թանարի  
լուծվելը ջրում**




**Նկ. 1.4 Չարարի  
լուծույթի գոլորշիացու-  
մը ապակյա բիբեղի վրա**



**Նկ. 1.5 Ջրի մոլեկուլի մոդելը**



**Նկ. 1.6 Թրվածնի մոլեկուլի մոդելը**



**Նկ. 1.7 Օզոն քաղի մոլեկուլը**



**Ջոն Դալբրոն  
(1766-1844)**

Չնայած մոլեկուլները նյութի շատ փոքրիկ մասնիկներ են, դրանք նույնպես բաժանելի են: Մասնիկները, որոնցից կազմված են մոլեկուլները, անվանվում են ատոմներ: Առո՞մ հումարեն նշանակում է «անբաժանելի» (չնայած՝ ավելի ուշ գիտնականներն ապացուցեցին, որ ատոմը նույնպես կարելի է բաժանել): Տարբեր նյութերի մոլեկուլները կազմված են տարբեր տեսակի ատոմներից: Օրինակ ջրի մոլեկուլը կազմված է երկու ատոմ ջրածնից և մեկ ատոմ թթվածնից (նկ. 1.5):

Մթնոլորտում գտնվող թթվածնի մոլեկուլը կազմված է երկու ատոմ թթվածնից (նկ. 1.6):

Մթնոլորտի վերին շերտերում գոյություն ունի, այսպես կոչված, օգոնային շերտ, որը պաշտպանում է Երկրի ֆառունան և Ֆլորան տիեզերական վճառակար ճառագայթումից: Օգոնային շերտը կազմված է օգոն զաղից, որի մոլեկուլը բաղկացած է թթվածնի երեք ատոմից (նկ. 1.7):

Մոլեկուլի բաղադրությունից կախված՝ նյութի հատկությունները կարող են խիստ տարբերվել: Օգոնը և թթվածինը տարբերվում են մոլեկուլը կազմող թթվածնի ատոմների բվով, հետևաբար և՝ հատկություններով. թթվածինն անհրաժեշտ է շնչառության համար, իսկ օգոնը թունավոր նյութ է:

Առոմների և մոլեկուլների մասին տեղեկություններն ընդհանրացված են ատոմամոլեկուլային ուսմունքի մեջ: Այդ ուսմունքի հիմնադիրը անգլիացի ուսուցիչ **Ջոն Դալբրոն** է: Նա 1808թ. առաջարկել է բաղադրության հաստատության և զանգվածի պահպանման օրենքների մեկնարանությունը իր կողմից մշակած ատոմային տեսության հիման վրա: Այդ տեսության էությունը հետևյալն է.

**1. Այրոմները նյութի փոքրագույն մասնիկներ են, որոնք անհնար է քիմիական ճանապարհով բաժանել բաղադրիչ մասերի, փոխարիել մեկը մյուսի կամ ոչ մյուսին:**


**2. Յուրաքանչյուր քիմիական փարբի ավոնքը բացարձակապես նույնն է և ունի նույն կշիռը: Տարբեր փարբերի ավոններն ունեն փարբեր կշիռ:**

**3. Երկու կամ ավելի փարբի քիմիական փոխազդեցության ժամանակ ավոնները միանում են մեկը մյուսին պարզ կամ ամբողջ բվերի հարաբերությամբ:**

Վերոնշյալ ժամանակից անցել է շուրջ 2 դար և ատոմների ու մոլեկուլների մասին ուսմունքը զարգացում է ապրել, սակայն նյութի ժամանակակից տեսության հիմքում դարձյալ Դալտոնի գաղափարներն են:

Այժմ հայտնի է, որ բոլոր նյութերը չեն, որ կազմված են մոլեկուլներից: Բազմաթիվ անօրգանական նյութեր մոլեկուլային կառուցվածք չունեն: Սակայն հարաբերական մոլեկուլային զանգվածները հաշվվում են բոլոր նյութերի համար: Մոլեկուլային կառուցվածք չունեցող նյութերի համար «մոլեկուլ» և «հարաբերական մոլեկուլային զանգված» հասկացությունները գործածվում են պայմանականորեն:

Ատոմամոլեկուլային ուսմունքի հիմնական դրույթներն են:



**Նկ. 1.8 Մոլեկուլային  
բյուրեղացանց**

**1. Գոյուրյուն ունեն մոլեկուլային (Նկ. 1.8) և ոչ մոլեկուլային կառուցվածքով նյութեր:**

**2. Մոլեկուլների միջև կամ փարածություններ, որոնց չափերը կախված են նյութի ազրեգավային վիճակից և ջերմաստիճանից: Ամենամեծ միջմոլեկուլային հեռավորությունները ունեն զագերը, ինչով էլ բացարձում է դրանց հեշտ սեղմանելու ունակությունը:**

**3. Մոլեկուլները գրնավում են անընդհատ շարժման մեջ, ինչը վկայում է օրինակ, դիֆուզիայի (փոխբախանցման) երևույթը: Մոլեկուլների շարժման արագությունը կախված է ջերմաստիճանից: Ջերմաստիճանի մեծացմանը՝ մոլեկուլների շարժման արագությունն աճում է:**

**4. Մոլեկուլների միջև գործում են չգործական և վանդական ուժեր. դրանք մեծ են հագեցապես պինդ նյութերում:**

**5. Մոլեկուլները կազմված են ալրոմներից, որոնք նույնագույն են գրնադարձությամբ:**

**6. Քիմիական յուրաքանչյուր գործի համապատասխանում է մի գեսակի ալրությամբ: Տարրեր գործերի ալրոմները իրարից գործերներում են զանգվածով և հապեկություններով:**

**7. Ֆիզիկական երևույթների ժամանակ մոլեկուլները պահպանվում են, իսկ քիմիական երևույթների ժամանակ՝ որպես կանոն, քայլայվում:**

### ❖ **Առաջադրանք**

Հավաքե՛ք ջրի զննածողային մողելլ՝ հաշվի առնելով, որ վալենտային անկյունը 104.5 է: Վերցրե՛ք համեմապարագ մեծ զունդ (կարմիր կամ կապույտ) և երկու փոքր զունդ (սև կամ սպիրալ) և միացրե՛ք դրանք նկար 1.5-ի:



### ❖ **Հարցեր և վարժություններ**

1. Փորձե՛ք բացակրին շաքարի կտորի լուծվելլ թեյում:

2. Մարդու օրգանիզմի քնականուն կենսագործունեության համար անհրաժեշտ պայմաններից է մաքուր մաշկը: Ի՞նչ եք կարծուն՝ արդյոք մաշկը մասնակցո՞ւմ է շնչառության գործընթացին, եթե այդ ապա ո՞ր երևույթի շնորհիվ:

3. Ի՞նչ է պեղի ունենում թեյահիկի մեջ եղած ջրի հետ, եթե այն դրվում է կրակին: Փոխվո՞ւմ է արդյոք ջրի ծավալը սկզբուն և ապա զանգվածը՝ ժամանակի ընթացքում: Հիմնավորե՛ք պատճենահանություն:

4. Ինչպե՞ս է բացակրիլում հովի գործածման երևույթը:

## 1.3 ՔԻՄԻԱԿԱՆ ՏԱՐՐ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Ասում բարից բացի, հնագույն մտածողներից մեզ հասել է տարր (Էլեմենտ) հասկացությունը, ինչը հունարենից բարգմանվում է բաղդրամաս: Հին Հունաստանի իմաստուն այրերը տարր հասկացությունը ներմուծել են դեռևս մեր թվարկությունից 5 դար առաջ: Սակայն նրանք տարրեր (ավելի ճիշտ՝ սկզբնատարրեր) էին համարում հողը, ջուրը, օդն ու կրակը:


XIX դարի հայ գիտնական Մաթևոս Սաղաթելյանը 1842թ. Վիեննայում հրատարակած «Համառոտ բնական գիտութիւն» գրքում քիմիային մեծ տեղ է հատկացրել, յուրովի մեկնաբանել քիմիա գիտությունը, տարրը և մի շաբթ այլ երևույթներ: Սաղաթելյանը քիմիական տարրը սահմանել է հետևյալ կերպ.

**«Մասերը, որոնք որ ալ ուրիշ կազմիչ մաս չունին, այսինքն՝ մարդու զիվուրիւնը ալ չկրնար բաժանի, բարր կըսվի»:**

**Ըստ միջազգային կանոնակարգի՝ քիմիական բարրը միջուկի դրական միևնույն լիցքն ունեցող աղումների համախումը է:**

Յուրաքանչյուր քիմիական տարր ունի իր անվանումն ու քիմիական նշանը: Ուսւ մեծ գիտնական **Դմիտրի Մենդելեևը** ստեղծել է քիմիական տարրերի հանրահայտ պարբերական համակարգը:


Պարբերական համակարգը կարելի է պատկերացնել մի մեծ, յոր հարկից (պարբերություն) բաղկացած տուն, որտեղ բարեկամաբար ու խաղաղ ապրում են մարդուն հայտնի բոլոր քիմիական տարրերը: Յուրաքանչյուր տարրի հատկացված է խիստ որոշակի համարով առանձին բնակարան (վանդակ), որտեղ գրփում է տվյալ տարրը բնութագրող մեծությունները, օրինակ՝



**Դմիտրի Մենդելեև (1834-1907)**



Որպեսզի կարողանաք օգտվել պարբերական համակարգից, անհրաժեշտ է ուսումնասիրել քիմիական այբուբենը՝ տարրերի քիմիական նշանները: Դրանց օգնությամբ կսովորեք գրել քառեր՝ քիմիական բանաձևեր, իսկ դրանց հիման վրա գրել նախադասություններ՝ քիմիական ռեակցիաների հավասարումներ.



Որպես քիմիական նշան՝ շվեդացի քիմիկոս Յ. Բերցելիուսի առաջարկությամբ ընդունվել է հիմնականում քիմիական տարրի լատինական կամ հունական անվանումների սկզբնատառերը՝ զիստառերով գրված: Եթե մի քանի տարրի անվանումների սկզբնատառերը նույնն են, ապա Բերցելիուսի առաջարկով առաջին տարի մոտ փոքրատառով գրվում է հաջորդ տառերից որևէ մեկը. օրինակ՝ կալցիում (Calcium)'Ca, պղինձ (Cuprum)'Cu, կորալտ (Cobaltum)'Co և այլն:

Որոշ տարրերի անուններում արտացոլված է այդ տարրի կարևոր քիմիական հատկությունը. օրինակ՝ ջրածին՝ ջուր ծնող, թթվածին՝ թթու ծնող, ֆոսֆոր՝ լուս կրող: Տարրերի մի մասն անվանվել է արեգակնային համակարգի մոլորակների անուններով. օրինակ՝ սելեն՝ Լուսին, տելուր՝ Երկիր, և այլն:

*Տանկարակ Ջևսի սիրելի որդու անունն է: Ասլրավածների արաջ հանգանք գործելու համար նա իխսու պարտիկի է: Տանկարակ մինչև կոկորդը կանգնած է եղել ջրում և նրա զինապերեւում կախվել են հյութեղ մրգերով ծանրաթեռնված ճյուղեր: Բայց հենց որ Տանկարակ ցանկացել է ծարավը հագեցնել ջուրը հեռացել է նրանից, ցանկացել է միրզ ուրեմն ճյուղերս են հեռացել: Հանկերից գանգալն առանձնացնելիս քիմիկուսները ևս մեծ շարչարանք ներ են կրել:*

Որոշ տարրեր իրենց անուններն ստացել են տարրեր պետությունների պատվին. օրինակ՝ գերմանիում, զալիում՝ Ֆրանշայի հին անունն է, պոլոնիում՝ Լեհաստանի պատվին, ռուբենիում՝ Ռուսաստանի լատինական անվանումն է, և այլն:

Վերջապես տարրերի անուններով անձահացել են մեծ գիտնականների անունները՝ կյուրիում, ֆերմիում, էյնշտեյնիում, մենդելևիում, նորելիում:

Քիմիական տարրերի նշաններն ու անունները հաճախ կապված են լինում դրանց հայտնաբերման պատմոթյան կամ օգտագործման հետ: Որպես օրինակ կարող են ծառայել հետևյալ տարրերը.

### **Սնդիկ (Hg)**

Արծարասպիտակ, հեղուկ մետաղ սնդիկը հայտնի է եղել դեռևս հին հույններին, որին նրանք անվանել են «հեղուկ արծար»: Լատիներենում այդ անունը վերափոխվել է hydrargyrum, որից էլ առաջացել է քիմիական նշանը՝ Hg: Անգլիացիները սնդիկն անվանել են quicksilver (կենդանի արծար), Գերմանիայում տարրը հայտնի էր որպես Quecksilber: Mercury (սնդիկ) բառը ծագել է հռոմեական աստվածների մունետիկ Սերկուրիի անունից:

### **Կորալիք (Co)**

Այս տարրը Գերմանիայում ստացել է Cobalt անվանումը: Նիկելը և կորալտը տարրեր քանակներով՝ որպես խառնուկ, գտնվում են երկարի հանքերում: Երբ հին ժամանակներում դրանք մշակել են, ապա կորալտի մեծ քանակություն պարունակող հանքանյութերից ստացվել է ցածր որակի երկար: Այդ հանքերը հայտնի են եղել որպես կեղծ հանքեր, և դրանք անվանվել են Kobold (հանքերում, իբրև թե, ապրող առասպելական էակների անունից):

### **Վոլֆրամ (W)**

Վ քիմիական նշանը ծագել է մետաղի Wolfram անվանումից, որն այն ստացել է Գերմանիայում վոլֆրամիս հանքի անունից: Վոլֆրամի մյուս հանքը կոչվել է Scheelite՝ շվեդացի քիմիկոս Շեելեի պատվին, ով առաջինն է հայտնաբերել վոլֆրամը, սակայն հանքը շեելիս անվանելուց առաջ հայտնի է եղել որպես «տանգատեն», որը նշանակում է «ծանր քար», այստեղից էլ տրվել է վոլֆրամի անգլիական անվանումը՝ tungsten:

XIX դարի հայ գիտնական Մաքլուս Սաղաթելյանը 1842 թվականին առաջարկել է քիմիական տարրերի նշանների հայերեն տարրերակներ: Ստորև բերում ենք Սաղաթելյանի նկարագրած տարրերից մի քանիսը:

Անվանումը	Նշանը	Անվանումը	Նշանը
Թթվածին	Թ	Նաբրոն	Նթ
Ցող	Ց	Կաղինն	Կղ
Սեղեն	Ս	Երկար	Ե
Ջրոմ	Ջ	Արծար	Ար
Բոր	Բ	Սիդիկինն	Սղ
Պղինձ	Պղ	Ջրածին	Ի

## ❖ Հարցեր և վարժություններ

1. *Ո՞ր «հարկում» և ո՞ր «քննակարանում է ապրում» ծծումը դարձրը:*
2. *Ո՞ր գործընթացը կազմում է «ապրում» 20-րդ «քննակարանում»:*
3. *«Ո՞վ է ուզում դառնալ միլիոնափեր» ինքելիկուուղիսում առաջադրված էր հետեւյալ հարցը. «Ո՞ր քիմիական գործընթացը կազմում է պատճենի որդու անունը»: Ցավոք, չկարողացան պատճախանել: Փորձե՛ք դուք պատճախանել այդ հարցին և պատճառաբանե՛ք, թե ինչո՞ւ է հարկացին այդ անունը գործել:*
4. *Մեր այրութենք 39 դաշտ քիմիական այրութենք՝ Հավասար թվով գործերից բառ (բանաձև) կազմելիս ո՞ր դեպքում հնարավորություններն ավելի շատ կլինեն:*

## Եկե՛ք խաղանք

Վերցրե՛ք 4 դաշտ հայերենի այրութենից և կազմե՛ք գործեր բառեր:

Վերցրե՛ք 4 քիմիական գործը և կազմե՛ք քիմիական բառենաձևեր: Հաղթող կճանաչվի այն աշակերտը, ով ավելի շատ բառ (բանաձև) կկազմի:

Օրինակ.

№	ա,ս,ր,յ	H,O,S,Na
1.	սար	NaOH
2.	այր	H <sub>2</sub> O
3.	ար	H <sub>2</sub> O <sub>2</sub>
4.	սա	Na <sub>2</sub> S
5.	աս	Na <sub>2</sub> SO <sub>3</sub>
6.	ասր	H <sub>2</sub> SO <sub>3</sub>
7.	սայր	Na <sub>2</sub> S
8.	և այլն	NaHS
9.		և այլն

## 1.4 ՔԻՄԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

### Չանգվածի պահպանման օրենքը

Քիմիայի զարգացման համար բացառիկ կարևոր նշանակություն է ունեցել զանգվածի պահպանման օրենքի հայտնաբերումը, որը բնության համընդիանուր օրենքի՝ մատերիայի և էներգիայի պահպանման օրենքի հետևողություններից է:

Նյութերը փոխազդում են միմյանց վրա, որի հետևանքով առաջանում են այլ նյութեր: Այդ փոխազդեցությունից նյութերի զանգվածի որևէ փոփոխություն արդյոք տեղի<sup>7</sup> է ունենում: Այս հարցի վերաբերյալ գիտնականներն ունեցել են տարրեր կարծիքներ: Այսպես՝ հայտնի անգլիացի քիմիկոս Ո-որերս Բոյլը, բաց անորում շիկացնելով տարրեր մետաղներ և կշռելով դրանք շիկացումից առաջ և հետո, նկատեց, որ մետաղների զանգվածները մեծանում են: Հիմնվելով այդ փորձերի վրա (նկ. 1.9), հաշվի չառնելով, սակայն, օդի դերը՝ նաև հանգեց սխալ եզրակացության, ըստ որի՝ քիմիական ռեակցիայի ժամանակ նյութերի զանգվածները փոփոխվում են:


Ի տարրերություն Ո. Բոյլի՝ Ս. Վ. Լոմոնոսովը նման փորձն իրազործեց փակ անորում և ցոյց տվեց, որ նյութի զանգվածը շիկացումից առաջ և հետո մնում է անփոփոխ: Փորձի հիման վրա նման հետևողուների հանգեց նաև ֆրանսիացի գիտնական Լավուազիեն 1777թ., որն արդեն գիտեր օդի բաղադրությունը (1774թ. Դ. Պրիստլին հայտնաբերել էր թթվածինը):

Ներկայումս օրենքը ձևակերպվում է հետևյալ կերպ:

**Քիմիական ռեակցիայի մեջ մրնող նյութերի ընդհանուր զանգվածը հավասար է ռեակցիայի հետևանքով առաջացած նյութերի ընդհանուր զանգվածին:**

Այս օրենքի հայտնագործման պատմությունը մի փոքր ավելի հանգամանորեն շարադրված է «Քիմիա 7» դասագրքում:

Օրենքը ճշգրտվել է XX դարում էներգիայի և զանգվածի հարաբերակցությունն ուսումնասիրելիս:



**Ռոբերտ Բոյլ  
(1627-1691)**



**Նկ. 1.9 Ռոբերտ Բոյլի  
փորձը**

Յանկացած փոխարկում, որի ընթացքում կլանվում կամ անցատվում է էներգիա, ուղեկցվում է զանգվածի փոփոխությամբ՝  $E = mc^2$ , որտեղ  $E$ -ն էներգիան է,  $m$ -ը՝ զանգվածը,  $c$ -ն՝ լուսի արագությունը։ Զանգվածի այսպիսի փոփոխությունը շոշափելի է, օրինակ, միջուկային ռեակցիաների դեպքում, եթե անշատվում է հսկայական էներգիա։ Եթե միջուկային ճեղքան ռեակցիային մասնակցում է 100 գ նյութ, ապա զանգվածի փոփոխությունը կազմում է մոտ 10 գ։ Առայժմ հայտնի քիմիական ռեակցիաներում համակարգի էներգիայի փոփոխությունը չի գերազանցում 425 կՋ, որին համապատասխանում է ընդամենը  $4,6 \cdot 10^{-9}$  գ զանգվածի փոփոխություն, որը հաշվարկներում անտեսվում է։


Այսպիսով, քիմիական ռեակցիայի համար նյութի զանգվածի պահպանման օրենքը լիովին կիրառելի է։

### **Նյութի բաղադրության հասպատունուրյունը**

Նյութի զանգվածի պահպանման օրենքի հայտնաբերումից հետո քիմիայի զարգացման հաջորդ փուլը եղել է նյութի բաղադրության հաստատունության մասին դրույթի հայտնաբերումը (Ժ. Պրուստ, 1806թ.):

**Յուրաքանչյուր քիմիական մարուր նյութ, անկախ նրա սպացման եղանակից և գունըլելու վայրից, ունի որոշակի քանակական և որակական հասպատունուրյուն։**

Օրինակ՝ ջուրը կարելի է ստանալ ստորև նշված ցանկացած ռեակցիայով։



Անկախ նրանից, թե ինչ եղանակով, որտեղ և ինչ պայմաններում է ստացվել ջուրը, մոլեկուլը պարունակում է 11,1% ջրածին և 88,9% քրվածին։

Հակառակ պնդումը, թե յուրաքանչյուր որոշակի բաղադրությանը համապատասխանում է մեկ քիմիական միացություն, ճիշտ չէ։ Օրինակ՝ էրիլսպիրոլ և դիմեթիլեթերն ունեն նույն քիմիական բաղադրությունը՝  $\text{C}_2\text{H}_6\text{O}$ , բայց տարբերվում են միմյանցից մոլեկուլի կառուցվածքով, այսինքն՝ մոլեկուլում ատոմների դասավորությամբ (իզոմերներ են)։



Նյութի բաղադրության հաստատունության օրենքը հայտնաբերվել և ձևակերպվել է այն պատկերացումների հիման վրա, ըստ որի՝ բոլոր նյութերը կազմված են մոլեկուլներից: Սակայն հետագա հետազոտությունները ցույց են տվել, որ անօրգանական միացությունների մեծ մասն ունի ոչ մոլեկուլային կառուցվածք: Պարզվել է, որ բաղադրության հաստատունության օրենքն իրավացի է միայն մոլեկուլային կառուցվածքով նյութերի համար:

Այսպիսով, բաղադրության հաստատունության օրենքն ավելի ճշգրիտ ձևակերպում է հետևյալ կերպ:

**Մոլեկուլային կառուցվածք ունեցող ամեն մի մարուր նյութ, անկախ զբնվելու վայրից և սպացման եղանակից, միշտ ունի հասպասում որսկական և քանակական բաղադրություն:**

### **Ավոգադրոյի օրենքը:**

#### **Մոլային ժամանակակից սահմանադրություն**

Գազային նյութերի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ փակ անորում գտնվող գազի զանգվածը, ծավալը, մածուցիկությունը, ջերմաստիճանը, ջերմահաղորդականությունը, ճնշումն անորի պատերին և այլ հատկությունների հնարավոր է ճշգրտորեն որոշել: Նշված հատկությունների կապը միմյանց հետ բացատրվում է պարզ տեսության սահմաններում՝ այն դրույթի հիման վրա, որ գազերը կազմված են անընդհատ շարժվող և միմյանց հետ բախվող մասնիկներից:

Նյութի կառուցվածքի ատոմական տեսության զարգացման մեջ կարևոր դեր է խաղացել 1811թ. Ա. Ավոգադրոյի կողմից առաջ քաշված համարձակ գիտական վարկածը: Իտալացի գիտնականը, դիտարկելով մինչ այդ հայտնի գազային օրենքները, նկատեց, որ բոլոր գազերը միատեսակ են սեղմվում (Բոյլ-Մարիոտի օրենք), օժտված են նույն ջերմային ընդարձակման գործակցով (Գեյ-Լյուսակի օրենք), նրանց ծավալները հարաբերվում են միմյանց հետ՝ որպես ամբողջական թվեր (Գեյ-Լյուսակ 1805թ.): Այդ օրենքների և սեփական դիտարկումների հիման վրա Ավոգադրոն ենթադրեց՝

**Արդարին միապեսակ պայմաններում զբնվող գարքերը զագերի հավասար ժամանակում պարունակվում են հավասար թվով մոլեկուլներ:**



**Ա. Ավոգադրո**  
**(1776-1856)**

Այդ ենթադրությունը (վարկած) գիտական հասարակության կողմից ճանաչվեց միայն կես դար հետո: Այն հաստատվեց բազմաթիվ փորձերով և վերջնականորեն ձևակերպվեց օրենքի ձևով:

Այս օրենքի հետևողությունները և կարևորագույն կիրառություններն առավել հանգանակորեն ներկայացվել են «Քիմիա 8» դասագրքում:

### ❖ Հարցեր և վարժություններ


1. Մեծ քանակությամբ փայլր այրելիս է շատ քիչ քանակությամբ մոխիր: Փայլի այրման ռեակցիայի համար արդյոք ճիշդը է զանգվածների պահպանման օրենքը: Հիմնավորեք պարապիսանը՝ ընդունելով, որ փայլր պարունակում է ածխածին, ջրածին և բրվածին բարրերը:



2. Քիմիական ռեակցիաների ընթացքում զանգվածի փոփոխություն չի կապարվում, քանի որ անփոփոխ է մնում.

- 1) ակրունների քիվը
- 2) մոլեկուլների քիվը
- 3) մոլեկուլների բաղադրությունը
- 4) քիմիական բարրի բնույթը
- 5) ակրունների զանգվածները

ա) 1.2.3                  բ) 2.3.4                  զ) 1.4.5                  դ) 3.4.5



**Ժ. Լուի Պրուասի  
(1754-1826)**

3. Նյութի բաղադրության հասպատունության օրենքը հայրնաբերել է.

- |                   |                   |
|-------------------|-------------------|
| ա) Մ.Վ.Լուսնոսովը | բ) Ա.Լ.Լավուազիեն |
| զ) Ժ.Լ.Պրուասի    | դ) Ս.Ա.Արենիոսը   |

4. Չհանգած կիրճ ( $CaO$ ) սրանում են կրաքարի ( $CaCO_3$ ) շիկացումից: Հաշվեք անցալված  $CO_2$ -ի զանգվածը, եթե 100 գ կրաքարից սրացվել է 56 գ զանգվածով չհանգած կիրճ:

5. Ավոգադրոյի օրենքը վերաբերվում է.
  - ա) պինդ նյութերին
  - բ) միայն հեղուկներին
  - զ) միայն գազերին
  - դ) հեղուկներին և գազերին

6. Հայր Ավոգադրոյի օրենքի՝ ցանկացած իդեալական զազի մեկ մոլը նորմալ պայմաններում ( $0^{\circ}\text{C}$  և 1 մբն. ճնշում) զրադեցնում է 22.4 լ ծավալ:  $F^{\circ}\text{նշ}$  ծավալ կզրադեցնի 2 մոլ  $H_2$ -ը նորմալ պայմաններում:
7.  $F^{\circ}\text{նշ}$  որակական և քանակական բաղադրություն ունի ջուրը: Կախված է այն ջրի սկացման եղանակից:

## 1.5 ՔԻՄԻԱՅԻ ԺՎԱԾՆԱԿԱԿԻՑ ՈՒՂԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քիմիայի դերը հասարակության կյանքում պայմանավորված է քիմիական հետազոտման ժամանակակից մեթոդների և ուսումնասիրման առարկաների բազմազանությամբ, որոնք նպաստում են աշխարհներակալմանն ու ճանաչողական ունակությունների զարգացմանը: Քիմիայի նպատակը անհատի և հասարակության պահանջների բավարարությն է: Քիմիան անքակտելիորեն կապված է ֆիզիկայի, կենսաբանության, մաթեմատիկայի, բժշկագիտության և մի շարք այլ բնական գիտությունների հետ: Դրանց անհրաժեշտ և օրինաչափ փոխկապակցվածության արդյունքում ծնունդ են առել զարգացող գիտական նոր ուղղություններ և ձևավորվել որպես ինքնուրույն գիտություններ:

Աշխարհի խոշորագույն գիտնականները ձևակերպել են արդիական այն հիմնախնդիրները, որոնց հետ բախվում է մարդկությունը, և դրանցից առանձնացրել են նրանց, որոնց լուծման համար կարևոր ներդրում կարող են ունենալ քիմիկունները: Թվարկենք այդ հիմնախնդիրը.

**ՍԱՆԴԱՄՔԵՐԸ Ի ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ:** Մեր մոլորակի այն մասերում, որտեղ բնակչությունը կրկնապատկվում է 25 տարին մեկ, իսկ այդ ընթացքում սննդամքերքի արտադրությունը չի ավելանում, բնականաբար, այդ երկրամասում առաջ է գալիս **սովոր վրանգը:** Գյուղատնտեսության հաջողություններն ինչ-որ չափով նվազեցնում են այդ հիմնախնդիրի սրությունը, սակայն հարկ է, որ քիմիկունները փորձեն ստեղծել բույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցներ, ինչպես նաև՝ մշակեն պարարտանյութերի ստացման արդյունավետ մեթոդներ: Անհրաժեշտ է գոնել ծնելիությունը կարգավորող առավել ընդունելի եղանակներ և միաժամանակ ստեղծել արհեստական սննդի ստացման տեխնոլոգիաներ՝ ոչ գյուղատնտեսական ծագման հումքից:

Տրամաբանական է, որ զբաղվելով այդ հիմնախնդրով, պետք է հաշվի առնել նաև սոցիալական, տնտեսական, քաղաքական,

հոգերանական և կրոնական գործոնները, սակայն կասկած չի հարցում այն, որ քիմիկոսների դերը մարդկության այդ կարևորագույն խնդրի լուծման գործընթացում առանցքային է:



**Հումքի օվկիանոսային աղբյուրի օգտագործում:** Մարդկությունը դեռևս շատ քիչ է օգտագործել օվկիանոսի հսկայական գոյապաշարները: Սինէ աժմ հաջողվել է օվկիանոսից հայրայքի սնունդ և որոշ քիմիական տարրեր (օրինակ՝ մագնեզիում, բրոմ): Ըստ Էության՝ նույնիսկ չենք ըմբռնել օվկիանոսի՝ որպես հումքի պահեստի ընծեռած հնարավորությունները:

Բացի այդ, երկրագնդի շատ տարածաշրջաններում զգացվում է խմելու ջրի պակաս, ինչը խիստ արդիական է դարձնում օվկիանոսից խմելու ջրի ստացումը:

**Կենսաբիմիական գործընթացներ:** Կենսաբիմիական գործընթացներում հետազոտման քիմիական մեթոդների կիրառումը հանգեցրել է տպավորիչ նվաճումների՝ կենդանի օրգանիզմների նյութափոխանակության, լուսասինթեզ՝ և այլ կարևոր կենսաբանական գործընթացներում: Այդ բնագավառում գիտության առաջընթացը պայմանավորված է բազմաթիվ չլուծված հիմնախնդիրների առկայությամբ: Դրանց թվին են պատկանում քիմիական մեխանիզմների վերաբերյալ հետևյալ հարցերը՝ մտածողություն, ժառանգականություն, օրգանիզմի վրա դեղամիջոցների ազդեցություն, կյանքի ծագում:



**Նկ 1.10 Արևային մարդկոց**

**Էներգիայի նոր աղբյուրներ:** Քանի որ մարդկությունն անխնա օգտագործելով սպառում է երկրի ընդերքում եղած նավթը, ածուխը, գազը, ուստի, ստիպված է օգտագործել միջուկային, արեգականային (նկ. 1.10), ինչպես նաև՝ քամու և մակընթացության էներգիաները: Էներգիայի աղբյուրի յուրաքանչյուր նոր ձևների նոր նյութերի և մեթոդների ստեղծում է պահանջում:

**Նոր ճյութեր:** Քաղաքակրթության զարգացումը պահանջում է նոր նյութերի ստեղծում: Արդեն ստեղծվել են կիսահաղորդիչ և գերհաղորդիչ նյութեր, լայն կիրառություն են զտնում ջերմակայուն սկավառակներն ու համալիր պոլիմերները, որոնք մեծ չափություն

կիրառվում են մեքենաշինությունում, շինարարությունում և այլ բնագավառներում:

**Եկոլոգիական քիմիա:** Չատ է խոսվել օդի և ջրի աղտոտման հիմնախնդրի մասին, բայց դեռևս չի գտնվել դրա որևէ ընդունելի լուծում: Քաղաքակրթության զարգացումը և միջավայրի աղտոտումը սերտ կապված են ավտոմեքենաների հետ և երերից մեկը նոր, անվնաս վառելանյութի որոնումն է: Այս հիմնախնդիրը մանրանասն քննարկվելու է դասագրքի հաջորդ գլուխներում:



**Տեսական հետազոտություններ:** Չնայած որ թվարկված հիմնախնդիրները հիմնականում տեխնոլոգիական են, անկասկած, դրանց լուծման համար անհրաժեշտ է քիմիական օրենքների և տեսական գիտելիքների իմացություն: Սակայն հետաքրքրական են ոչ միայն կրնկրետ նպատակաուղղված հետազոտությունները, այլ այն, որ դեռևս վերջնականորեն պարզված չեն նույնիսկ որոշակի թվով պարզագույն քիմիական ռեակցիաների, կատալիզատորների ազդեցության, բյուրեղների աճի մեխանիզմները և շատ այլ հարցեր:


Անցած դարի կեսերին քիմիայի բաժանումը օրգանականի և անօրգանականի կապված էր ուսումնասիրվող նյութերի երկու հիմնական դասի հետ: Միաժամանակ, մյուս գիտությունների հետ շփման սահմանագծում քիմիայի նոր բաժիններ առաջացան: Այսպես, քիմիայի և ֆիզիկայի փոխազդեցությունից ծնվեց երկու գիտություն՝ ֆիզիկական քիմիա և քիմիական ֆիզիկա, որոնք տարբերվում են իրենց ուսումնասիրման առարկայով:

Քիմիայի առաջատար ուղղություններից մեկը կենսաքիմիան է, որն ուսումնասիրում է կյանքի քիմիական հիմքները:

### Քիմիայի զարգացման ուղղություններն են.

**Տիեզերական քիմիա:** Այն ուսումնասիրում է մոլորակներում, աստղերում և միջաստղային տարածություններում ընթացող քիմիական գործընթացները: Զափազանց հետաքրքիր արդյունքներ են ստացվել այս բնագավառում:

**Համակարգչային և մաքենագրիկական քիմիա:** Սա ամենաերիտասարդն է, որը ծագել է վերջին տասնամյակում և որի խնդիրը մաքենատիկական մեքոնի կիրառումն է քիմիական օրինաչափությունները մշակելիս, մոդելների կիրառումը նյութերի կառուցվածքի և հատկությունների միջև եղած կապի փնտրումը բացահայտելիս, օրգանական միացությունների իզոմերների թվի հաշվումը:



**Նկ. 1.11 Ֆուլերեններ**

**Սպիհային քիմիա:**Գիտության այն ճյուղն է, որը քիմիա է ներմուծում մագնիսական փոխազդեցություններ:



**Նանոքիմիա:** Նանոքիմիան նանոդիսպերս նյութերի սինթեզն է, որոնք կարգավորում են նանոմետրի չափերով մարմինների քիմիական փոխարկումները:

**Ֆեմտոքիմիա:** Ուսումնասիրում է փոխազդող համակարգերի շարժման արագությունները և համարվում է քիմիական կինետիկայի բարձրագույն, էլիտար մասը:

#### **Ֆուլերենների և նանոտրովակների սինթեզ:**

Ֆուլերենները և նանոտրովակները շատ հետաքրքիր նանոկառուցվածքների ընդարձակ դասեր են (նկ.1.11):

**«Մեկ մոլեկուլի» քիմիա:** Այսօր գիտնականները կարող են տեսնել և ճանաչել մեկ մոլեկուլը և նույնիսկ ազդել դրա վրա:



## Առաջադրանք

Նկարին նայելով՝ պատրասխանեք հետևյալ հարցերին:


Ո՞ր գազն է X-ը:

Ո՞ր գազն է Y-ը:

Ո՞ր նյութն է սինթեզվում:

Գրեք ռեակցիաների հավասարումները:

Ինչպես է անվանվում  
բնույթան մեջ ընթացող  
այս գործընթացը:



## Հարցեր և վարժություններ

1. Ինչի՞ արդյունքում են ծնունդ առել քիմիայի զարգացող գիտական նոր ուղղությունները:

2. Որո՞նք են արդիական այն հիմնախնդիրները, որոնց հետ բախվում է մարդկությունը, և որոնց լուծման համար կարևոր ներդրում կարող են ունենալ քիմիկուները:

3. Քիմիայի առաջարար ուղղություններից մեկը կենսաքիմիան է, որն ուսումնասիրում է .....: Լրացրեք բաց բողած բառերը:

4. Կենսաքիմիական գործընթացներում առկա են մեծ թվով շլուծած հիմնախնդիրներ: Խնդիրները դրանցից մի քանիսը:

5. Գրեք 0,5 մոլ  $C_{60}$  ֆուլերենի զանգվածը:

6. Քիմիայի և ֆիզիկայի շփման սահմանագծում երկու գիտությունները առաջացավ: Որո՞նք են այդ գիտությունները, և ո՞րն է դրանց բարբերությունը:

## ԳԼՈՒԽ II

### ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՔԻՄԻԱՆ: ԶԲՈԼՈՐԸ

#### 2.1 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՂՏՈՏՄԱՆ ԲՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՊԱՏճԱռՆԵՐԸ

Գոյություն ունեն հիմնահարցեր, որոնք մարդկային հասարակության սկզբնավորումից ի վեր պահպանել են իրենց կարևորությունը՝ ժամանակի հոլովույթում ավելի ու ավելի հրատապ դառնալով։ Նման հարցերի թվին է դասվում շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրը, որը սերտորեն առնչվում է հասարակական առաջնարարության, մարդու կյանքին և բուն կենսագործունեությանը, նրա ձևավորմանն ու զարգացմանը, արմատական պահանջների բավարարմանը։ Պատմամշակութային իր ժառանգությունը պահպանելու մարդկային ձգումը ներառում է նաև բնական անգնահատելի հարստությունը՝ շրջակա միջավայրը։



Հավանաբար, յուրաքանչյուր մարդ տեղյակ է այն հիմնախնդիրներն, որոնք ծագում են տեխնիկայի զարգացման հետ և հանգեցնում բնության մեջ հավասարակշռության խախտման։ Այդ հիմնախնդիրների մեծ մասը միավորվում են մեկ ընդհանուր անվան տակ՝ «**Շրջակա միջավայրի աղտոտում**»։ Համարյա ամեն օր նոր տեղեկություններ են հաղորդվում օդի, ջրի, հողի աղտոտման, աղոտված մակարդակի բարձրացման և նման այլ երևույթների վերաբերյալ։

Այսօր, երբ մարդը հասել է բնության հետ համագոյակցության վրանգավոր ճամփարաժան, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ամեն մի երկրում ընթացող քաղաքական, սոցիալ-տնտեսական գործընթացները նոր մոտեցումներ են թելադրում նաև բնապահպանության բնագավառին։ Ներկա ժամանակներում գերինանդիր է դարձել շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքարը, ուստի տարբեր երկրներում ստեղծվում են պետական գերատեսչություններ և հասարակական կազմակերպություններ, որոնք գրաղվում են խնդրի հետազոտմամբ և դրան լուծում տալու հարցով։

Շրջակա միջավայրի աղտոտման հիմնահարցի լուծումը բավականին բարդ է: Կարող է թվական, թե յուրաքանչյուր կոնկրետ աղտոտման պատճառի աղբյուրը վերացնելով, կարելի է խնդրին շատ պարզ ու հիմնավոր լուծում տալ: Սակայն դա կարող է տվյալ տարածաշրջանի կամ նոյնիսկ՝ ամբողջ երկրի տցիալական ու տնտեսական բարեկեցության վրա լուրջ ազդեցություն ունենալ:

Օրինակ՝ շրջակա միջավայրի աղտոտման հիմնական պատճառներից մեկը հսկայական քանակությամբ նավթի օգտագործումն է: Անհնար է պատկերացնել, թե ժամանակակից տնտեսության վրա ինչ ազդեցություն կունենար նավթահանման լրիվ դադարեցումը: Ասվածի հետևանքները հասկանալու համար կարելի է նոյնացնել ավտոմեքենաներն իսպառ վերացնելու մտքի հետ՝ այն պատճառաբանությամբ, որ անժամանակ մահերի մոտ 50%-ը բաժին է ընկնում ավտովթարներին:

Սհա թե ինչու, շրջակա միջավայրի աղտոտման խնդիրը լուծելիս պետք է հաշվի նատել մեծ թվով գործոնների և այդ թվում՝ մարդկանց, նաև անհատների և պետական շահերի հետ:

Գոյություն ունեն շրջակա միջավայրի աղտոտման ինչպես արեստական (մարդածին), այնպես էլ բնական պատճառներ: Սովորաբար մենք ուշադրություն չենք դարձնում աղտոտման բնական գործընթացներին (հրաբուխների ժայթքումներ, երկրաշարժեր, հեղեղումներ, ընկնող երկնարարեր) այն պատճառով, որ զարգացնան ներկա փուլում մարդկությունն ի զորու չէ էապես ազդելու դրանց վրա: Բացի այդ, բնությունն ինքն օժտված է ինքնակարգավորման, ինքնամաքրման և փոփոխություններին հարմարվելու ընդունակությամբ: Բույսերի և կենդանիների կենսագործունեության արգասիքները՝ թափոնները, ամբողջապես ընդգրկվում են նյութերի բնական շրջապատճենի մեջ: Բնությունն իրեն հասցրած վճասները վերացնում են բնական ճանապարհով: Եթե աշնանն սկսում է տերևաբափը, կարիք չկա տերևները հավաքելու և աղբարկող լցնելու կամ, առավել ևս, այրելու: Բնության գործը պետք է քողնել իր բնական ընթացքում, ու թափված տերևներն իրենք կընդգրկվեն նյութերի շրջանառության մեջ:

Արիեստական աղտոտումը կապված է Երկրի բնակելի մասի վրա մարդու ծավալած գործունեության հետ: Տարբերում են քիմիական,



կենսաբանական, ճառագայթային, էլեկտրամագնիսական, ջերմային և աղմուկով պայմանավորված արհեստական աղտոտումներ, որոնց պատճառով բնական գործընթացները որոշակի փոփոխություններ են կրել: Այդ փոփոխությունները հիմնականում կապված են մարդու կողմից բնական պաշարների օգտագործման հետ:



զլսավոր հոգսն է հետևել, որպեսզի **վերականգնվող պաշարները** ծախսվեն բնական գործընթացով վերականգնումից ավելի դանդաղ:



Սետաղները, բնական գազը, ածուխը և նավթն անվանում են **չվերականգնվող պաշարներ** և կարող են լրիվ սպառվել:

Հանքերից գազերի արտահոսքի բնական գործընթացը հանգեցնում է շրջակա միջավայրի աղտոտմանը՝ կենսաբանորեն ակտիվ ածխաջրածիններով, ընդ որում՝ աղտոտումն այս դեպքում առավել մեծ չափերի է հասնում, քան մերենաներից արտանետվող գազերի ու վթարներից պատահարար քափիվ նավթի դեպքում: Սակայն ածխաջրածինների մետաբոլիզմն ու օքսիդացումը նույնական կարող են իրականացնել բնական ճանապարհով: Շրջակա միջավայրի տիպիկ աղտոտման հիմնախնդիրներ ծագում

են, եթե խիստ բնակեցված տարածաշրջաններում թափոնների կոնցենտրացիան չափից ավելի է մեծանում, կամ օվկիանոսի մի քանի քառակուսի կիլոմետր մակերես պատկում է նավթով, և բնական ճանապարհով վերամշակման ենթարկվելը հնարավոր չի լինում: Բնության մեջ առաջանում են մեծ քանակով ազոտի օքսիդներ և


ածխածնի (II) օքսիդ: Լեռնային հանածոներում, ինչպես նաև հողում և բնական ջրերում հանդիպում են ծանր մետաղներ: Դրանցից լրիվ ազատվել հնարավոր չեն և նույնիսկ ցանկալի են չեն: Անպրոպաների ժամանակ առաջացած ազոտի օքսիդները փոխարկվում են նիտրատների, որոնցով սնվում են բույսերը: Իսկ ծանր մետաղները փոքր շափաքանակով պարզապես անհրաժեշտ են բույսերի և կենդանիների բնականոն կենսագործունեության համար:

Ասվածից երևում է, որ շրջակա միջավայրն աղտոտող նյութի աղդեցությունը կախված է դրա կոնցենտրացիայից: Ցանկացած աղտոտող անվնաս է, եթե նրա կոնցենտրացիան չի գերազանցում հատուկ որոշված մեծությունը: Այդպիսի մեծությունը մասնագետներն անվանում են «սահմանային բույլատրելի կոնցենտրացիա՝ ՍԹԿ», և այն որոշված է աղտոտող նյութերի մեծ մասի համար: Շատ երկրներում ՍԹԿ-ն մտնում է պետական ստանդարտների համակարգի մեջ:

Եկոլոգիական առկա իրավիճակը, որն ստեղծվել է մեր հանրապետությունում, հիմնականում արդյունք է ժողովրդական լայն շերտերի էկոլոգիական գիտելիքների պակասի: Տրամադրանական է, որ այս կարևորագույն խնդրի լուծման ուղիներից մեկը՝ գուցե և ամենահիմնականը, մարդկանց էկոլոգիական դաստիարակության իրականացումն է:

## ❖ Առաջադրանք

Կազմակերպեք էքսկուրսիա  
և գրեք ակնարկ այն գործարանների մասին, որոնք  
աղբուրում են շրջակա  
միջավայրը:



## ❖ Հարցեր և վարժույթներ

1. Որո՞նք են շրջակա միջավայրի աղբուրում բնական պարագաները: Մարդկությունը ի զորո՞ւ է ազդելու դրանց վրա:
2. Երկրի բնակելի մասի վրա մարդու ծավալած գործունեությունից կախված՝ բնական գործընթացները որոշակի փոփոխություններ են կրել: Հիմնականում ինչի՞ հետ են կապված այդ փոփոխությունները:
3. Ի՞նչ ենք հասկանում «շրջակա միջավայրի աղբուրում» ասելով: Ո՞ր հիմնախնդիրների համալիրն է: Խնդիրները այդ հիմնախնդիրները:

4. Թթվարկե՛ք այն գործարանները, որոնց գործարկումը Հայաստանի Հանրապետությունում ընդհանրվեց՝ շրջակա միջավայրի պահպանման նպալրակով: Ի՞նչ վճառներ պարզաբնից այդ գործընթացը մեր հանրապետությանը:

5. Շրջակա միջավայրի աղբուրուման հիմնական պարագաներից մեկը հսկայական քանակի նավթի օգտագործումն է: Ի՞նչ գործեական հետևանքներ կրողնի նավթահանման լիիվ դադարեցումը:

6. Թթվարկե՛ք չորս վերականգնվող և չորս չվերականգնվող ընական պաշար:

7. Առանձնացրե՛ք երեք պարզ առարկա, որոնք դուք օգտագործել եք վերջին 12 ժամում: Յուրաքանչյուր առարկայի համար պարագաների հետևյալ հարցերին.

ա) Ի՞նչ նյութերից են պարրասպրված:

բ) Ի՞նչ մնացորդներ կմնան դրանք օգտագործելին, և ինչպե՞ս կարելի է դրանք վերացնել:

գ) Նյութերը, որոնցից պարրասպրված են այդ առարկաները, բնական գործընթացով վերականգնվո՞ղ են, թե՞ չվերականգնվող:




**Քիմիական գործարան**

## 2.2 ԶՐՈԼՈՐՏ:


### ԶՈՒՐԸ ՈՐՊԵՍ ԿԱՐԵՎՈՐՎԱԳՈՒՅՆ

### ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐ



**Նկ. 2.1 Ջրի մոլեկուլի կառուցվածքը**

Զուրն ամենատարածված ու ամենաանհրաժեշտ նյութն է Երկիր մոլորակում և տիեզերքում կենդանի նյութի եվոլյուցիայի հիմքը: Առանց ջրի՝ հնարավոր չէ բույսերի, կենդանիների և մարդու գոյությունը: Զուրը մարդկային մտքի համար միշտ եղել է հանելուկային նյութ: Եվ այսօր, չնայած տեխնիկական և գիտական առաջընթացին, ջրի կառուցվածքի և հատկությունների վերջնական բացահայտման համար դեռևս շատ քան է մնում մեզ անհասանելի: Երկրի մակերևույթի 7/10 մասը ծածկված է ջրով, և միայն 3/10 մասն է բաժին ընկնում ցամաքին: Հողագնդի մակերևույթի մոտավորապես 75%-ն զբաղեցված է ծովերի և օվկիանոսների ջրերով:



**Գծանկար 2.1 Ջրոլորդի բաղադրիչները**

Հողագնդի մակերեսի 3/4-ը ծածկող, անընդհատ ու ամբողջական շրային տարածքն անվանվում է Համաշխարհային օվկիանոս:

### **Համաշխարհային օվկիանոսը, ցամաքային և մքնոլորտային ջրերի հետ միասին, կազմում են Երկիր մոլորակի միասնական ջրային բաղամբը՝ ջրողորդը (գծանկար 2.1):**

Դժբախտաբար, Երկրի վրա ջրի առատությունը սուկ թվացյալ է: Զուրկ իր բոլոր փարավեռակներով երկրագնդի ողջ զանգվածի ընդամենը  $1/1000$  մասն է կազմում: Այնտեղ, որտեղ քաղցրահամ ջուրը շատ է, քիչ են մտահոգված դրա պահպանությամբ և խնայողությամբ: Սակայն մարդկությունն արագ մոտենում է քաղցրահամ ջրի՝ արդեն շոշափելի անբավարարությանը, հատկապես մեծ քաղցրաներում, և դա հանգեցնում է խնայողաբար օգտագործման և կրկնակի օգտագործման անհրաժեշտությանը: Կենտրոնական Եվրոպայի փոխադրական երակը հանդիսացող Հռենոս գետի ջուրը մինչև Հյուսային ծովի ափերը հասնելը օգտագործվում է 30 անգամ: Դա նշանակում է, որ քաղցրաները և արդյունաբերական ձեռնարկությունները, որոնք տեղափորված են Հռենոս գետի ափերին և օգտվում են այդ ջրերից, պետք է խնամքով մաքրեն օգտագործված ջրերը գետը լցնելուց առաջ:

Առկա տվյալներով՝ ցամաքի վրա տարեկան բափվում է  $120\,000$  կմ<sup>3</sup> քաղցրահամ ջուր՝ ձյան և անձրևի ձևով: Այդ քանակից  $32\,000$  կմ<sup>3</sup> ջուրը հողի միջով անցնում է գետերին, աղբյուրներին, առվակներին և հասնում օվկիանոսներին: Մնացած ջրի մեծ մասը գոլորշիանում է կամ մնում կենդանական և բուսական աշխարհում:

Մեծ երկրներում շատ քանակությամբ ջուր է ծախսվում, օրինակ՝ ԱՄՆ-ում յուրաքանչյուր օր ծախսվում է  $3600$  միլիարդ լիտր քաղցրահամ ջուր, և այդ երկիրը կանգնած է խմելու ջրի կրկնակի օգտագործման անհրաժեշտության առաջ:

Բնական պայմաններում աղտոտված ջրի մաքրման խնդիրը լուծվում է գոլորշիացմամբ: Գոլորշիացման ու խտացման ճանապարհով ջրից հեռացվում են բոլոր լուծված նյութերը, քացի զազից: Նման ճանապարհով քանությունն ստեղծում է հսկայական քանակով քաղցրահամ ջուր, նույնիսկ՝ ամենակենտութ ջրերից: Մեկ մոլ ջրի գոլորշիացման համար ծախսվում է  $43,56$  կՎ ջերմություն, որը տրամադրում է Արեգակը: Այդ էներգիան վերադարձվում է մքնոլորտ՝ հեղուկի խտացման ճանապարհով:

Սակայն ջրի «քորման» այս բնական գործընթացը նույն տեղում չի կատարվում: Գոլորշիացում կատարվում է երկրագնդի արևադարձային գոտիներում: Կոնդենսացում տեղի է ունենում, եթե տաք, գոլորշիներով հագեցած օդը հալվում է սառը օդին: Այսպիսով, ջրի

Հրջապտույտը բնության մեջ հանգեցնում է արևադարձային գոտիների սառեցմանը և միջին գրտիների տաքացմանը:

Չուրը մաքրվում է նաև հաջորդաբար սառույցի փոխարկվելով և հալվելով:

Այսպիսով, բնության մեջ ջրի շրջանառության շնորհիվ՝ մարդն ստանում է քաղցրահամ ջուր, որը կարևորագույն բնական պաշարներից մեկն է (նկ. 2.2): Օգտագործելով ջուրը՝ մենք աղտոսում ենք այն տարբեր նյութերով, և եթե խնամքով չի մաքրվում, դարձնում ենք կրկնակի օգտագործման համար ոչ պիտանի: Եթե մեր պահանջմանը գերազանցում են մաքուր ջրի բնական պաշարների առկայությանը, ապա այն անհրաժեշտ է մեծացնել արհեստական ճանապարհով:

Սևանա լիճը Հայաստանի Հանրապետության քաղցրահամ ջրի ռազմավարական պաշարն է, ինչպես նաև՝ ողջ տարածաշրջանի խմելու ջրի միակ հեռանկարային աղբյուրը: Լիճը բացառիկ տեղ է գրավում Հայաստանի ջրային հաշվեկշռում: Այստեղ է կուտակված հանրապետության ջրային ռեսուրսների 70 %-ից ավելին:

30-ական թվականներից ի վեր Սևանա լիճի ջրային պաշարների անհաշվենկատ օգտագործման արդյունքում խախտվել է լճի էկոլոգիական հավասարակշռությունը, ծագել է Սևանի հիմնախնդիրը, որն առ այսօր մնում է անլուծելի:

Զեաչափական փոփոխությունների արդյունքում, օրգանական նյութի կուտակման հետևանքով, լճում ուժգնացել են էվտրոֆացման (ճահճակալման) երևույթները, նկատվել է ջրի որակի վատացում:



Նկ. 2.2 Ջրի շրջապատճեղը

### Լճի էվորդացման հիմնական պատճառներն են:

◀ Լճի ծավալի փորբացման արդյունքում խախտվել է լճի լուսարափակությունը և ջերմակարողությունը. լիճը արագ լուսարանում և արագ սառչում է. փոխվել է ջերմասպիսային շերտավորումը:

◀ Անհերաժեշտ է լճի հարակի ամենամեծ խրություն ունեցող պաշտպանական ջրաշերտը, որը մեկուսացնում էր հարակը ջրից՝ արգելելով կենսածին լուսարերի մուտքը լիճ:


◀ Զերմասսպիճանի բարձրացման արդյունքում փոխվել է բրվածնային ռեժիմը: Ամառային և ձմեռային կանգի շրջանում հարակային շերտերում նկարվում է բրվածնային քաղց:

◀ Ծավալի փոքրացման պայմաններում փոխվում են լճային կենացենոզները, դեսակափոխությունները և գեղեցիկ ունենությունները: Ակդիվանում են ներջրամբարային գործընթացները: Նկարվում է ջրային էկոհամակարգի կենացենոզներության աճ:

### **Սևանի էկոհամակարգի կայունացման միակ հայտապայմանը լճի ծավալի մեծացումն է և ջրի մակարդակի բարձրացումը:**

Կարևորելով Սևանա լճի դերը ամբողջ տարածաշրջանի համար՝ ՀՀ կառավարությունը որպես քննապահպանական գերակայություն է ճանաչել Սևանա լճի հիմնախնդիրը:

2001թ. ընդունված «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ Սևանա լճի վերականգնման, պահպանման, վերաբարերման, քնական ուսուրացների զարգացման ու օգտագործման պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից է՝ «Սևանա լճի ջրային բացառությունը և լճի էկոլոգիապես անհրաժեշտ մակարդակի բարձրացման ապահովումը»:



#### **Սևանա լիճ**

Լճի քնական պաշարների վերականգնման և պահպանման համար 1999թ., Էներգետիկ նապատակներով, արգելվել է ջրառը Սևանա լճից: Խոկ համաձայն ՀՀ օրենսդրության, զյուղատնտեսական նապատակներով ջրառի առավելագույն բույլատրելի չափաքանակը է սահմանվել 170 մլն խորանարդ մետրը:

Օրենքի ընդունումից առ այսօր նկատվել է ջրի մակարդակի բարձրացում:

#### **❖ Առաջարկանք**

1. Կազմե՛ք գեկուցում՝ «Սևանա լճի հիմնախնդիրը» թեմայով:
2. Կազմակերպե՛ք գործնական խաղ՝ «Սևանա լճի հիմնախնդիրի լուծման ուղիները» թեմայով:

## ❖ Հարցեր և վարժություններ

1. Սահմանեք՝ ի՞նչ է Համաշխարհային օվկիանոսը և ջրուրբը:
2. Որո՞նք են ջրուրբի բաղադրիչները:
3. Երկրագնդի ողջ զանգվածի ո՞ր մասն է կազմում ջուրը՝ իր բոլոր գործառնակներով:
4. Որո՞նք են համարվում ցամաքային ջրեր: Թվարկեք մակերևութային ջրերի բաղադրիչները:
5. Թվարկվածներից ո՞րը մակերևութային ջուր չէ:  
ա) գեղ  
բ) լիճ  
գ) մառախուղ  
դ) ձահիճ
6. Որո՞նք են Ալիանա լճի ճահճացման պատճառները:
7. Ի՞նչ կպարահեր, եթե մյուս նյութերի նման սառույցի դեսակարար կշիռը մեծ լիներ ջրի դեսակարար կշորից:



**Մառախուղ**

## 2.3 ԶՐԻ ԱՎՏՈՏՄԱՆ ՊԱՏճԱՌՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՉՔԱՐԸ ԴՐԱՆՑ ԴԵՄ

Չուրն ակտիվ քիմիական միացություն է, ուստի, մեծ թվով նյութերի հետ է փոխազդում: Այդ փոխազդեցություններից ամենահաճախայտն ու տեսանելին նյութերի լուծվելն է ջրում:

### Չուրը համբաղիանոր լուծիչ է:

Նյութերը, որոնք պատահական կամ դիտավորյալ լցվել են ջրի մեջ, կարող են դիտվել որպես ջուրն աղտոտողներ:

Որպես լուծիչ՝ ջրի հատկությունները հիմնականում պայմանավորված են դրա մոլեկուլի բևեռային կառուցվածքով: Ջրի մեջ են անցնում բազմաթիվ նյութեր, որոնց մի մասն օգտակար է կենսանի օրգանիզմների համար, իսկ մյուս մասն աղտոտում է ջուրը, և այն դարձնում օգտագործման համար ոչ պիտանի:

Ջրում լուծվում են գազային, հեղուկ և պինդ նյութեր: Քիմիայի դասերից ձեզ հայտնի է, որ ջրում լուծվում է քլորաջրածին գազը, պղնձի սուլֆատը, ազոտական թթուս ու իր աղերը և այլ նյութեր:

Կենցաղից ծանրոք եք քացախաթթվի (քացախ), կերակրի աղի, շաքարի լուծույթներին: Ջրային լուծույթ է նաև արյունը, մեզը և մյուս կենսաբանական հեղուկները:

Համբաղիանոր լուծիչ լինելով՝ ջուրը լուծում է բազմազան նյութեր: Այդ նյութերը ջրի հետ լցվում են բնական ջրամբարները և աղտոտում:

Բնական ջրի աղբուրումը ջրի որակի իջեցումն է, երբ ջրամբարների՝ գերերի, լճերի, ծովերի, օվկիանոսների մեջ քիմիական, կենսաբանական և ֆիզիկական աղբուրիչներ են քաղվում:



Ըստ ջրում լուծված թթվածնի հետ փոխազդեցության՝ ջուրն աղտոտող նյութերը բաժանվում են երկու խմբի:

### 1. Նյութեր, որոնց օքսիդացման համար պահանջվում է բրվածին:

ա) Վարակի հարուցիչներ՝ վիրուսներ և բակտերիաներ (մասնէներ): Դրանց բվին են պակրածում կեղուաջրերը և կենական ծագմանը քախուկները:

բ) Բույսերի համար սևնդարար նյութեր, պարարրանյութեր, արդյունաբերական քափուկներ:

գ) Օրգանական միացություններ՝ դեկտերագեներներ, հերթիցիդներ, միջակասպաններ, կեղուաջրեր:

## **2. Այլ գեսակի աղբուբողներ**


1. Հանքանութեր և քիմիական ազդանութեր՝ բրուներ, հիմքեր և աղեր: Դրանց թվին են պատկանում հանքահորերից արգահոսող ջրերը, անօրգանական արդյունաբերական քաղունական քաղունական ջրերը:

2. Ուղղուակիր նյութեր:

3. Զերմային աղբուբում:

Կենդանի օրգանիզմների գոյությունը ջրում կախված է դրանում լուծված թթվածնի քանակից: Այդ քանակը տատանվում է 15 մգ·լ<sup>-1</sup> 0°C մինչև 9 մգ·լ<sup>-1</sup> 20°C: Ֆիտոպլանկտոնը, ծովային ջրիմուները և բակտերիաները չեն կարող գոյություն ունենալ առանց ջրում լուծված թթվածնի, սակայն թթվածնի առավել մեծ քանակ անհրաժեշտ է ձկներին:

Թափոնները, որոնց քայլայման համար թթվածին է պահանջվում, ընկնելով բնական ջրամբարները, օրսիդանում են ջրում լուծված թթվածնով, ինչը հանգեցնում է դրա ծախսի կտրուկ մեծացմանը: Ընդհանուր ձևով՝ օրսիդացման ռեակցիան կարելի է ներկայացնել հետևյալ ձևով.



Կարելի է հաշվել, որ 1 գ ածխածնի օրսիդացման համար պահանջվում է 2,67 գ  $\text{O}_2$ , այսինքն՝ 300 լ ջրում լուծված ամբողջ թթվածինը: Մեծ քանակությամբ անմշակ կոյուղաջրեր լցվում են բնական ջրամբարները և փոխագրում ջրում լուծված թթվածնի հետ՝ իջեցնելով դրա քանակը՝ ջրում կյանքը պահպանելու համար անհրաժեշտ մակարդակից:

Բնական ջրերի աղտոտումը նիտրատներով, ֆոսֆատներով, կապարի ու սնդիկի միացություններով, օրգանական նյութերով հանգեցնում է ձկների ու ջրային այլ կենդանիների ոչնչացմանը, ջրային բույսերի աճին, գետերի և լճերի ծանծաղացմանը: Չը աղտոտումը բազմաթիվ պատճառներ ունի, որոնցից առավել վտանգավորը կեղտաջրերն են: Տարբերում են կեղտաջրերի հետևյալ տեսակները՝ կենցաղային, արտադրական, մթնոլորտային:

**Կենցաղային կեղտաջրերն** առաջանում են բնակելի և հանրային շենքերի շահագործումից: Կենցաղային կեղտաջրերը պարունակում են շատ մեծ քանակով միկրոօրգանիզմներ, որոնց մի մասը կարող է հիվանդածին լինել, օրինակ՝ աղիքային վարակների հարուցիչներ: Կենցաղային կեղտաջրերում պարունակվում են նաև հանքային և օրգանական բնույթի նյութեր: Ե՛վ մեկը, և՛ մյուսը կարող են գտնվել լուծված և կախված վիճակում: Վերջիններս կարելի է հեռացնել ֆիլտրումով: Առավել վտանգավոր են օրգանական ծագման նյութերը: Կենցաղային կեղտաջրերում պարունակվում է 100-300 մգ/լ

օրգանական նյութ՝ կախված վիճակում: Կենցաղային են համարվում նաև լվացքատների և սննդի օբյեկտների կեղտաջրերը, որոնք պարունակում են մեծ քանակությամբ սինթետիկ լվացող նյութեր:

**Արտադրական կեղղաջրերն** առաջանում են ձեռնարկությունների շահագործումից: Դրանց են պատկանում տեխնիկայի լվացման կետերը, վառելանյութի պահեստները, տեխնոլոգիական գործընթացների սառեցումը: Առավել աղտոտված են տեխնիկայի լվացման կեղտաջրերը, օրինակ՝ մեկ մերենայի լվացման համար ծախսվում է տարեկան 300-400 մ<sup>3</sup> ջուր: Այդ ջրերի աղտոտվածությունը կազմում է 2500-3000 մգ/լ՝ ըստ կախված նյութի, և 300 մգ/լ՝ ըստ նավթանյութերի: Արտադրական կեղտաջրեր են համարվում նաև էլեկտրակայաններից արտահոսող ջրերը:

**Մթնոլորդային կեղղաջրերն** առաջանում են անձրևներից ու ձնիալից: Դրանց աղտոտվածությունը, պայմանավորված օդում կախված մասնիկներով, բավականին մեծ է:

Թթվային տեղումները մթնոլորտային տեղումների տարբեր տեսակներ են (անձրև, ձյուն, մառախոտ, ցող)՝ բնականոն չափաբանակից բարձր թթվայնությամբ:

Մաքուր բնական ջուրը, մասնավորապես՝ անձրևաջուրը, առանց աղտոտվածության, օժնված է թույլ թթվային հատկություններով, քանի որ ածխաթթու գազը հեշտ լուծվում է ջրում՝ առաջացնելով թույլ ածխաթթու.



Թթվայնություն առաջացնող արտանետումների հիմնական մարդածին սկզբնաղբյուրներն են ծծմբի (IV) օքսիդը՝  $\text{SO}_2$ , և ազոտի օքսիդները՝  $\text{NO}$ ,  $\text{NO}_2$  և այլն):

Մթնոլորտում  $\text{SO}_2$ -ի հայտնվելու սկզբնադրյուրները հրաբուխներն են ու անտառային հրդեհները: Մթնոլորտում  $\text{SO}_2$ -ի բնական ֆոնային կոնցենտրացիան կայուն է, քանի որ այդ գազն ընդգրկված է կենսաքիմիական շրջապտույտում: Սիհազգային պրակտիկայում  $\text{SO}_2$ -ի համար հավասար է 15 մկգ/մ<sup>3</sup>:

Ծծմբական և ծծմբային թթուների աերոզոլները հանգեցնում են մթնոլորտում առկա ջրային գոլորշու կոնդենսացման ու թթվային տեղումների (անձրև, ձյուն, մառախոտ) պատճառ դառնում:

Կրաքարը, կավիճը, մարմարը, տուֆը պարունակում են կալցիումի կարբոնատ, որը թթվային անձրևների հետևանքով քայլայվում է.





### Թթվային պեղումների առաջացման մեխանիզմը.

Ծծմբի օքսիդներ	Ազոտի օքսիդներ
$2\text{SO}_2 + \text{O}_2 \rightarrow 2\text{SO}_3$ Լուսաքիմիական օքսիդացում	$\text{N}_2 + \text{O}_2 = 2\text{NO}$
$\text{SO}_3 + \text{H}_2\text{O} \rightarrow \text{H}_2\text{SO}_4$	$2\text{NO} + \text{O}_2 \rightarrow 2\text{NO}_2$
Թթվային պոլիհիդրատ $\text{SO}_2 \cdot n\text{H}_2\text{O}$ $\text{SO}_2 + n\text{H}_2\text{O} \rightarrow \text{SO}_2 \cdot n\text{H}_2\text{O}$	$2\text{NO}_2 + \text{H}_2\text{O} \rightarrow \text{HNO}_3 + \text{HNO}_2$
$\text{SO}_2 + \text{H}_2\text{O} \rightarrow \text{H}_2\text{SO}_3$	$4\text{NO}_2 + \text{O}_2 + 2\text{H}_2\text{O} \rightarrow 4\text{HNO}_3$
$2\text{H}_2\text{SO}_3 + \text{O}_2 \rightarrow 2\text{H}_2\text{SO}_4$	

Հռոմի, Վենետիկի և այլ քաղաքների արվեստի շատ գործեր վերջին տար տարվա ընթացքում ավելի շատ են տուժել, քան մինչ այդ: Թթվային անձրևների հետևանքով՝ լիիվ քայլայման վտանգ է սպառնում ավելի քան 50 հազար քանդակի: Այսպես՝ վտանգված է 15 դար առաջ Չինաստանում կառուցված ժայռային «Բուդդայի քաղաքը»: Թթվային անձրևները քայլայում են նաև Եկեղեցիների, տաճարների, պալատների պատուհանների ապակիները: Հնադարյան ապակին, ալկալիական ու հողալկալիական մետաղների օքսիդների բարձր պարունակության հետևանքով, թթուների ազդեցությանն ավելի է ենթարկվում, քան ժամանակակից ապակին:

Կեղտաջրերի նատվածքները միջավայր են ստեղծում հիվանդածին մասների ու միջատների համար և համարվում են շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակի վատքարացման աղբյուր: Բնական ջրերի աղտոտման աղբյուր կարող են դառնալ կեղտաջրերի պինդ մնացորդները և դրանց կուտակումն ու ոչ ժամանակին հեռացումը կարող են հանգեցնել բնակչության համաճարակային կամ վարակիչ հիվանդությունների:

Կեդտաջրերի մաքրումն ընդգրկում է երեք հաջորդական փուլ.

**Առաջնային մաքրումը, ըստ էության, ֆիլտրում և քլորուցում** է: Այս փուլում ազատվում են պինդ խառնուկներից, ավազից, մամուռներից և բակտերիաներից:

**Երկրորդային մաքրումն ընդգրկում է դանդաղ ֆիլտրում:**

Այս փուլում ջուրը դանդաղ բաց են թողնում մեծ խճաքարերի միջով, որտեղ շատ բակտերիաներ կան, և քայլայում են օրգանական նյութերի 75 %-ը, այնուհետև հարստացնում են օդով և թողնում հանգիստ:

**Երրորդային մաքրումը կապված է լուծված իոնների և մանացած օրգանական նյութերի հեռացման հետ, որոշ դեպքերում անց են կացնում ակտիվացրած ածխի կամ կալցիումի հիդրօքսիդի վրայով, երբեմն օգլագործում են նաև էլեկտրադիալիզ:**

Բացի կեդտաջրերից, էկոլոգիական աղետ է նաև նավթի արտահոսքը: Յուրաքանչյուր տարի ծովն է լցվում նոտավորապես 12 մլն տնավթ, որը չափազանց անբարենպաստ ազդեցություն է թողնում ծովային կյանքի վրա. ոչնչանում են թռչունները, կորանում են ծովային կենդանիները, օրինակ՝ փոկերը: Բարձրանում է ջրի ջերմաստիճանը, ինչը հատկապես կործանարար է այն կենդանիների համար, որոնք կարող են գոյատել միայն ջերմաստիճանային որոշակի տիրույթում: Նավթը պարունակում է բազմաթիվ բաղադրիչներ, որոնք աղետաբեր ազդեցություն ունեն ջրային բազմաթիվ կենսածների վրա:

**Չորրերորդենսաքանական աղբույրումը:** Երկրագնդի բնակչության 70 %-ում օգտվում է անորակ ջրից, որը վարակագերծված չէ: Այդ հիմնախնդիրը հատկապես սուր է զարգացող երկրներում: Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով՝ այդ երկրներում մարդկանց հիվանդությունների շուրջ 80%-ը պայմանավորված է ջրի հակասանիտարական վիճակով և անբավարար որակով: Այդ պատճառով բռնկվում են այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են՝ խոլերան, տիֆոս (որովայնային և բծավոր), տենդը, ցիրոզը և պրոկազմն: Հարյուր միլիոն մարդ տառապում են, այսպես կոչված, տրախոմա հիվանդությամբ, որը կուրության է հանգեցնում:



Վերը թվարկված բռնոր պատճառները հանգեցնում են ջրի աղտոտմանը, հատկապես՝ փակ ջրավազաններում, լճերում ու լճակներում, արհեստական ջրամբարներում և այլուր:

## Առաջադրանք


Գիրմանականները եկել են այն եզրակացությամ, որ սովորական ջուր չկա: Փորձե՛ք գրել փոքրիկ շարադրություն՝ սովորական ջրի անտովոր հավկությունների մասին:

## Հարցեր և վարժություններ

1. Քանի՞ պեսակի կեղացրեր են հայրնի:
2. Որո՞նք են կեղացրերի մաքրման փուլերը:
3. Եկողոքիական ի՞նչ աղեկ է ներկայացնում նավքը: Ի՞նչ քանակով նավք է ամեն գարի լցվում ծով: Ի՞նչ վճառ է հասցնում ծովային կենդանիներին:

Աղբողոք նշութերը, խառնվելով ջրի հետ, առաջացնում են գարբեր համակարգեր՝ սուսպենզիաներ, էմուլսիաներ և խլական լուծույթներ: Ընդունե՛ք այն հավկանիշները, որոնք բնութագրական են այդ համակարգերին: Սլաքներով հասրագե՛ք ծեր լուսպրություն՝ բար օրինակի:

- |                 |                                                                                    |                                                                                                                                                                                                 |
|-----------------|------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Սուսպենզիա      |   | 1. երկու՝ իրար հետ չխառնվող հեղուկ                                                                                                                                                              |
|                 |                                                                                    | 2. համասեռ խառնուրդ                                                                                                                                                                             |
|                 |                                                                                    | 3. հեղուկի և լուծվող պինա նյութի խառնուրդ                                                                                                                                                       |
| Էմուլսիա        |  | 4. խառնուրդի մասնիկները գրեսանելի են անգեն աշքով                                                                                                                                                |
|                 |                                                                                    | 5. մասնիկները գրեսանելի չեն նույնիսկ մանրադիպակով                                                                                                                                               |
|                 |                                                                                    | 6. խառնուրդ կազմող նյութերը հեշտ բաժանվում են                                                                                                                                                   |
| Խլական լուծույթ |                                                                                    | 7. անհամասեռ խառնուրդ                                                                                                                                                                           |
|                 |                                                                                    | 5. Ի՞նչ համակարգ կարացվի, եթե կերակրի աղի և կավճի խառնուրդին ջուր ավելացնենք ու թափահարենք: Սրացված համակարգից ինչպես կարելի է մաքուր ջուր սպանալ:                                              |
|                 |                                                                                    | 6. Հիմքում դնելով «Նմանը նմանի մեջ է լուծվում» ճշգրիտ բնորոշումը (+) և (-) նշանների օգնությամբ նշե՛ք գրված նյութերի լուծվելու ունակությունը շրջանի կենդրունում գրված լուծիչում՝ բար օրինակների. |



7. Բացակրե՛ք,թի ինչպես կարող եք բորած ջուրը ջրմուղի ցրից լրարերել:

8. Բացակրե՛ք՝ հնարավո՞ր է, արդյոք, քիմիապես մաքուր ցրի գոյությունը բնության մեջ:

9. Դասավորե՛ք բնական ջրերը՝ ըստ մաքրության աստիճանի:

1. գեղի, 2. աղբյուրի, 3. ծովի, 4. ջրհորի, 5. անձրևի:

10. Անորակ ջրից, որը վարակագերծված չէ, ի՞նչ հիվանդություններ կարող են բռնկվել:



**Ջրի ֆիլտրման և բորման գործարան**

## Գիտե՞ք արդյոք


1. Հեղագուրողները բացահայտել են ջրի մերժին կառուցվածքագոյացման ավելի նուրբ ու բարդ մեխանիզմներ և փորձում են փաստել, որ ջուրն առաջացնում է բարդ հարամոլեկուլային կառուցվածքներ:

Գործնական գույշալները վկայում են, որ ջրի մոլեկուլներն առաջացնում են կլասպերներ (նկ. 2.3), որոնք, կախված առաջացման պայմաններից, կարող են ունենալ գարբեր պարագաներ կառուցվածքներ և հավաքուրյուններ: Նման կլասպերներից կազմված ջուրն անվանում են կառուցքավորված ջուր, որը բար աշխարհի լավագույն լարուրակորիաներում կարարված հեղագուրուրյունների, կենսաբանորեն ակտիվ է: Այդ ջուրն իր կառուցվածքով նման է ներքջային հեղուկի: Դրա վառ օրինակն է հալված ջուրը: Այն առաջանում է սառույցի հալումից և պահպանում  $0^{\circ}\text{C}$  ջերմաստիճանը, քանի դեռ ամբողջ սառույցը չի հալվել: Զերմաստիճանը բարձրացնելիս կլասպերի ներսում ջրածնային կապերի քանդման հետևանքով՝ կլասպերների չափերը փոքրանում են, և հավաքուրյունները փոփոխում:

2. Այժմ հայրենի է սառույցի  $10$  չեղ և բոլորի մուգ պահպանվում է բառանիստային կառուցվածքը, այսինքն՝ ջրի յուրաքանչյուր մոլեկուլ պահպանում է իր բոլոր չորս ջրածնային կապը:

3. Ջուրը հիշողություն ունի:


1988թ. ֆրանսիացի ինունուո Ժակ Բենվենիսիարը հրապարակեց մի հոդված, որը ցնցեց ամբողջ աշխարհը: Դոկտոր Բենվենիսիարը փորձով ցույց տվեց, որ էլեկտրամագնիալ ալիքները մնում են ջրի հիշողությունում: Այդ վիճելի հայրենագործությունը ջրի հավելությունների ուսումնասիրման մի նոր ալիք բարձրացրեց: Այս փաստը մեզ սպիսում է մրածել արդյոք պա՞րզ և այդ «պարզագույն միացությունը՝  $\text{H}_2\text{O}$ -ն:



Նկ. 2.3 Ջրի կլասպերներ

Առօրյա կյանքից մեզ հայվենի է, որ ջրում բազմաթիվ գագեր, հեղուկներ ու պինդ նյութեր են լուծվում: Գագերից ջրում լուծվում են բրվածինը, ազուրը, ածխածնի (IV) օքսիդը և այլն: Դուք դրանում բազմից համոզվել եք՝ սառը ջրով բաժակը փաք սենյակում բռնկելով: Որոշ ժամանակ անց բաժակի ներսի պարերին զագի պղպջակներ են հայրնվում:

Դրա պարճառն այն է, որ ջրում պարփականը բարձրացնելիս զագերի լուծելիությունը՝ որպես կանոն, ավազում է: Զուրբ սառչելիս կրկին մրնողորդից զագ է «հավաքում», այն, կարծես, «շնչում» է, դարձացնելիս արագ «արդաշնչում», սառեցնելիս՝ դանդաղ «շնչում»: Եթե բաց ամանում ջուրը դարձացնելը մինչև 90-95°C (արիպենք, որ այն արդաշնչի), ապա արագ սառեցնելնը, բայց արդեն փակ անորում (չքողնենք, որ ան շնչի), ապա ջուրը կդառնա ակրիվ: Այդպիսի ջուրն անվանվում է կենսաբանութեան ակրիվ ջուր: Այն անվանվում



#### Նկ. 2.4 Տերեւ զազագրկված ջրում

է նաև զազագրկված ջուր կամ «եռացրած սառը ջուր»: Համոզվելու համար, որ զազագրկված ջուրը կենսաբանորեն ակրիվ է, կալիարենք փորձ բարի կորուս ստուգ տերեւը զցենք զազագրկված ջրի մեջ, կես ժամ հետո կնկարենք, որ տերեւի վրա կառաջանան սև թերթ ջուրը բափանցում է քջի ներսը (ան. 2.4):

Գաղտնիքն այն է, որ երբ սառեցնելիս ջուրը գրկվում է զագ կրանելու հնարավորությունից, անցնում է անհավասարակշիռ վիճակի: Զիավասարակրությունը զուրկ է համար զագացնելու համար, որի արդարացնելը պարունակում է էներգիա: Այդ էներգիան էլ որոշում է զազագրկված ջրի կենսաբանական հարաբեկությունը:



#### Ծարիի ջրվեժ

## 2.4 ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ՀԱՄԱՍՊՈԼՈՐԱԿԱՅԻՆ ՀԻՄՆԱԾԽՆԴԻԲԸ

Համամոլորակայինների թվին են պատկանում այն հիմնախնդիրները, որոնք շոշափում են համայն մարդկության շահերը: Այդ հիմնախնդիրները հանդես են զալիս որպես հասարակության զարգացման գործուներ:

Մարդկությանը հուզող առավել կարևոր խնդիրներից է քաղցրահամ ջրի հիմնահարցը, որով պայմանավորված են քննության պահպանության և կենդանական աշխարհի կենսագործունեության մի շարք համընդհանուր խնդիրներ: Խմելուց բացի, քաղցրահամ ջուրն անհրաժեշտ է՝ օրեցօր աճող մարդկությանը կերակրելու կարիքով թելաղբաժնի հողերի մեծ տարածքների ոռոգման, ինչպես նաև՝ էկոլոգիապես անվնաս վառելանյութ ստացման համար և այլ նպատակներով:

Այսպիսով, անվիճելի է, որ առանց ջրի ծախսի մեծացման, քաղցրակարգությունը չի կարող զարգանալ: Խսկ արդյոք ջուրը կրավականացնե՞մարդկությանը: Դուք արդեն գիտեք երկրագնդում առկա ջրի պաշարների մասին: Գիտեք նաև, որ Համաշխարհային օվկիանոսի ջրերը և լեռների ու բնեուային գոտիների սառուցն առայժմ գրեթե չեն օգտագործվում:

Մարդն իր կենցաղային և տեխնիկական պահանջների համար օգտագործում է ստորգետնյա ջրերը, մքնուղղութային տեղումները, գետերի ու լճերի ջրերը, որոնք ջրի ընդհանուր պաշարի սուկ 0,4%-ն են կազմում:

Մեր մոլորակի բնակիչների համար գլխավոր հիմնախնդիրը ջրի անհավասարաչափ բաշխումն է: Անապատներում ջուր գրեթե չկա, այնինչ Անտարկտիդայում կենտրոնացած է Երկրի քաղցրահամ ջրերի կեսից ավելին: Մերձավոր Արևելքում քաղցրահամ ջրի մենատեր է դարձել Թուրքիան, որի տարածքից են սկիզբ առնում Տիգրիս և Եփրատ ջրառատ գետերը:

Ստեղծված իրավիճակն էլ հենց հրամայական է դարձել XXI դարը «Ջրի դար» հայտարարելը: Ոչ հեռու ապագայում յուրաքանչյուր երկրի բարեկեցություն էապես կախված կլիմի այն իրուրիթյունից, թե կկարողանա ժամանակին կարգավորել իր տարածքների ջրային հոսքերն ու ավելի շատ ջուր ամբարել:

Չուրին օգտագործելիս մենք աղտոտում ենք այդ կենարար հեղուկը տարրեր նյութերով, ինչն անհնար է դարձնում երկրորդ անգամ օգտագործելը՝ առանց մանրակրկիտ մաքրման: Եթե մարդկության պահանջները գերազանցեն բնական քաղցրահամ ջրի պաշարները, ապա անխուսափելի է արհեստական ճանապարհով այդ պաշարների

համալրումը, քանի որ կենդանի բնությունն այլ կերպ չի կարողանա գոյատևել:

Մինչեւ մոլորակի բնակչության 40 %-ն ընդգրկող 80-90 երկիր արդեն սակավաջուր են դարձել ու տառապում են խմելու ջրի պակասից: Ըստ որում՝ բազմաթիվ երկրներ որպես խմելու ջուր են օգտագործում իրենց տարածքներով անցնող գետերի ջրերը:

Ներկայում աշխարհում ջրասակավությունից տառապում է ավելի քան 1 միլիարդ մարդ, իսկ 2,5 միլիարդն ապրում է առանց



դրակյալ խմելու ջրի: Ըստ գիտնականների, եթե արդյունավետ միջոցներ չձեռնարկվեն, ապա III հազարամյակում երկրագնդի միլիարդավոր բնակչներ աղբյուրի մաքուր ջրի համն այդպես էլ չեն ճանաչի:

Հայաստանի Հանրապետությունում խմելու ջուրը հիմնականում սարերից հոսող աղբյուրների ջուրն է, որն իր որակով աշխարհի լավագույն ջրերից մեկն է համարվում: Ոչ այնքան ջրառատ և երաշտոտ մեր հանրապետությունում

ջրային պաշարների պահպանման, պահեստավորման և արդյունավետ օգտագործման հիմնահարցը մշտապես ուսումնակարգական նշանակություն ունեցող առաջնային գերիշնդիր է եղել:

Այս առումով մեր մտահոգության կենտրոնում է մնում հանրապետության քաղցրահամ ջրի խոշորագույն ջրամբարի՝ Սևանի լճի պահպանման խնդիրը, քանի որ այստեղ ջրի ծավալը, 1935 թվականի համեմատ, արդեն երկու անգամ պակասել է: Մինչեւ այդ լիճն ընդգրկում է Հարավային Կովկասի լճերի ընդհանուր մակերեսի 50 տոկոսից ավելին՝ համապատասխանաբար պայմանավորելով տարածաշրջանի կիման: Ահա թե ինչո՞ւ Սևանա լճի պահպանման հիմնահարցը մեր ազգային անվտանգության առաջնահերթ խնդիրներից մեկն է մնում:

Ջրի խելամիտ օգտագործումը մեծապես կապված է յուրաքանչյուր անհատի գիտակցությունից, մարդկանց էկոլոգիական մշակույթից:

## ❖ **Հարցեր և վարժություններ**

1. Ո՞ր հիմնախնդիրն են դասվում համամոլորակայինների շարքում և ինչո՞ւ:
2. Ինչո՞ւ է պայմանավորված XXI դարը «Ջրի դար» հայրարելլը:

3. Մերժավոր Արևիլքում  $n^{\circ}$  թ պետությունն է քաղցրահամ ջրի մեջադրել դարձել և ինչո՞ւ:
4. Բնությունն սրելդում է հսկայական չափով քաղցրահամ ջուր՝ նոյնիսկ ամենակեղքուր ջրից:  $\Omega^{\circ}$  երկու պարզագոյն գործընթացի օգնությամբ և ինչպես է կարարվում:
5. Ե՞րբ և ինչո՞ւ անհրաժեշտություն կառաջանա արհեստական ճանապարհով մեծացնել՝ մեր մոլորակի խմելու ջրի պաշարները:
6. Արդյոք խնայողաբարա՞ր է օգրագործվում խմելու ջուրը ծեր դանիք, դպրոցում, բնակավայրում: Այդ թեմայով փորձեք պարրասպել փոքրիկ զեկուց:
7. Առկա լրացրական երրորդ երկրագնդի վրա անձրևի և ջյան լրացրով լրարեկան մուրավորապես 120 000 կմ<sup>3</sup> քաղցրահամ ջուր է քաղցում: Միջին հաշվով՝ որքա՞ն ջուր (կմ<sup>3</sup>) է քափիլում երկրագնդի վրա մեկ ժամում:

Պար.՝ 12,79 կմ<sup>3</sup>  $H_2O$ :



## 2.5 ԶՐԻ ՄԱՔՐՈՒՄԸ

### Ծովի ջրից խմելու ջրի սպացումը

Բնական ջուրը միշտ պարունակում է մի շաքր նյութեր՝ լուծված և կախված վիճակում, և ենթելով օգտագործման նպատակից՝ անհրաժեշտ է լինում այդ ջուրն այս կամ այն չափով մաքրել խառնուրդներից: Հատկապես մեծ է խմելու ջրի մաքրման նշանակությունը:

Ջրմուղի ցանց մուտք գործող ջուրը պետք է լինի բափանցիկ, վնասակար նյութերից և հիվանդաբեր մանրէներից մաքրված: Ջրհորների և աղբյուրների ջրում կախված մասնիկներ ու ախտածին մանրէներ սովորաբար չկան, և այդ ջուրն օգտակար լուծելի աղեր է պարունակում: Եթե՝ որպես խմելու ջուր, գետերի ու լճերի ջուրն է օգտագործվում, ապա այն պետք է մաքրվի վնասակար տարրեր խառնուրդներից, այդ թվում նաև՝ հիվանդաբեր մանրէներից:

Ջրի մաքրումն ու վարակագերծումը կատարվում է հասուկ կայաններում: Այստեղ ջուրը մուտք է գործում գետերից ու ջրամբարներից: Գետի ջուրը

լույսի տակ հաճախ թվում է անհամասեն, պղտոր: ‘Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ, աղերից բացի, ջրում կախված վիճակում պարունակվում են մանրազույն ավազահատիկներ և տիղմի մասնիկներ:

Ջրազույն կայաններում ջուրը նախ անցնում է լողացող խոշոր առարկաները պատճեշող ցանցի միջով, այնուհետև՝ ենթարկվում պարզեցման (վճիտացում), զտվում ավազաշերտով և մանրէների ոչնչացման նպատակով մշակվում քլորով կամ օգոնով: Ներկայումս առաջատար երկրներում քլորացումը փոխարինվել է մանրէասպան լամազերով մշակման:

### Ջրի կենսաբանական մաքրումը

Խոշոր աղտոտման վայրերից արտահոսող ջրերը մաքրվում են ֆիլտրման և պարզեցման միջոցով: Բնական ծագմամբ օրգանական միացություններից մաքրելուն նպաստում են միկրոօրգանիզմները, որոնց համար այդ միացությունները պարզապես սնունդ են: Ջրի միջով, որին նշանակած միկրոօրգանիզմներով հարուստ կենսաբանորեն



### Խմելու ջրի հիմնախնդիրը

ակտիվ տիղմ է ավելացված, ինտենսիվորեն թթվածին են մղում: Ապա ջուրը մտնում է պարզաբաներ, որտեղ շերեփուկներ են բաց թողնվում: Անկենդան մանրեներն իշնում են ջրի հատակն ու այդտեղ վերամշակվում ձկնիկների ու ջրիմուռների կողմից: Շատ ավելի դժվար է ջուրը սինթետիկ օրգանական միացուրյուններից մաքրելը: Այդ իսկ պատճառով՝ մեծարիկ գործարաններ անցնում են ջրաշրջադարձի՝ ջրի անարտահոսք օգտագործման:

Բացարձակ մաքուր ջուր բնուրյան մեջ չի հանդիպում: Մաքուր ջուր ստանում են սովորական թորումով կամ թորման հասուլ սարքով՝ թորիչով:

Ջրի մաքրման այս եղանակը հիմնված է բնականին նմանվող այն գործընթացի վրա, որի դեպքում հեղուկ ջուրն անցնում է գազային վիճակի, ապա խտանում՝ կրկին անցնելով հեղուկ վիճակի:

Փորձեք ջուրը թորել ինքնուրույն: Այդ նպատակով կորատակ կոլը 3/4-ով լցրեք ջրմուղի ջրով ու տաքացրեք: Եթե ջերմաչափը ցույց տա ջրի եռման ջերմաստիճանը, կնշանակի, որ թորումն սկսվել է: Որոշ ժամանակ անց լնդունիչում կհավաքվի մաքուր ջուր: Այս եղանակով ստացված ջուրն անվանում են թորած ջուր, որը լուծված աղեր քիչ է պարունակում և օգտագործվում է.

- ա) *քիմիական լարորակորիաներում լուծույթներ պարագայիլին*
- բ) *ալյունիքենաների մարդկոցների տեխնիկական սպասարկման համար և այլ նպակակներով:*

Դեղատներում ու դեղ պատրաստող գործարաններում դեղեր պատրաստելիս ու նոսրացնելիս օգտագործում են կրկնակի թորած ջուր, որը համարվում է քիմիապես մաքուր:

Թորած ջուրը խորհուրդ չի տրվում խմել, քանի որ մեծ քանակով այդպիսի ջուրը վնասում է մարդու օրգանիզմը, որը սովոր է աղեր պարունակող ջրին: Էլեկտրոլիտներն անհրաժեշտ են օրգանիզմում օսմոտիկ ճնշումը հաստատուն պահելու և այլ գործնթացների համար:


Ծովի ջրից կարելի է ստանալ քաղցրահամ ջուր՝ վակուումային թորման սարքերով, որոնցում ջրի թորումն իրականացվում է ցածր ճնշման տակ: Սակայն այս եղանակը խիստ էներգատար է, ուստի, առայժմ կիրառվում է հիմնականում այն երկրներում, որտեղ էներգիան համեմատաբար էժան է, իսկ անձրևները՝ հազվադեպ, օրինակ՝ Քուվեյթում և Սաուդյան Արաբիայում:

Ներկայումս ամբողջ աշխարհում գործում է ջուրը քաղցրահամ դարձնող ավելի քան 2000 գործարան: Ծովի ջուրն աղազրկելու նպատակով կիրառում են ոչ միայն թորման, այլև սառեցման, իոնափոխանակային և այլ եղանակներ:

Այսպես՝ ծովի ջուրը կարելի է աղազրկել՝ իննափոխանակային խեժի վրայով անցկացնելով ըստ հետևյալ սխեմայի:




կատիոնիս (կատիոն փոխանակող)



անիոնիս (անիոն փոխանակող)



Ծովի ջրից քաղցրահամ ջուր ստանալու հեռանկարային եղանակ է դիալիզի և էլեկտրադիալիզի եղանակը: Բարձրորակ կիսաքաղցրան թաղանթների հայտնվելը ստիպեց վերանայել քաղցրահամ ջրի ստացման տեխնոլոգիան, որը հակառակ է օսմոսին (Ակ. 2.5):



**Ակ. 2.5 Քաղցրահամ ջրի ստացման դիալիզի եղանակ**

### ❖ Հարցեր և վարժություններ

1. Լեռնային գեղակնների ջուրը քաղցրահամ է, բայց լուծված աղեր է պարունակում: Ի՞նչ եղանակ կառաջարկեք այդ ջրից մաքուր ջուր ստանալու համար:

2. Անձրևից հետո գերի ջուրը պղպորվում է: Պալդառը ջրում կախված վիճակում առկա կավի մասնիկներն են: Ի՞նչ եղանակ կառաջարկեք այդ ջրից մաքուր ջուր ստանալու համար:

3. Երևանի ջրմուղի ջուրը լուծված վիճակում  $0,01775 \text{ g/l}$  քլորիդ ( $Cl^-$ ) իոններ է պարունակում: Որքա՞ն նաղրիումի քլորիդի (մոլ/l) է դա համապատասխանում:

$$\text{Պար.} \cdot 0,0005 \text{ мոլ/l NaCl:}$$

# ԳԼՈՒԽ III

## ՄԹՆՈԼՈՐՏԻ ՔԻՄԻԱՆ


### 3.1 ՕԴ, ՈՐԸ ՄԵՆՔ ՇՆՋՈՒՄ ԵՆք: ՄԹՆՈԼՈՐՏԻ ԲԱԴԱՊՐՈՒԹՅՈՒՆԸ

Մենք ապրում ենք ոչ միայն Երկրի վրա, այլ նաև մթնոլորտում: Օդը շրջապատում է մեզ այնպես, ինչպես ջուրը՝ ծովերի և օվկիանոսների բնակիչներիմ: Ինչպես Երկրի կեղևն ու ջրամբարները, այնպես էլ մթնոլորտը քիմիական պաշարների աղբյուր և միաժամանակ թափոններն արտանետելու վայր է: Օդը շնչում ենք և ինչպես նաև՝ օգտագործում վասնելիքի այրման և տարրեր տեխնոլոգիական գործընթացներ իրականացնելու համար: Բույսերը, կենդանիները և մարդիկ մթնոլորտ են բաց բողնում տարրեր գազեր, գոլորշիներ, փոշի: Հնարավոր է, որ այդ նյութերը ոչ մի ազդեցություն չեն գործում շրջակա միջավայրի վրա, բայց և չի բացառվում, որ աղտոտում և վնասում են շրջապատույտի բնականու ընթացքը:

Թվարկված և նման այլ հարցերի ընդունելի պատասխանները կախված են մթնոլորտի քիմիայի իմացությունից: Մեզ անհրաժեշտ է իմանալ մթնոլորտի կառուցվածքն ու բաղադրությունը, գազերի ընդհանուր հատկությունները, կլիմայի վրա դրանց ազդեցությունը և բնական այն ցիկլերը, որոնք վերականգնում են մթնոլորտը:

Խորք շնչեք և դանդաղ արտաշնչեք: Օդը, որ հեշտությամբ մտնում է ձեր քոքերը և դրւու գալիս այնտեղից, մեր ուսումնասիրության առարկան է:

Մենք ապրում ենք մթնոլորտ անվանվող հսկայական օդային օվկիանոսի հատակին: Մթնոլորտը Երկիր մոլորակի օդային թաղանքն է՝



Նկ. 3.1 Մթնոլորտի բաղադրության  
փոփոխությունները ըստ բարձրության

յուրօրինակ մուշտակը (նկ. 3.1): Օդը կանխում է Երկրի մակերևույթի գերտաքացումն Արեգակից և միաժամանակ պահպանում վերջինիս ջերմությունը տարածության մեջ ցրվելուց: Մթնոլորտը մեր մոլորակի հուսալի պաշտպանն է Երկնաքարերից՝ «ընկանող աստղերից», որոնք օդում շիկանում են ու այրվում: Մթնոլորտը պաշտպանում է Երկիր մոլորակի բուսական ու կենդանական աշխարհը տիեզերական ճառագայթների կործանարար ազդեցությունից:

Առանց օդի՝ գրեթե բոլոր կենդանի օրգանիզմները չեն կարող գոյություն ունենալ: Մարդը կամքի ուժով կարող է շունչը պահել ընդամենը մի քանի վայրկյան: Չուր չե, որ այս կամ այն՝ հույժ կարևոր քանն ակնարկելիս հիշում ենք ասացվածքը. «Օդի պես անհրաժեշտ է»: Տրամաբանական է, որ օդային ավազանի պահպանությունը չափազանց կարևոր է:

Հայտնի է, որ օդն ունի զարմանալի հաստատուն բաղադրություն, որը պահպանվում է բնական փոխանակության ճանապարհով: Ստորև գետեղված աղյուսակում ներկայացված է չոր օդի քաղադրությունը, բաղադրամասերի միջին քանակությունները՝ ծավալային տոկոսներով (աղյուսակ 3.1):

### **Աղյուսակ 3.1 Չոր օդի բաղադրությունը**

Բաղադրիչներ	Սիցին քանակություն (ծավալային %)	Բաղադրիչներ	Սիցին քանակություն (ծավալային %)
N <sub>2</sub>	78,09	CO <sub>2</sub>	0,03
O <sub>2</sub>	20,95	Ne	0,0018
Ar	0,93	He	0,0005

1774 թվականին ֆրանսիացի անվանի գիտնական Անտուան Լավուազիեն փորձով ուսումնափրեկ է օդի հիմնական բաղադրիչ մասերն ու այդ գազերին անվանումներ տվել: 8-րդ դասարանից դուք արդեն ծանոք եք այդ փորձերին:

Բացի նշված գազերից, օդը պարունակում է նաև ոչ հաստատուն բաղադրամասեր՝ ջրային գոլորշիներ և գազային այլ խառնուրդներ: Նշենք, որ օդում յուրաքանչյուր բաղադրամաս պահպանում է իր յուրահատկությունները:

Երկիր մոլորակի մթնոլորտում թթվածինը մոտ 21% է (ըստ ծավալի): Սովորողների ծանոթությունը թթվածին սկսվում է այն փաստից, երբ իմանում են, որ այն կենասական ամենաանհրաժեշտ տարրն է: Այն մասնակցում է կենդանի օրգանիզմում ընթացող օքսիդացման ռեակցիաներին՝ նյութափոխանակությանը: Թթվածինը մարդու և կենդանիների օրգանիզմ է ներքափականցում շնչառությամբ: Արյունատար անորներ թափանցելով՝ թթվածինը քորերում կապվում է հենոգլոբինի հետ, և զարկերակային արյան հետ տեղափոխվում է մկանների, ուղեղի և բոլոր ներքին օրգանների թջիջներ, որտեղ էլ հիմնականում ընթանում են օքսիդավերականգնման ռեակցիաները:

Օքսիդացման վերջնական արգասիքը՝  $\text{CO}_2$ -ը, երակային արյունով տեղափոխվում է քորեր ու արտաշնչվում (նկ. 3.2):



**Նկ. 3.2 Շնչած և արտաշնչած օդի բաղադրությունը**

Ստացվում է, որ օդի թթվածինը ծախսվում է, և փոխարենը օդ է անցնում համարժեք քանակությամբ  $\text{CO}_2$ : Արդյոք օդում չի՝ վերջանա թթվածինը: Չի՝ վերջանա:

Չի՝ որ բնության մեջ թթվածինը ոչ միայն ծախսվում է, այլև՝ առաջանում, և դրա պաշարներն անընդհատ լրացվում են: Քլորոֆիլ պարունակող կանաչ բույսերն ածխաքրու գազ են կլանում և արևի լույսի ազդեցությամբ՝ այդ գազը համարժեք քանակությամբ թթվածնի փոխարկում: Նշված երևույթն անվանվում է լուսափնտեց, իսկ ռեակցիայի ընդհանուր հավասարումը ճեղ արդեն ծանոթ է:

Ասվածից բխում է, թե որքան կարևոր է անտառների, ծառերի, կանաչ գոտիների պահպանումն ու ծառահատումների դեմ պայքարը:

Մթնոլորտի թթվածինը ծախսվում է նաև այրման ռեակցիաների ընթացքում: Մեծարիկ նյութեր լավ այրվում են ոչ միայն մաքուր թթվածնում, այլև օդում:


Օդը գագերի համասեռ, համ ու հոտ չունեցող խառնուրդ է: Գույնը շունի, սակայն երբ նայում եք երկինք, բաց կապույտ գույն եք տեսնում: Դուք արդեն գիտեք, որ դա պայմանավորված է արևի լույսի ցրմամբ:



## Լաբորատոր փորձ


**Մթնոլորդի քիմիական բաղադրությունը:** Օդը կազմված է հիմնականում ազուրից և թթվածնից, պարունակում է նաև քիչ քանակով  $CO_2$  և այլ գազեր: Օդի յուրաքանչյուրը բաղադրիչ օժրված է հասրուկ քիմիական և ֆիզիկական հավելություններով: Այս լաբորատոր աշխատանքում դուք պետք է սրանաք երկու բաղադրիչ՝ թթվածին ու  $CO_2$  և ուսունաամիեք դրանց որոշ հավելությունները:

**1. Թթվածնի սպացումը:** Փորձանորի մեջ լցրեք երկու մլ ջրածնի պերօրսիդ, ավելացրեք  $MnO_2$  և լաքացրեք: Անջարվում է գազ՝ բայց հետևյալ ռեակցիայի:



Խաց լակմուսի բուղը փորձանորի բերանին մուրեցնելիս գույնի փոփոխություն չի նկարվում: Փորձանորի բերանին այրվող մարիս մուրեցնելիս այն բռնկվում է, ինչն էլ հասրավում է թթվածնի գազի անջարվումը:

**2.  $CO_2$  գազի սպացումը:** Փորձանորի մեջ դրեք  $NaHCO_3$ ,  $KHCO_3$ , և կիրրունաքրու պարունակող հար ու ջուր ավելացրեք: Ունակցիան սկսվում է առանց լաքացման: Տեղի է ունենում հետևյալ փոխագուցությունը (կարելի է վերցնել խմելու սողան և ավելացնել քացախաքրու):



Այրվող մարիս մուրեցնելիս հանգչում է: Անջարվող գազը չի նպաստու այրմանը: Խաց լակմուսի բուղը փորձանորի բերանին մուրեցնելիս կարմրում է: Դա նշանակում է, որ անջարվող գազը թթվային հավելություն ունի: Փորձանորի բերանը փակեք գազապար խողովակ ունեցող խցանով և խողովակի ծայրը ընկղմեք կրաքրի լուծույթի մեջ: Լուծույթը պղպորվում է՝ ի հաշիվ անլուծելի կալցիումի կարբոնատի առաջացման:

### ❖ Հարցեք և վարժություններ

1. Սուածին անգամ ո՞վ և ի՞նչ փորձերով է հասրավել օդի բաղադրությունը:
2. Խնամքեք օդի հասրավուն բաղադրամասերը:
3. Հարց թթվածնի հետ փոխագուցության՝ մերադները բաժանվում են երեք խմբի.

- մելքաղներ, որոնք օքսիդանում են սենյակային ջերմասպիթանում
- մելքաղներ, որոնք օքսիդանում են տաքացման պայմաններում
- մելքաղներ, որոնք բըվածնի հետ ոչ մի պայմանում չեն փոխազդում:

ա)  $Na, Ca, Pt, Cu, Fe, Ca, Ni, K, Ba, Pb, Au, Ti$  մելքաղները բաժանենք երեք խմբի:

բ) Գրիք հնարավոր բոլոր ռեակցիաների հավասարումները:

4. Օդում բըվածնի զանգվածային բաժինը 23% է: Քանի՞ զրամ օդից կարացվի 460 գ բըվածին:

$$\zeta_{աշվեք} = \frac{m(O_2)}{m(\text{օդ})} \cdot 100 \quad \text{բանաձևով:}$$

5. Օդի որքա՞ն ծավալում կպարունակվի 54 լ բըվածին:

6. Օդի հասպարում բաղադրամաս չէ.

1)  $N_2$                     2)  $O_2$

3)  $H_2O$                     4)  $Ar$

7. Քանի՞ զրամ նայվածք կառաջանա, եթե 110 լ արտաշիչած օդ բաց բողնենք ավելցուկով կրաշրի մեջ:



**Կայծակ**

## 3.2 ՄԹՆՈԼՈՐՏԸ ԵՎ ԿԼԻՍԱՆ

Պատկերացրեք այնպիսի տեղ, որը ցերեկը արևը քարելն այնպան է տաքացնում, որ կարելի է վրան ձվածեղ պատրաստել, իսկ զիշերը ջերմաստիճանն այնքան է իջնում, որ ածխածնի (IV) օրսիդը փոխարկվում է չոր սառույցի: Այդ տեղը Լուսինն է: Լուսինի այդ դաժանն պայմանները պայմանավորված են մթնոլորտի բացակայությամբ: Լուսինը մթնոլորտից գործ է: Հիմնականում այդ պատճառով էլ ցերեկը լուսնի մակերեսը տաքացնում է մինչև  $+120^{\circ}\text{C}$ , իսկ զիշերը սառչում է մինչև  $-160^{\circ}\text{C}$ :


Արեգակնային ճառագայթումը Երկրի մթնոլորտի հետ միասին ապահովում են մեր մոլորակի կենսականորեն անհրաժեշտ կլիման: Դուք գիտեք, որ անապատում եղանակը սովորաբար չորային է, հասարակածային շրջանում՝ խոնավ ու անձրևոտ, քենուամերձ շրջաններում՝ միշտ ցուրտ: Երևանում գարնանը եղանակը սովորաբար մեղմ է ու խոնավ, ամռանը՝ շոգ ու չոր: Աշնանն արևոտ, չափավոր տաք և համեմատաբար խոնավ եղանակ է, իսկ ձմռանը ցուրտ է ու սակավաճյուն: Այդպես է լինում գրեթե ամեն տարի:

### Կլիման տվյալ վայրին բնորոշ միանման եղանակների բազմամյա կրկնությունն է:

Օրպեսզի հասկանանք, թե ինչպես է ձևավորվում կլիման, կարևոր է իմանալ, թե ինչպես է արեգակնային էներգիան փոխադրում մթնոլորտի հետ: Արևը տաքացնում է Երկրի մակերևույթը, որն իր հերթին տաքացնում է օդը: Այն տաքանալիս ընդարձակվում է, խոտարքուն փոքրանում է և բարձրանում վերև, իսկ ավելի սառը և խիտ օդն իջնում է: Այդ շարժումն ստեղծում է օդի անընդհատ հոսք, որը կառավարում է կլիման: Կլիման մեծ ազդեցություն ունի տվյալ վայրի ռելիեֆի, գետերի, լճերի, բուսական և կենդանական աշխարհների վրա: Կլիմայից են կախված տվյալ վայրում գետերի և լճերի շատ կամ քիչ լինելը, բույսերի և կենդանիների բաշխվածությունը:

Միջին մեղմ ջերմաստիճանը Երկրի վրա  $15^{\circ}\text{C}$  է, որը պայմանավորված է արևից եկող ֆոտոնների հոսքով: Այնուամենայնիվ, ջերմության այն մասը, որը մնում է Երկրի մակերեսին, և որը մենք զգում ենք, և այն մասը, որը գնում է տիեզերք, որոշվում է Երկրի հատկություններով: Երկրի հասնող արեգակնային էներգիան բաշխվում է հետևյալ ձևով (նկ.3.3):

- անդրադարձվում է գիեղերական պարագույթում՝ **30%**,
- կլանվում և փոխարկվում է ջերմային էներգիայի՝ **47%**,
- իրականացվում է հիդրոլոգիական ցիկլ՝ **22.78%**,
- քամիներ՝ **0.2%**,
- ֆուրուխարեկ՝ **0,02%**:



### Նկ. 3.3 Երկիր հասնող արեգակնային էներգիայի բաշխումը

Արեգակնային ճառագայթման մի մասը Երկրի մակերես չի հասնում, այն անդրադարձվում է ամպերի և մթնոլորտում առկա պինդ մասնիկների կողմից: Էներգիայի մի մասն էլ անդրադարձվում է ձյան, ավազի և բետոնի կողմից: Արեգակնային ճառագայթների նոտավորապես մեկ քառորդը ծախսվում է ջրի շրջապտույտի վրա: Արեգակնային էներգիայի մոտ կեար կլանվում է՝ տարացնելով մթնոլորտը, օվկիանոսներն ու մայրցանարները: Երկրի մակերևույթը վերաճառագայթում է կլանված էներգիայի մեծ մասը, բայց ավելի փոքր հաճախությամբ՝ սպեկտրի ենթակարմիր (ինֆրակարմիր՝ ԻԿ) մարզում: Վերադարձվող ճառագայթումը բացառիկ կարևոր դեր է խաղում Երկրի վրա Էներգիական հաշվեկշռի պահպանան գործընթացում: Այդ ճառագայթման ֆոտոններն օժտված են փոքր էներգիայով, հետությամբ կլանվում են մթնոլորտի կողմից և տարացնում այն: Մթնոլորտն էներգիայի բակարդն է:

Ածխածնի (IV) օքսիդը՝  $\text{CO}_2$ , և ջուրը՝  $\text{H}_2\text{O}$ , լավ կլանում են կարմիր ճառագայթները, նույնը կարելի է ասել մեթանի՝  $\text{CH}_4$ , ու դրա հալոգենածանցյալների մասին: Ամպերը նույնապես կլանում են ենթակարմիր ճառագայթումը: Նշված նյութերի մոլեկուլների կողմից կլանված էներգիան ևս մեկ անգամ վերաճառագայթվում է: Էներգիան «ճանապարհորդում» է Երկրի և մթնոլորտի մասնիկների միջև, մինչև որ կրկին ընկնում է տիեզերքը:

Էներգիայի կլանումը և ճառագայթումը վերը նշված նյութերի կողմից առաջացնում է, այսպես կոչված, ջերմոցային էֆեկտ, քանի որ այն հիշեցնում է ջերմոցներում արեգակնային էներգիայի պահպանան եղանակը: Վեներա (Արուսյակ) մոլորակը ջերմոցային էֆեկտի գործուն օրինակ է: Այդ մոլորակի մթնոլորտը կազմված է  $\text{CO}_2$ -ից, որը կանխում է ենթակարմիր ճառագայթման էներգիայի կորուստը, որի հետևանքով պահպանվում է մոլորակի ջերմային հաշվեկշռը Երկրային ջերմաստիճանից բավականին բարձր:

Երկրի նակերևույթի վրա գտնվող յուրաքանչյուր նյութ ունի բնութագրական անդրադարձման հատկություն և բնութագրական ջերմունակություն: Դրանք հատկություններ են, որոնք հաճատել որոշում են նյութի տաքանակը արագությունը: Որքան մեծ է ջերմունակությունը, այնքան մեծ է ջերմության պաշար պահելու մարմնի ընդունակությունը: Հիշենք, որ ջրի յուրահատկություններից մեկն էլ մեծ տեսակարար ջերմունակությունն է և կարևոր դեր ունի Երկրի կլիմայի ձևավորման գործընթացում:


### ❖ Հարցեր և վարժություններ

1. Ինչո՞ւ ուղարամանուշակագույն ճառագայթները վրան գավոր են մարդու համար, իսկ ենթակարմիր ճառագայթները՝ ոչ:
2. Ինչո՞ւ է Վեհականի ջերմաստիճանը Երկրի համեմատ առավել բարձր:
3. Ի՞նչ կպարահեր, եթե մարդու գործունեության արդյունքում մթնոլորտում մեծանար մեթանի և ածխածնի (IV) օքսիդի կոնցենտրացիան (մոլ/վ):
4. Եթե ենթադրենք, որ Երկրի մթնոլորտն ավելի բարակ է, քան իրականում կա.
  - ա) ինչպես կփոխվի ցերեկային ջերմաստիճանը և ինչո՞ւ:
  - բ) ինչպես կփոխվի զիշերային ջերմաստիճանը և ինչո՞ւ:
5. Ինչո՞ւ, եթե երկինքը պարզ է, ավելի արագ է ցրվում, քան ամպամած լինելու դեպքում:
6. Նոյն լայնության վրա գրնվող երկու բնակավայրից որո՞ւմ ամռանն ավելի շոգ կլինի և ինչո՞ւ:
  - ա) այն բնակավայրում, որն ունի շատ ասֆալտապատ ձևապարհներ և բեկոնից շենքեր:
  - բ) այն բնակավայրում, որը գրնվում է ջրամբարի ափին:

### 3.3 ՕՉՈՆ: ՕՉՈՆԱՅԻՆ ՇԵՐՏ, ՕՉՈՆԱՅԻՆ ՃԵՂՔԵՐԻ ԱՌԱՋԱՅՄԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

9-րդ դասարանից դուք արդեն ծանոթ եք օգնի ստացմանն ու հատկություններին՝ որպես բրվածնի ալոտրոպային ձևափոխություն: Պարզվում է, որ մեծ կոնցենտրացիայով օգնը բունավոր է, ուստի, այդ գազի հետ պետք է զգույշ աշխատել: Օգնի բույլատրելի շեմային կոնցենտրացիան հավասար է  $0,0004\text{--}0,015 \text{ մգ}/\text{մ}^3$ , իսկ  $0,4\text{--}2,0 \text{ մգ}/\text{մ}^3$  կոնցենտրացիայի դեպքում ի հայտ են գալիս բունավորման նշաններ՝ բերանում չորություն, ցրվածություն, շնչարգելություն: Եթե օգնի կոնցենտրացիան համում է  $10 \text{ մգ}/\text{մ}^3$ , ապա մի քանի ժամից քոքերի այտուց է զարգանում:

Օգնի առկայությունն օդում կարելի է որոշել հետևյալ ռեակցիայով.






Փորձեք ինքներդ կալիումի յոդիդով թրջված թղթի վրա կաթեցրեք օվալյի լուծույք և կայծակից հետո պահեք օդում: Բուղթը կապտում է:

Սովորաբար անձրևից հետո հաճելի հոտ է զգացվում. դա օգնի հոտն է:


Այսուհանդերձ, օգնի շնչին կոնցենտրացիան օդում օգտակար է օրգանիզմի կենսագործունեության համար: Վերջին ժամանակներում՝ որպես ուժեղ մանրէասպան նյութ, օգննը կիրառվում է տարբեր վարակիչ հիվանդություններ բուժելու համար: Օգնով վարակագերծում են վիրահատական սենյակներն ու խմելու ջուրը: Օգնով մշակված ջուրը, ի տարբերություն քլորացված ջրի, տիած համ կամ հոտ չունի և ավելի անվիճակ է: Օգնով են վարակագերծում հատկապես ստորգետնյա ջրերը:

Երկրի մակերևույթից 25 կմ բարձրության վրա արեգակնային ճառագայթումից առաջացել է մշտական օգննային շերտ, որը կանում է այդ ճառագայթման գերմանուշակագույն բաղադրամասը: Հակառակ դեպքում վերջինս կոչնչացներ ողջ կենդանական աշխարհը երկրագնդի վրա: Ի դեպ, գերմանուշակագույն ճառագայթների նույնիսկ այն փոքր մասը, որ Երկիր է հասնում, անզգույշ արևահարության դեպքում կարող է այրվածքներ առաջացնել: Այսպիսով, կարելի է ամրագրել, որ օգննային շերտը Երկրի կենդանի օրգանիզմների վահանն է: Տեղի ունեցող գործընթացները կարելի է ներկայացնել հետևյալ հավասարումներով.





Ընդհանուր ձևով՝  $O_3 + h\nu \rightleftharpoons 3O$



Օգնի մոլեկուլներն անկայուն են և կրկին փոխարկվում են թթվածնի՝ ջերմային էներգիա անջատելով, ինչի շնորհիվ՝ Արեգակի գերմանուշակագույն ճառագայթման մեծ մասը փոխարկվում է ջերմային էներգիայի:

Ընդհուպ մինչև XIX դարի կեսերը մթնոլորտում օգնի ընդհանուր քանակությունն անհան էր փոխվել: Ժամանակակից գիտնականները, ովքեր հետևում են օգնային շերտի փոփոխություններին, խիստ անհանգստացած են, քանի որ այդ շերտի հաստությունն զգալի նվազել է, իսկ տեղ-տեղ՝ նույնիսկ վերացել. առաջացել են օգնային ճեղքեր: Վերնոլորտում (ստրատոսֆերայում) օգնի ընդհանուր պարունակության նվազմանն առաջին անգամ ուշադրություն են դարձրել XX դարի 80-ական թվականներին: Պարզվել է, որ 1986-1991թթ. գարնանն օգնի ընդհանուր քանակությունն Անտարկտիդայի վրա 30-40%-ով պակաս էր՝ 1967-1971թթ. նույն ժամանակահատվածի համեմատ, իսկ արդեն 1993-ին՝ ավելի քան 60%-ով: Օգնի ռեկորդային բնականոնից մոտ 4 անգամ պակաս քանակ, գրանցվել է 1987թ. և 1994թ.:

Հետաքրքիր է, որ Երկրի մյուս քննուային մասում՝ Արկտիկայում, «օգնային խոռոչներ» չեն առաջացել:

Քացառված չեն, իհարկե, որ օգնային շերտի փոփոխության տատանումներ մեր մոլորակի գոյության ընթացքում մշտապես տեղի են ունեցել: Սակայն հնարավոր է նաև, որ օգնային ճեղքերի անընդհատ առաջացումը մարդու գործունեության հետ է կապված: Այսպես թե այնպես՝ դեռ հստակ պարզ չեն, թե ինչն է մթնոլորտում օգնի քանակության նվազման հիմնական պատճառը:

Միջազգային համրության հիմնական պայքարը օգնող քայլայող նյութերի կրառաման կանխարգելումն է: 1996թ. Կալիֆոռնիայի համալսարանի գիտնականներ Շ. Ո-ուլանդը և Մ. Մոլինան, ինչպես նաև՝ Փ. Կրուտցեն՝ Մաքս Պլանկի անվան քիմիայի ինստիտուտից, արժանացել են Նորելյան մրցանակի՝ ստրատոսֆերային օգնի

կոնցենտրացիայի նվազման պատճառները բացահայտելու համար: Նրանք կարողացել են ապացուցել, որ օգնային շերտի հիմնական քայլայողները քլորի ու բրոմի ատոմներն են, որոնք անջատվում են մարդու սինթեզած հալոգենացված ածխաջրածինների արեգակնային ճառագայթումից: Հիմնական օգնաքայլայիշ նյութերի թվին են պատկանում քլորֆոտրածինաջրածինները ( $CF_xCl_y$ ), որոնցից կենցաղում ու դեղագործության մեջ օգտագործվող օդակախույթներ (աերոգլուներ) են ստացվում: Դրանք անմիջական վտանգ են սպառնում Երկիր մոլորակն Արեգակի գերմանուշակագույն ճառագայթներից պաշտպանող օգնային շերտին: Քլորֆոտրածինաջրածինները՝ ֆոտոբևոլորմեթանը, երկլորերկֆոտորմեթանը, քլորֆոտորբրումածինաջրածինները (գալոններ), բրոմմեթանը և այլն, չափազանց կայուն են, թերևն, օդում փոփոխության չեն ենթարկվում, վեր են բարձրանում, փոխազդում օգնի հետ և օգնային շերտում ճեղքեր առաջացնում:

Հրթիռներից մթնոլորտ արտանետվող ազոտի օրսիդները նույնական օգնային շերտի քայլայման մեծ վտանգ են ներկայացնում:

Ենթադրվում է նաև, որ մեծ քանակությամբ օդակախույթներ ստրատոսֆերա են արտանետվում հրաբխային հզոր արտաժայթումների հետևանքով, որոնք 4-8 %-ով նվազեցնում են օգնի քանակությունը միջին լայնություններում:

Օգնային շերտի պահպանումը համամոլորակային (գլոբալ) էկոլոգիական հիմնախնդիրներից է:

1995թ. մոտ 150 երկիր, իսկ 1997թ.՝ 163 երկիր Մոնթեալում (Կանադա) ստորագրել են «Մոնթեալյան արձանագրություն» միջազգային համաձայնագիրը՝ օգնային շերտը քայլայող նյութերի կամ խսպան վերացման, կամ դրանց արտադրությունը խիստ կրծատելու վերաբերյալ:

## **❖ Հարցեր և պարժույթուններ**

1. *Ognisը բրվածնի.*

ա) ծանր իզուրուպն է

բ) ալուրուպային դարաշնուրյունն է

գ) քերև ու ծանր իզուրուպների համախումքն է

դ) ազդեցակային այլ վիճակն է:

2. *Ognisը.*

ա) անգույն է և անհոր

բ) գունավոր է և հաճելի հոդ ունի

*զ) անգույն է և հաճելի հոդը ունի*

*դ) գունավոր է, բայց հոդը չունի:*

**3. Օգոնն օքսիդավերականգնման ռեակցիաներում.**

*ա) ցուցաբերում է միայն օքսիդիչ հավելություն*

*բ) ցուցաբերում է միայն վերականգնիչ հավելություն*

*զ) օժդրված է վերօքս երկակիությամբ*

*դ) վերօքս հավելություն չունի:*

**4. Ինչո՞վ է բացարկվում օգոնն ուժեղ օքսիդիչ հավելությունը բթվածին համեմակ:**

**5. Օղում օգոննի մեծ քանակությունները հայտնաբերում են խոնավ յոդուլայի թղթով: Գրե՛ք լինացող ռեակցիայի հավասարումը:**

**6. Ի՞նչ նյութեր են ֆրենոնները: Գրե՛ք դրանց քանածները և առաջացնան ռեակցիաների հավասարումները:**


**7. Ինչպե՞ս է առաջանում օգոնային շերպը, և ի՞նչ դեր է կարարում:**

**8. Օգոնային շերպը քայլայող միացությունների իսպառ վերացնան կամ դրանց արտադրության խիստ կրծագրման վեհաբերյալ միջազգային փաստաթուղթ ստորագրվել է.**

*ա) Լոնդոնում*

*բ) Մոնրեալում*

*զ) Փարիզում:*




**Երկրի օգոնային շերպ**

## 3.4 ՄԹՆՈԼՈՐՏԻ ԱԴՏՈՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՔՅՈՒԹՆԵՐԸ

Հարկ է նշել, որ առայժմ չկան ծանրակշիռ ապացույցներ, թե մարդու գործունեությունը հանգեցրել է մքննողրտի ու դրա հետ կապված՝ ջերմաստիճանի, անձրևների քիմիական կազմի, ընդհանուր կլիմայական գործոնների նկատելի խորը փոփոխությունների: Սակայն առանձին վայրերում մարդկությունը տառացիորեն ապականում է իր «բույնը»՝ հատկապես մեծ քանակությամբ վառելիք այրելով, և ող է արտանետում ոչ պիտանի ու նույնիսկ վնասակար նյութեր: Ժամանակակից զարգացած արդյունաբերության պայմաններում հասարակությունն օգտագործում է օդավագանը՝ որպես «անծայրածիր» տարածք, որը կարելի է ցանկացած քափոններ արտանետել (նկ. 3.4):

Մքննողրտն աղտոտվում է նաև որոշ բնական գործընթացների հետևանքով, սակայն բնության մեջ կան և հակազդող երևույթներ, որոնք հանգեցնում են հավասարակշռության վերականգնմանը: Օրինակ՝ ածխաթթու գազի ( $\text{CO}_2$ ) հավասարակշիռ կոնցենտրացիան պահպանվում է որպես օվկիանոսի ու ցամաքի նյութի և էներգիայի փոխանակության արդյունք, իսկ մարդու դերն այդ հավասարակշռության հաստատման գործում չնշին է:




Նկ. 3.4 Մքննողրտի աղտոտիչներ

**Փորձե՛ք պարասահանե՛լ, ի՞նչ գեղի կուռենար, եթե բնական գործընթացների հեգևանորով ածխաթթու գազի հավասարակշիռ կոնցենտրացիան չպահպանվեր, և այդ գազը կուրակվեր:**

Հայտնի է, որ  $\text{CO}_2$  գազի ավելցուկը կարող է հանգեցնել «ջերմության էֆեկտի», որի պատճառով օդի միջին ջերմաստիճանը տարեկան  $0,1^{\circ}\text{C}$ -ով աճում է, որն, անշուշտ, կարող է համաշխարհային աղետի պատճառ դառնալ:


Սակայն առավել հրատապ խնդիրն այն է, որ աղտոտվում է ճանապարհների մքննողրտը, որտեղ մահարել քանակություններով կուտակվում է վառելանյութի ոչ լրիվ այրման արգասիք՝ ածխածնի (II)

օքսիդը (CO), որն ողի շրջապտույտով չի հասցնում գրվել: Իսկ CO-ի առաջանակությունը «մեղավորը» տրանսպորտն է, մասնավորապես՝ ավտոմեքենաները. քավական է նշել, որ արդյունաբերությունը մոտ 5 անգամ պակաս CO է օդ արտանետում, քան տրանսպորտը: Օդն աղտոտող նյութերը սովորաբար դասաբաժանվում են ըստ քաղաքարարության (նկ. 3.5):



**Նկ. 3.5 Օդն աղբույսով նյութերի ծավալային բաժինները (%)**

Մթնոլորտի աղտոտման հիմնական աղբյուրները՝ աղտոտման հարաբերական սաստկություններով, ներկայացված են հետևյալ գծանկարում (նկ. 3.6):



**Նկ. 3.6 Մթնոլորտի աղբույսան հիմնական աղբյուրները**

Ներքին այրման շարժիչի աշխատանքի հիմքում ընկած է հեղուկ վառելիքի և օղի խառնուրդի այրումը. 15 կշռամաս օդին համապատասխանում է 1 կշռամաս վառելիք, ընդ որում, այսպես կոչված, իդեալական այրման դեպքում առաջանում է և օդ արտանետվում ոչ այնքան վտանգավոր ածխաբքու գազ (CO<sub>2</sub>):

Սակայն իրականում վառելիքի մի մասը մնում է չայրված, իսկ մյուս մասը, ոչ լրիվ այրման հետևանքով, փոխարկվում է անշափ վտանգավոր շմոլագազի (CO): Սա դեռ բավական չէ. շարժիչն աշխատելիս օդի ազոտը միանում է թթվածնին՝ նույնպես վնասաբեր ազոտի օքսիդներ (NO, NO<sub>2</sub>) առաջացնելով:

Արդյունաբերական ձեռնարկություններից և ջեռուցման համակարգից օդ են արտանետվում նաև ծծմբի (IV) օքսիդ ( $\text{SO}_2$ ) և պինդ մասնիկներ: Եթե  $\text{SO}_2$ -ը չհեռացվի, ապա կփոխազդի ջրի հետ ու ծծմբային թթվի ( $\text{H}_2\text{SO}_3$ ) լուծույթի կաթիներ կառաջացնի.



Բացի ծծմբային և ազոտական թթուներից, թթվային անձրևների պատճառ է դառնում նաև  $\text{H}_2\text{SO}_4$ -ը: Թթվային տեղումների առաջացման մեխանիզմը տես 2.3-ում:

Օքսիդների առաջացումը կախված է ներքին այրման շարժիչների աշխատանքի արագությունից: Արագ ընթացքի ժամանակ ազոտի օքսիդների քանակությունն ավելանում է, բայց վառելիքը լավ է այրվում, և CO համեմատաբար քիչ է առաջանում: Դանդաղ կամ պարապ ընթացքի դեպքում ազոտի օքսիդներ քիչ են առաջանում, բայց այրումը լրիվ չի կատարվում, և CO-ի քանակությունն ավելանում է:

## ❖ Հարցեր և վարժություններ

1. Ի՞նչ պեղի կունենար, եթե թթվածնի պարունակությունն օդում 18 %-ից ցածր լիներ:
2. Ի՞նչ կլիման, եթե թթվածնի պարունակությունը մքնողորոշում 30 %-ից բարձր լիներ:
3. Ի՞նչ կլիման, եթե հելիումի քանակությունը մքնողորոշում 10 %-ի հասներ:
4. Անդարկիկայում օդի միջին ջերմաստիճանը ներկայումս  $-8^{\circ}\text{C}$  է: Մոլորակապես քանի՞ պարի հերո այդ ջերմաստիճանը կդառնա  $+1^{\circ}\text{C}$ , կական հալվել սառցասարերը, ինչի հետեւանքով՝ Համաշխարհային օվկիանոսի մակարդակը 50 մետրով կբարձրանա՝ ցամաքը ջրի պակ առնելով:

## 3.5 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԴՏՈՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵՆՍԱՁԵՎԸ

Մենք ապրում ենք արագ փոփոխությունների դարաշրջանում: Մարդիկ ճանապարհորդում են և շնորհիվ ժամանակակից փոխադրամիջոցների՝ կարծ ժամանակահատվածում հատում են հսկայական տարածություններ: Բնական ռեսուրսներն ավելի շատ են գործածվում, մարդիկ դարձել են երկարակյաց և անընդհատ աճում է մոլորակի վրա բնակչության քանակը: Կյանքի ավելի դանդաղ ընթացքը թվում է անհնարին, քանի որ խիստ ակնհայտ է մարդկանց ձգտումն ավելի բարձր կենսամակարդակի: Սակայն դրան հասնելու համար տնտեսության զարգացում է պետք: Մարդկության այդպիսի զարգացումը կոչվում է **առաջընթաց**, չնայած հարց է, թե ինչպիսի **առաջընթացի** ենք մենք ձգտում:

Ինչ վերաբերում է շրջակա միջավայրի աղտոտմանը և կլիմայի վրա դրա երկարաժամկետ ազդեցությանը, ապա կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ աղտոտող նյութերի ազդեցությունը անձրևների, սաղցասարերի չափերի և մթնոլորտի ջերմաստիճանի վրա այդքան էլ մեծ չէ, իսկ երկիր մոլորակի բնական հավասարակշռության վրա նույնիսկ նկատելի չէ: Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ չորային շրջանները, որոնք ոռոգման միջոցով վերածվել են մշակվող հողերի (անապատների վերածումը բերքատու հողերի), փոքր ազդեցություն են բողոքում կլիմայի վրա:

Սակայն մարդու գործունեության ազդեցությունը տեսանելի է մթնոլորտի վրա: Օրինակ՝ տեղումների միջին քանակը՝ չափված 22 մթնոլորտային կայանում, երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և ուրբաթ օրերին ավելի շատ են, քան հանգստյան օրերին: Այդ փաստը կարելի է բացատրել օդի աղտոտող տարբեր նյութերի կոնցենտրացիայի բարձրացումով, որոնք անձրևի կարիլների համար սաղմագոյացման կենտրոն են: Այլ կերպ ասած՝ մարդու կրողմից ստեղծված օրացույցը, որը ոչ մի դեպքում կապված չէ բնության երևույթների հետ, բերում է օդում մեծ քանակությամբ փոշու և պինդ մասնիկների գոյացմանը ավելի շատ աշխատանքային, քան հանգստյան օրերին:

Մեծ քաղաքներում մարդկային գործունեության բացասական ազդեցության մասին են վկայում նաև այլ երկարաժամկետ դիտումները: Օրինակ՝ Երևանի ջերմաստիճանը մոտավորապես 2-4 °C-ով բարձր է, քան այն շրջապատող արվարձաններինը: Քաղաքի կենտրոնում ծնվում է «ցերմային կղզյակ»: Օդագնացները, ովքեր բոշում են օդապարիկներով՝ թռչելով մեծ քաղաքների վրայով, մեծ

բարձրությունների են հասնում տաք օդի շնորհիվ: Քաղաքներում տեղումները դիտվում են ավելի առատ, քան հարևան գյուղական շրջաններում: Քաղաքների անշատած ավելցուկային տաքությունը պայմանավորված է երեկոյան ժամերին քամու առաջացմամբ, որն ուղղված է դեպի քաղաքի կենտրոն, որտեղից տաք օդը քաշվում է վերև: Զարմանալի չէ, որ քաղաքաները շրջանները դառնում են ավելի հրապուրիչ ապրելու համար, քան քաղաքի կենտրոնը:

Այժմ մեծ ուշադրություն է դարձվում օգտակար նյութերի կրկնակի վերամշակման և վերականգնման ուղղության զարգացմանը: Որոշ դեպքերում այդպիսի մոտեցումը կիրառելի է երկար ժամանակ: Օրինակ՝ ամեն նոր մեքենայի մոտավորապես 40 %-ը կազմված է վերականգնված մետաղից. դա հիմնականում վերաբերում է պողպատե և չուգունե մասերին: Նոր՝ ալյումինային ինքնաթիռում նոտ 60 % ալյումինը վերականգնվում է մետաղից, որն արդեն օգտագործված է եղել: Իսկ եթե զնում եք ոսկյա իր, ապա նրանում եղած ոսկու 90 %-ն օգտագործվում է ոչ առաջին անգամ: Որքան թանկ է նյութը, այնքան ավելի շատ է ենթարկվում կրկնակի օգտագործման: Թղթի կրկնակի վերամշակումը նույնպես պայմանավորված է հասարակության կարիքներով: Մենք արդեն զգում ենք թղթի արտադրման համար անհրաժեշտ հումքի պակասը, որը հանգեցրել է դրա գնի բարձրացմանը և այդ պատճառով տնտեսապես ավելի արդյունավետ է թղթի մի մասը պատրաստել թափոնից: Այդ ձևով են մշակվում նաև ապակյա տարաները: Թղթի և ապակու թափոնների վերամշակումը նպատակահարմար է նաև այն առումով, որ փրկում է քաղաքն աղտոտումից:



### Աղբույժներ

Նոր մեթոդներ են մշակվել

աղբի վերամշակման համար: Աղբանոցների հարևանությամբ կառուցվում են աղբի վերամշակման գործարաններ: Աղբի այրվող բաղադրամասերն այրվում են, և դրանից առաջացած ջերմությունն օգտագործվում է էլեկտրաէներգիայի արտադրման համար, ընդ որում՝ դա արվում է այնպես, որ նվազագույնի հասցվի օդի աղտոտումը: Օրինակ՝ Ամստերդամում օրական հավաքում են 1500 տոննա կենցաղային աղբ: Ապակին և մետաղը օգտահանվում են (ուտիլացվում), իսկ աղբի այրվող բաղադրամասերը՝ այրվում: Այնուամենայնիվ, աղբը վառելիք է, որի մեկ տոննան արժեն 10 դրար:

Այդ միջոցով Ամստերդամում 50 տարի է՝ ստանում են քաղաքի կողմից օգտագործվող էլեկտրաէներգիայի մոտ 5 %-ը: Նման գործարաններ են կառուցված նաև Փարիզում և Եվրոպական այլ քաղաքներում: Երևանը վաղուց կարիք ունի նման գործարանի:

### ☞ **Հարցեր և վարժություններ**

1. Ո՞ր պնդումները ճիշտ չեն: Օդի նմուշի ծավալը կախված է.

ա) ճնշումից

բ) ջերմասպիհանից

գ) դրանում առկա իներտ զագերի քանակից

դ) ջրային գոլորշիների քանակից:

2. Ընդունեք այն նյութերը, որոնք օդում քիչ են, բայց այնուամենայնիվ, մեծ ազդեցություն ունեն մթնոլորդի հավելությունների վրա.

ա) թթվածին                          բ) ածիսածնի (IV) օքսիդ

ց) ազուր

դ) մերան

ե) ջուր:

3. Քիմիական արտադրության 10 գլխավոր նյութից երկու սը վերցված են օդից: Որո՞նք են այդ նյութերը:

4. Մաքուր նյութեր չեն.

ա) չոր օդը

բ) թթվածինը

ց) բյուրեղական կերակրի աղը

դ) արյունը

5. «----- էֆելիո»-ը լրաբացման բնական երևույթ է, որը կարող է վրանիզավոր դառնալ մարդկության համար վառելանյութերի մեջ քանակներ այրելիս: Լրացրեք բաց բողած բառը:

6. Վերջին լրարիներին անձրևները զարգացած երկրներում դարձել են թթվային: Ի՞նչ վնաս կարող են հասցնել թթվային անձրևներն արվեստի գլուխործոցներին:

## 3.6 ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

### Ածխածնի (II) և (IV) օքսիդների սպացումը և հալվուրյունների ուսումնափրումը

#### Փորձ 1. Ածխածնի (II) օքսիդի սպացումը և դրա այրումը

Փորձի ընթացքը: Փորձն անհրաժեշտ է անցկացնել քարշիչ պահանջանում: Փոքր կոլրում գեղադրիլ 2-3 կարիլ խիլ ծծմբական թքու (խրությունը՝ 1,84 գ/սմ<sup>3</sup>) և ավելացնել 4-5 կարիլ մրջնաքրու՝ HCOOH: Կոլրը փակել ուղիղ զազակար խողովակ ունեցող խցանով և ուղահայաց ամրացնել կալանի վրա: Խռառնուրդը բաքացնել այրիչի թույլ կրակի վրա և զգուշորեն այրել անջաղվող զազը (CO-ի խառնուրդը օդի հելք պայթուցիկ է): Նշել բոցի գույնը:

Գրել ածխածնի (II) օքսիդի սպացման և դրա այրման ռեակցիաների հալվասարումները՝ ընդունելով, որ ծծմբական թքում մրջնաքրվից ջուրը է խլում:

#### Փորձ 2. Ածխածնի (II) օքսիդի վերականգնիչ հալվուրյունները Արծարի վերականգնումը

Փորձի ընթացքը: Պայրապել [Ag(NH<sub>3</sub>)<sub>2</sub>]OH-ի լուծույթը, որի համար փորձանորդի մեջ գեղադրիլ 3 կարիլ արծարի նիւրագի և 1-2 կարիլ նալբրիումի հիդրօքսիդի 2 Մ լուծույթներ: Անշարժած արծարի օքսիդի նարկածը լուծել 25% զանգվածային բաժնով ամոնիակի լուծույթում:


Սկանալ ածխածնի օքսիդի հնչանակ և փորձ 1-ում: Ռեակցիոն խառնուրդով միկրոկոլբը ամրացնել լաբորատոր կալանի վրա, փակել խցանով՝ թեք զազականացնող խողովակով, որի ծայրը հջեցնել արծարի կոմպլեքսային միացություն պայունակող փորձանորդի մեջ: Ռեակցիոն խառնուրդը թեքեալի բաքացնել և անջաղվող զազն անցկացնել լուծույթի մեջ, մինչև կոլորի վիճակում մերաղական արծարի անջաղումը:

Փորձի դաշտական գրանցումը: Գրել ռեակցիաների հալվասարումները.


ա) արծարի նիւրագի և նալբրիումի հիդրօքսիդի փոխազդեցությունից արծարի օքսիդի սպացման

բ) արծարի օքսիդի և ամոնիակի փոխազդեցությունից արծարի կոմպլեքսային միացության առաջացման

գ) ածխածնի (II) օքսիդով կոմպլեքսային միացությունից արծարի վերականգնումը, որն ընթանում է բար հեղևաւ ուրվագրի.



### Փորձ 3. Ածխածնի (IV) օրսիդի պարունակությունն ողում



**Նկ. 3.7 Ածխածնի (IV) օրսիդի հայտաբերումը արտաշնչվող և շնչվող օղում**  
I օղում լցված փուչիկ (ռեզիստ գունդ), II արտաշնչված օղում լցված փուչիկ. 1. պատապմասայից ծայրակաղ, 2. խողովակներ, 3. սեղմիչ, 4. կանոնական լուծույրով փորձանոր, 5. սպահովիչ փորձանոր, 6. գազապար խողովակ

Անհրաժեշտ սարքեր և ագրանյութեր. Երկու փորձանոր, 6 սպական խողովակ, երկու ռեզիստ հիցամ՝ երկուական անցրով, խողովակներ, սեղմիչ, երկու լաբորատոր կալան, երկու օղակ, ֆենոլֆթալինի, ամոնիակաջուր (25%), բորած ջուր:

Փորձի ընթացքը: I փուչիկը լցրեք օղում (հեծանիլի պոմպով), խոկ II փուչիկը՝ արտաշնչված օղում: Երկու փուչիկների չափերը պեսը է լինեն մուրավորապես նույնական:

Պարբասպեք կլանող լուծույրը: Վերցրեք 500 մլ բորած ջուր, սպենացրեք 2-3 կարխ ֆենոլֆթալինի և կարխներով ավելացրեք ամոնիակաջուր մինչև կայում վարդագույնը: Համաքեք փորձը ըստ նկ. 3.7-ի: Ծայրակալով միացրեք I փուչիկը 5-րդ փորձանորին, բացեք սեղմիչը, որպեսզի օղն անցնի 4-րդ փորձանոր՝ վայրկյանում 1-2 բշտիկ արագությամբ: Օդն անցկացրեք մինչև լուծույրի գումարկովիլը: Փակեք սեղմիչը:

Փոխեք 4-րդ փորձանորը նոր բաժին լուծույրով փորձանորի հետ և միացրեք արտաշնչված օղում լցված II փուչիկը: Բացեք սեղմիչը, որպեսզի արտաշնչված օղն անցնի 4-րդ փորձանոր՝ վայրկյանում 1-2 բշտիկ արագությամբ: Օդն անցկացրեք մինչև լուծույրի գումարկովիլը:

Դիտարկում: Համեմարեք փուչիկների չափերը փորձն ավարտելուց հետո:

Արդյունքների քննարկումը.

1. Բնագույն է լուծույրը գումարկովիլը:

2. Փորձի ավարտից հետո ո՞ր փուչիկի չափն է ավելի փոքր, որից կեզրակացնեք, թե որ օդն է առավել ածխածնի (IV) օրսիդ պարունակում:

3. Գրեք ջրային լուծույրում ամոնիակի և ածխածնի (IV) օրսիդի փոխազդեցության ռեակցիայի հավասարումը:

## ԳԼՈՒԽ 4

### ՔԻՄԻԱՆ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՆ

Երկիր մոլորակի էներգիայի պաշարների մեծ մասն առաջացել է դրարարեական քիմիական ռեակցիաների հետևանքով: Էներգիան, որը պարփակված է նյութերում, քիմիական կապերի էներգիան է: Նյութերի փոխարկումների ընթացքում քիմիական կապի էներգիան անցնում է էներգիայի այլ ձևերի:

Հնում մարդը բավարարվում էր էներգիայի այն քանակով, որն սպանում էր սննդին: Դարեր շարունակ պարզագույն սարքերը գործի զգելու համար՝ որպես քանող ուժ, օգլագործվել է մարդկանց ու կենդանիների մկանային ուժը: Ժամանակի ընթացքում մարդիկ սկսել են օգլագործել էներգիայի լրացուցիչ աղբյուրներ, օրինակ՝ շարժվող ջրի էներգիան: Որպես առաջին ջրամեքենա՝ կարելի է հիշարակել ոռոգման նպատակով օգլագործվող ասորեստանյան և եզրակացների շերեփանիվները: XI դարից սկսած՝ հայրեական եկեղեցական երկրներում հողմաղացների ծեռվ օգլագործվել է քամու ուժը, որը մինչ այդ ծառայում էր որպես առաջարկանավերի շարժման միջոց: Սակայն հերազարդում պարզվեց, որ էներգիայի առավել հարմար աղբյուր են ածխածին գազը պարունակող միացությունները՝ հանածող օրգանական վառելիքը:

Զեռուցելու, սննդի պատրաստելու և լուսավորելու համար օգլագործվել և օգլագործվում է այրվող փայտի էներգիան: Որոշ դարաշարքաներում օգլագործվել է նաև նավթ, ածուխ, լոռիք և օրգանական նյութերի քայլայման այլ արգասիքներ:

Այսօր հակայական քանակի էներգիա է արդադրվում ածխածնի (ածխի) և ածխածնի միացությունների (օրգանական նյութերի) այրումից: Ամենակարևոր այրվող օգլագար հանածուներն են նավթն ու քայլայման գազը, որոնք հիմնականում կազմված են ածխաշդրածիններից:

## 4.1 ԱԾԽԱԶՐԱԾԻՆՆԵՐ: ԸՆԴՀԱՌՈՒԹ ԲՆՈՒԹՎԳԻՐԸ

Օրգանական պարզագույն միացությունների մոլեկուլները պարունակում են միայն երկու տարր՝ **ածխածին** և **ջրածին**: Այդ միացություններն անվանում են **ածխաջրածիններ՝ ածխածնի ջրածնային միացություններ**:


Օրինակ՝  $CH_4$ ,  $C_3H_8$ ,  $C_2H_2$ ,  $C_4H_6$ ,  $C_6H_6$  և այլն: Ընդհանուր բանաձևը՝  $C_xH_y$ :

Դեռևս XIX դարի կեսերին հայտնի էր, որ ածխածին և ջրածին տարրերն առաջացնում են մեծ թվով տարրեր քիմիական միացություններ: Երկար ժամանակ այդ փաստը բացատրություն չուներ: Վերոնշյալի և որիշ այլ փաստերի մասին բացատրություն տվեց օրգանական միացությունների քիմիական կառուցվածքի տեսությունը:

Ածխածնի ատոմներն օժտված են բացառիկ հատկություններով. դրանք, մեկը մյուսին միանալով, ընդունակ են առաջացնել երկար շղթաներ և օղակներ: Քիմիական կապը ածխածնի ատոմների, ինչպես նաև՝ ածխածնի և այլ տարրերի ատոմների միջև կովալենտային է, այսինքն՝ առաջանում է էլեկտրոնային զույգի օգնությամբ: Օրգանական միացության մոլեկուլում ատոմները միացած են որոշակի հաջորդականությամբ՝ իրենց վալենտականություններին համապատասխան:

### Ածխածնն օրգանական միացություններում քառակալենտ է:

Օրգանական միացությունների քիմիական կառուցվածքի տեսությունը, հաստատելով այն գաղափարը, որ յուրաքանչյուր նյութ ունի որոշակի որակական և քանակական բաղադրություն, հիմնավորում է, որ նյութերի հատկությունները կախված են իրենց կառուցվածքից՝ մոլեկուլում ատոմների միացման կարգից: Դա հաճգեցնում է **իզոմերիայի երևույթին**՝ նույն մոլային զանգվածով և միատեսակ բաղադրությամբ տարրեր նյութերի գոյության հնարավորությանը: Այսպես՝ ածխածնի չորս ատոմից կազմված շղթան կարող է լինել զծային կամ ճյուղավորված.




Առմաղ բուրան

Իզոբուրան

Նյութի մոլեկուլի կառուցվածքը կարելի է որոշել ըստ հատկությունների և, հակառակը, ըստ կառուցվածքի՝ կարելի է կանխատեսել քիմիական միացության հատկությունները: Այս դեպքում պետք է հաշվի առնել, որ ատոմների խմբերը օրգանական և անօրգանական միացությունների մոլեկուլներում փոխադարձաբար ազդում են միմյանց վրա՝ որոշելով դրանց ռեակցունակությունը:

**Ածխաջրածինների դասակարգումը:** Գիտնականներն ստեղծել են համակարգ, որում բոլոր միացությունները տեղադրված են շատ դյուրնեկալելի կերպով: Այդ համակարգի շնորհիվ՝ կարելի է հեշտությամբ որոշել, թե որ խմբում պետք է տեղադրել յուրաքանչյուր նոր սինթեզված կամ բնական հումքից անջատված նյութ:



#### Գծապարկեր 4.1 Ածխաջրածինների դասակարգումը

## ❖ Հարցեր և վարժություններ

1. Ածխաջրածինների այրման ռեակցիայի ուրվագիրն է.



Կազմե՛ք այդ ռեակցիայի հավասարումը և գրե՛ք բրված-նի գործակիցը:

2. Ածխածինն օրգանական միացություններում ցուցաբերում է փոփոխական օքսիդացման աստիճան: Ացետիլենի ( $C_2H_2$ ) մոլեկուլում ածխածնի վալենտականությունը և օքսիդացման աստիճանը համապատասխանորեն հավասար են:

ա) +1,2

բ) -1,2

շ) -1,4

դ) -2,3

3. Ածխաջրածնի մոլեկուլում առավելագույնը կարող են միացած լինել ածխածնի դրաբի հետևյալ քվով արումներ:

ա) 4

բ) 9

շ) 100

դ) միլիոն և ավելի

4. Սահմանեք իզոմերիայի երևույթը:

5. Ածխածնի վալենտականությունն օրգանական միացություններում հիմնականում հավասար է.

ա) 1

բ) 4

շ) 2


դ) 5



## 4.2 ՀԱԳԵՑԱԾ ԱԾԽԱԶՐԱԾԻՆԵՐ

Բաց շղայով հագեցած ածխաջրածինները, ըստ միջազգային անվանակարգի, անվանում են ալկաններ: Ալկանների մոլեկուլում առկա են երկու տեսակ քիմիական կապ՝ C–C և C–H: C–C կապը կոչվածնային ոչ բնեուային կապ է, իսկ C–H-ը՝ թույլ բնեուային, քանի որ ածխածինը և ջրածինը, ըստ էլեկտրաքացասականության, միմյանց մոտ են:

**Ալկաններ են անվանվում բաց շղայով հագեցած ածխաջրածինները, որոնք ունեն  $C_nH_{2n+2}$  բնիհանուր բանաձև և մոլեկուլում միայն միակի կապեր ( $C-C$ ,  $C-H$ ):**



**Նկ. 4.1 Մերամի բառամիտային կառուցվածքը**

Ստորև ներկայացվում են ալկանների հոմոլոգիական շարքի առաջին 6 անդամը և դրանց անվանումները (աղյուսակ 4.1)

**Աղյուսակ 4.1 Ալկանների հոմոլոգիական շարքը**

	Բանաձև $C_nH_{2n+2}$	Անվանում
1.	$CH_4$	Մեթան
2.	$C_2H_6$	Եթան
3.	$C_3H_8$	Պրոպան
4.	$C_4H_{10}$	Բութան
5.	$C_5H_{12}$	Պենտան
6.	$C_6H_{14}$	Հեքսան

**Նոյն դասին պատկանող օրգանական միացուրյունների շարքը, որում նյութերը դասավորված են մոլեկուլային զանգվածի աճման կարգով, և որի յուրաքանչյուր անդամը նախորդից գուրքերվում է  $CH_2$  խմբով, անվանվում է հոմոլոգիական շարք, շարքի անդամները՝ հոմոլոգներ, իսկ  $CH_2$  խումբը՝ հոմոլոգիական գուրքերուրյուն:**

Ալկաններում իզոմերիան պայմանավորված է տարբեր կառուցվածքով շղթաներ առաջացնելու ածխածնի ատոմի հատկությամբ: Ինչպես արդեն գիտեք, իզոմերիայի այդ տեսակն անվանվում է ածխածնային կմախրի իզոմերիա:

Մոլեկուլում ածխածնի ատոմների թվի մեծացմանը զուգընթաց՝ իզոմերների թիվը ևս մեծանում է: Մեթանի, էթանի և պրոպանի համար միակ կառուցվածքը դիտվում է որպես մեկ իզոմերի առկայություն:

### **Ալկանների քիզիկական հասկությունները**

25 °C ջերմաստիճանում և մթնոլորտային ճնշման տակ հոմոլոգիական շարքի առաջին չորս անդամը զազային նյութեր են, չճուղավորված ալկանները՝ պենտանից մինչև հեպտադեկան ( $C_5 - C_{17}$ ), գտնվում են հեղուկ վիճակում, իսկ բարձր ալկանները պինդ նյութեր են:


### **Ալկանների քիմիական հասկությունները**

Ցանկացած միացության քիմիական հատկությունները որոշվում են այդ միացության կառուցվածքով, դրա կազմում գտնվող ատոմների և ատոմների միջև առկա քիմիական կապերի քննությունով:

Ալկանները գործնականում իննական ռեակցիաների մեջ չեն մտնում և կայուն են քեռոյային ազդանյութերի նկատմամբ (թթուներ, հիմքեր, իոնային բնույթի օրոխիճներ, օրինակ՝  $KMnO_4$ ,  $K_2CrO_4$  և այլն): Ալկաններին բնորոշ են.


#### **1. Տեղակալման ռեակցիաներ**

Չնայած  $C-H$  կապն ավելի ամուր է, քան  $C-C$  կապը, բայց այն առավել հեշտ է կտրվում, քանի որ գտնվում է մոլեկուլի մակերեսին և մատչելի է ազդանյութերի գրոհի համար: Եթե մեթանի և քլորի խառնուրդով լցված փակ կոլբը դնենք ցրված լույսի տակ, ապա կարելի է նկատել քլորի դեղնականաշավուն գույնի աստիճանական թուլացում, որը մեթանի և քլորի փոխազդեցության վկայությունն է: Արևի լույսի տակ ռեակցիան ընթանում է պայթյունով.




#### **2. Դեհիդրուման (օրաժնազրկման) ռեակցիաներ**

Ալկանների ջրածնազրկման ռեակցիան դարձելի, բարձր ջերմաստիճանային կատալիտիկ բարդ գործնական է, որը հիմնականում օգտագործվում է արդյունաբերությունում: Օրինակ՝ էթանի դեհիդրումից ստացվում է էթեն.



### 3. Այրման ռեակցիաներ

Բոլոր ածխաջրածիններն օդում այրվում են՝ առաջացնելով ածխածնի (IV) օքսիդ և ջուր: Ալկանների հոմոլոգիական շարքի առաջին անդամներն այրվում են անծովս, կապույտ բոցով՝ անջատելով մեծ քանակությամբ ջերմություն, և որպես վառելանյութ՝ օգտագործվում են կենցաղում և արդյունաբերությունում: Գազային ալկանները (մեթան, էթան, պրոպան, բութան) օդի հետ առաջացնում են պայրյունավլտանգ խառնուրդներ, ինչը պետք է հաշվի առնել դրանք օգտագործելիս:




Մեծ նոլային զանգվածով ալկաններն այրվում են ծխացող բոցով: Դրանում համոզվելու համար կատարեք հետևյալ փորձը.

*Հախճապակյա թասի մեջ լցրեք պարաֆին, դրեք փակ էլեկտրական սալիկի վրա և սպասեք մինչև պարաֆինը հալվի: Այրվող մարինը մոլորեք հալված պարաֆինի մակերեսին: Տաք պարաֆինը կսկսի այրվել ծխացող բոցով: Փորձը կարարեք բարշիչ պահարանի լուս: Բացարձիք պարաֆինի ոչ լրիվ այրման պարմառը: Հասկարեք ձեր պարմառաբանությունը՝ հաշվելով ածխածնի լուսարի զանգվածային բաժինը (%): Մերժանում և դեկանում ( $C_{10}\text{H}_{22}$ ):*



**Խնդիր**

Հայր պրոպանի այրման ռեակցիայի ջերմաքիմիական հավասարման՝



**Հաշվեք.**

- 1) անջապվող ջերմության քամակությունը (կ.Ջ), եթե ծախսվում է 67,2 լ (ն.պ.) պրոպան
- 2) առաջացած ածխածնի (IV) օքսիդի ծավալը (լ), եթե պրոպանի այրումից անջապվում է 277,5 կ.Ջ ջերմություն:

Լուծում.

1)  $S_{\text{Իլած}} = 67,2 \text{ L պրոպան}, \text{որը կազմում է } 3 \text{ մոլ} (67,2/22,4 = 3 \text{ մոլ})$ : 3 մոլ պրոպանի այրումից կանգալով  $Q = 2220 \times 3 = 6660 \text{ կ.Ջ ջերմություն}$ :

2) Հայտ ունակցիայի հավասարման՝  $2220 \text{ կ.Ջ ջերմություն}$  անշարժելիս առաջանում է  $3 \times 22,4 \text{ L ածխածնի (IV) օքսիդ}$ , իսկ  $277,5 \text{ կ.Ջ դեղքում կառաջանան}$ :

$$V(\text{CO}_2) = \frac{277,5 \cdot 3 \cdot 22,4}{2220} = 8,4 \text{ L}$$

Պատ.՝ 1)  $6660$ , 2)  $8,4$ :

### ❖ Առաջադրանք

Հավաքե՛ք պրոպանի և բուրանի գնդաձողային մոդելները:  
Ի՞նչ ձև կարանա շղթան: Փորձե՛ք բացարկել:

### ❖ Հարցեր և վարժություններ

1. Ո՞րն է ալկանների ընդհանուր բանաձևը:
2. Ո՞ր շարքն է անվանվում հոմոլոգիական:
3. Ինչպե՞ս է անվանվում  $CH_2$  խումբը և այն շարքը, որի անդամները փարբերվում են այդ խումբով:
4. Հեղևալ ածխաջրածինները դասավորել ըստ ածխածինի դարրի զանգվածային բաժնի մեծացման՝ 1.  $CH_4$ , 2.  $C_2H_4$ , 3.  $C_2H_2$ , 4.  $C_3H_8$ :
5. Գրե՛ք ալկանների այրման ռեակցիայի ընդհանուր հավասարումը:
6. Ալկանների ընդհանուր բանաձևից օգտվելով՝ գրե՛ք ածխաջրածնի բանաձևը, եթե դրա խրությունն, ըստ հելիումի, 11 է:  $D(He) = Mx/4$ :

## 4.3 ԶՀԱԳԵՑԱԾ ԱՇԽԱՋՐԱԾԻՆԵՐ՝ ԱԼԿԵՆՆԵՐ, ԱՆԿԻՆՆԵՐ, ԱԼԿԱԳԻԵՆՆԵՐ

Ածխածնի ատոմներն ունեն նաև այն առանձնահատկությունը, որ միմյանց հետ, բացի միակի կապից, առաջացնում են նաև կրկնակի՝  $C=C$  և եռակի՝  $C\equiv C$  կապեր, ինչն էլ օրգանական միացությունների բազմաքանակության պատճառներից մեկն է։ Օրգանական միացությունների ամենամեծ դասերից է շագեցած միացությունների դասը։

Չհագեցած ածխաջրածինների առաջին ներկայացուցիչները անգույն գազեր են, որոնք ջրում չեն լուծվում, լուծվում են օրգանական լուծիչներում։


Ալկենները պարունակում են մեկ կրկնակի կապ և ունեն  $C_nH_{2n}$  ընդհանուր բանաձև։ Երկու կրկնակի կապով չհագեցած ածխաջրածիններն անվանում են ալկաղիններ։ Այդ ածխաջրածինների պարզագույն ներկայացուցիչը 1,3-բուրաղինն է։ Ալկաղիններն ունեն  $C_nH_{2n-2}$  ընդհանուր բանաձև։ Այդ նույն ընդհանուր բանաձևն ունեն նաև ացետիլենային շարքի ածխաջրածինները՝ ալկինները, որոնց մոլեկուլը պարունակում է ածխածին-ածխածին եռակի կապ (աղյուսակ 4.2)։

### Աղյուսակ 4.2 Չհագեցած միացությունների կառուցվածքային բանաձևերը


Բանաձևը	Անվանումը	Կառուցվածքային բանաձև	Մոլեկուլի մոդելը
$C_2H_4$	Էթիլեն (էթեն)	$  \begin{array}{c}  H & & & H \\  & \diagdown & \diagup & \\  & C = C & & \\  & \diagup & \diagdown & \\  H & & & H  \end{array}  $	
$C_2H_2$	Ացետիլեն (էթին)	$H - C \equiv H - C$	
$C_4H_6$	Բուրաղին – 1,3	$H_2C = CH - CH = CH_2$	

Չհագեցած ածխաջրածիններին բնորոշ ռեակցիան համարվում է կրկնակի և եռակի կապերի միացման ռեակցիան։


**Հիդրան ռեակցիա:** Սետաղական կատալիզատորների (Pt, Ni) ներկայությամբ ալկենները միացնում են ջրածին՝ առաջացնելով ալկաններ։




Մետաղական կատալիզատորների (Pt, Ni) ներկայությամբ ալկինները միացնում են ջրածին՝ առաջացնելով ալկեններ և ապա՝ ալկաններ.




**Հալոգենացման ռեակցիաներ:** Չհագեցած միացությունները գունազրկում են բրոմաջուրը: Այս ռեակցիան չհագեցած կապի հայտաբերման ռեակցիան է.





Էթեն 1,2-դիբրոմէթեն



1,2-դիբրոմէթեն



Չհագեցած ածխաջրածինների մոլեկուլները կարող են միացնել հալոգենաջրածին և ջուր.




Զրի միացման ռեակցիան անվանվում է հիդրատացում, այն ընթանում է քրոնների ներկայությամբ, տաքացման պայմաններում և ճնշման տակ:

Չհագեցած ածխաջրածինների կարևորագույն ռեակցիան պոլիմերացուն է: Ցածրամոլեկուլային միացությունների քազմարիվ մոլեկուլներ (մոնոմերներ) միանում են՝ առաջացնելով երկար շղթաներ՝ բարձրամոլեկուլային միացություններ, որոնք անվանվում են պոլիմերներ, իսկ ռեակցիան՝ պոլիմերացում:



Կրկնակի կապերի առկայության պատճառով 1,3-դիենային ածխաջրածինները հեշտությամբ պոլիմերվում են: Այս պոլիմերացման ռեակցիան ընկած է կառչուկի ստացման հիմքում:



Չհագեցած ածխաջրածիններն այրվում են՝ անջատելով մեծ քանակությամբ ջերմություն, ինչը բույլ է տալիս օգտագործել այդ ածխաջրածինները որպես վառելիք: Ակենները մեծացնում են բենզինի որակը:

Ացետիլենի բոցի ջերմաստիճանն անցնում է 2000 °C-ից, որից էլ օգտվում են մետաղների եռակցման և կտրման համար.



Օգտվելով ջերմաքիմիական ռեակցիաների հավասարումներից՝ կարելի է կատարել տարրեր հաշվարկներ:

Օրինակ՝ ըստ ռեակցիայի ջերմաքիմիական հավասարման՝ հաշվեք ացետիլենի այն քանակը (մոլ), որն ամիրաժեշտ է 7842 կՋ ջերմություն ստանալու համար:

$$n (\text{C}_2\text{H}_2) = \frac{2 \cdot 7842}{2614} = 6$$

Պատ.՝ 6 մոլ:


## ❖ Հարցեր և վարժություններ

1. Գրեք էքանի և էքենի լուսարձերի ռեակցիան:
2. Գրեք պրոպենի միացման ռեակցիան ջրի, քլորաջրածնի, քլորի հետ:
3. Էթիլենի մոլեկուլում ածխածնի ալումների միջև ի՞նչ կապեր են առկա, և ո՞րն է դրանց փարփերությունը:
4. Ո՞ր ռեակցիաներն են անվանվում հիդրման և հալոգենացման: Բերեք օրինակներ:
5. Անվանեք էթիլենի կիրառման կարևորագույն բնագավառները և էթիլենից սկացվող հանրահայլ միացությունները:
6. Ո՞ր ածխաջրածիններն են անվանում դիենային, և ո՞րն է դրանց ընդհանուր բանաձևը:
7. Ի՞նչ կարևոր կիրառություն ունեն դիենային ածխաջրածինները:

## 4.4 ԲԵՆԶՈԼ. ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Առաջին արոմատիկ ածխաջրածինը բենզոլն է: 1833թ. Է.Սիչեր-լիխը առաջին անգամ սինթեզել է մաքուր բենզոլ և որոշել դրա բանաձև՝  $C_6H_6$ :

Ժամանակակից ֆիզիկաքիմիական մեթոդների տվյալների համաձայն՝ բենզոլը կանոնավոր վեցանկյուն է, որում  $C-C$  կապի երկարությունը  $0,1397$  նմ է, իսկ կովալենտային անկյունը՝  $120^\circ$ : Ածխածին-ածխածին և ածխածին-ջրածին  $\sigma$ -կապերն առաջացնում են հարք ցիկլիկ  $\sigma$ -կմախը (նկ.4.2).



**Նկ. 4.2 Բենզոլի կմախը կառուցվածքը**

Վեց ածխածինի ատոմի մեկական  $\pi$ -օրբիտալները կողմնային վրածածկի հաշվին առաջացնում են փակ վեց էլեկտրոնանց միասնական համակարգ, որը հարք ցիկլիկ  $\sigma$ -կմախը հարթության ուղղահայաց է: Միասնական 6 էլեկտրոնանց ամպը կենտրոնացվում է  $\sigma$ -կմախը հարթության վերևում և ներքևում (նկ. 4.3).



**Նկ. 4.3 Էլեկտրոնների ապագեղայնացումը բենզոլի մոլեկուլում**

Վեց ընդհանուր էլեկտրոնը, որոնք առաջացնում են միասնական էլեկտրոնային ամպ, հաճախ պատկերում են կլոր օղակի ձևով.



Առաջացած վեց էլեկտրոնանց միասնական ամպը պայմանավորում է բենզոլի մոլեկուլի առանձնահատկություններն ու կայունությունը: Լրացուցիչ կայունացումը դժվարացնում է միացման ռեակցիաների ընթանալը և հեշտացնում տեղակալմանը, քանի որ

վերջին դեպքում միասնական ցիկլիկ համակարգը պահպանվում է ռեակցիայի արգասիքում:

### **Ֆիզիկական հավելությունները**

Բենզոլը հեշտ եռացող (եռում է 80 °C), անգույն, յուրահատուկ հոտով հեղուկ է: Սառչելիս բենզոլը հեշտությամբ պնդանում է սպիտակ բյուրեղային զանգվածի ձևով, որի հալման ջերմաստիճանն է 5,5°C: Մոլեկուլը բնեռացված չէ, որի պատճառով հեշտ լուծվում է օրգանական չեզոք լուծիչներում և գործնականում չի լուծվում ջրում: Բենզոլը բունավոր է, ախտահարում է երիկամները, լյարդը, ողնուղեղը, արյունը:

### **Քիմիական հավելությունները**


Բենզոլը չի գունազրկում կալիումի պերմանգանատի ջրային լուծույթի ու բրոմաջուրը: Դրանում կարող եք համոզվել փորձով: Երկու փորձանորի մեջ վերցրեք 1-ական մլ բենզոլ, մեկի մեջ ավելացրեք երեք կարգի կալիումի պերմանգանատի լուծույթ, իսկ մյուսի մեջ՝ բրոմաջուր և թափահարեք: Գույնի փոփոխություն չի նկատվում:

### **Փորձից կարելի է եղանակացնել, որ**


- 1) բենզոլը սովորական պայմաններում չի օքսիդանում
- 2) բենզոլը սովորական պայմաններում միացնաև ռեակցիա չի լրացնի և դրանով լրարրերվում է ալկեններից:

### **Տեղակալման ռեակցիաներ**

**Հալոգենացում:** Բրոմի և քլորի հետ բենզոլը փոխազդում է միայն կատալիզատորի ներկայությամբ: Որպես կատալիզատոր՝ վերցնում են մետաղների անցուր հալոգենիներ (AlCl<sub>3</sub>, AlBr<sub>3</sub>, FeCl<sub>3</sub>, FeBr<sub>3</sub>): Բրոմացման կամ քլորացման արդյունքում առաջանում են բենզոլի համապատասխան բրոմածանցյալներ կամ քլորածանցյալներ.




**Նիտրացում:** Ունակցիան իրականացվում է նիտրացնող խառնուրդով (խիտ ծծմբական և ազոտական թթուների խառնուրդ) և ստացվում է նիտրոբենզոլ:




### **Միացման ռեակցիաներ**

Բենզոլը դժվարությամբ է մտնում միացման ռեակցիաների մեջ, քանի որ միացման ռեակցիաների հետևանքով արոմատիկությունը խախտվում է, վերանում է օղակը կայունացնող վեց էլեկտրոնանոց ընդհանուր ամպը:

**Հիդրուս:** Զրածնի միացումը բենզոլին և իր հոմոլոգներին ընթացում է քարձր ջերմաստիճանի և ճնշման պայմաններում՝ մետաղական կատալիզատորների ներկայությամբ.




**Քլորացում:** Քլորի միացումը բենզոլին ուղիկալային մեխանիզմով ընթացող ռեակցիա է և իրականացվում է գերմանուշակագույն ճառագայթման և տաքացման պայմաններում: Բենզոլի ուղիկալային քլորացումը հանգեցնում է հեքսաքլորօքիլոհեքսանի՝ «հեքսաքլորան»-ի առաջացմանը, որը վնասատու միջատների դեմ պայքարի միջոց է.



**Այրում:** Բենզոլն օրում այրվում է ծխացող բռուվ, ինչը պայմանափրփած է բենզոլի մոլեկուլում ածխածին տարրի մեծ զանգվածային քածնով.



Բենզոլի հոմոլոգը մեթիլ բենզոլն է, որն անվանվում է նաև տոլուոլ: Տոլուոլ, ի տարրերություն մեթանի, տաքացնելիս գունազրկում է կալիումի պերմանգանատի լուծույթը.



**Փորձ:** Փորձանորքի մեջ լցրեք 2 մլ տոլուոլ, վրան ավելացրեք նույն ծավալով կալիումի պերմանգանատի 0,01 մոլ/լ կոնցենտրացիայով լուծույթ, 2-3 մլ ծծմբական բրու և զգույշ թափահարելով՝ տաքացրեք սպիրտայրոցի բռուի վրա: Ի՞նչ է նկատվում: Նկարագրեք կատարված փոփոխությունները: Չեր դիտարկումները գրանցեք լաբորատոր տետրում: Գրե՛ք ռեակցիայի հավասարումը:

### ❖ Հարցեր և վարժություններ

1. Բենզոլի հոմոլոգիական շարքի ընդհանուր բանաձևն է.

ա)  $\text{C}_n\text{H}_{2n-6}$  որպես ( $n < 6$ )  $p$ )  $\text{C}_n\text{H}_{2n-6}$  որպես ( $n = 6$ ).

զ)  $\text{C}_n\text{H}_{2n-2}$ , որպես ( $n \geq 6$ ). դ)  $\text{C}_n\text{H}_{2n-6}$ , որպես ( $n \geq 6$ ).

3. Ի՞նչ զործառույթ է կարարում  $\text{FeCl}_3$ -ը բենզոլը բրումացնելիս:

4. Ինչո՞ւ բենզոլը բրումացուրը չի գունազրկում: Համեմատեք բենզոլի, ալկանների և ալկենների հարկությունները:

5. Ինչո՞ւ է կարելի բենզոլի մոլեկուլում երեք կրկնակի կապի փոխարեն կլոր շրջան դնել:

6. Բենզոլի մոլեկուլում հաշվե՛ք ածխածնի զանգվածային քաժինը (%) և, ըստ սրացված պարասիսնի, եղրակացրե՛ք, թե ինչ բոցով կայրվի այդ նյութը:

## 4.5 ԱՅԽԱՆԱԿԱՆ ՊԱՐՈՒՍՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԸ ՈՐՊԵՍ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԼԲՅՈՒԹ

Կենդանի օրգանիզմներն օգտագործում են արեգակնային էներգիան: Լուսափնեցով օրգանական միացությունների ստացումն ածխածնի (IV) օրսիդից, ջրից, ազոտից և այլ անօրգանական նյութերից ջերմակլանիչ է, այսինքն՝ ընթանում է ջերմության կլանումով: Այդ էներգիան անջատվում է օրգանական նյութերի ջերմանջատիչ օրսիդացման ռեակցիաների ընթացքում:

Օրգանական մոլեկուլները երկրի վրա առաջանում են լուսափնեցով, որն արեգակնային էներգիայի քիմիական փոխակերպման եղանակն է:

Կենսաքիմիական փոխարկումների հետևանքով ընթանում է հակառակ ռեակցիան, որը հանգեցնում է լուսափնեցի ընթացքում կուտակված էներգիայի անջատմանը.




Արեգակնային ճառագայթման էներգիայի ընդհանուր պաշարը լուսափնեցի ռեակցիայի արգասիքների ձևով մոտ 10 անգամ գերազանցում է մարդկության էներգիական պահանջին: Կուտակված արեգակնային էներգիան անջատվում է օրգանական նյութերը կամ դրանցից առաջացած օգտակար հանածոներն այրելիս:

### ■ Գիտե՞ք արդյոք

Յամարի օրգանական նյութերի մոտ 80 %-ը արդադրում են անլրատները, որոնք ոչ միայն երկիր մոլորակի «քոքերն» են, այլև էներգիայի կուտակման զիսավոր սուրենցիալը (աղբյուր):

## **Վառելանյութի գեևակներ:** **Վառելանյութի ջերմապայության ընդունակությունը**


Վառելանյութեր են այն այրվող նյութերը, որոնք օգտագործվում են ջերմություն ստանալու նպատակով: Որպես վառելանյութ՝ կարող են օգտագործվել այն այրվող նյութերը, որոնք բնության մեջ պատրաստի վիճակում առկա են մեծ քանակությամբ կամ ստացվում են էժան բնական նյութերի մշակումից և այրվելիս մեծ քանակությամբ ջերմություն են անջատում ու շատ բունավոր նյութեր չեն առաջացնում: Վառելանյութերը լինում են պինդ, հեղուկ և գազային (գծ.4.2)։



19-րդ դարի կեսերին կտրուկ սկսեց աճել այրվող օգտակար հանածոների օգտագործման ծավալները, երբ դրանք դարձան ավտոմոբիլային և օդային փոխադրամիջոցների, արդյունաբերության և կենցաղային կարիքների համար անհրաժեշտ էներգիայի հիմնական աղբյուրներ:


Վառելանյութերն ընդհանրապես, այդ թվում նաև՝ ածխաջրածնային վառելանյութերը, բնութագրվում են իրենց ջերմատվության ընդունակությամբ, այսինքն՝ 1 կգ վառելանյութը այրելիս անջատված ջերմության քանակությամբ կԶ/կգ (նկ. 4.4)։

Երկրագնդի ընդերքից արդյունահանվող 3,5 տրիլիոն տոննա օրգանական վառելանյութի 80 %-ը կազմում է ածուխը: Սակայն օգտագործվող վառելանյութում ածխի բաժինը կազմում է ընդամենը 38% (նկ. 4.5)։



**Նկ. 4.4 Տարբեր լինեսակի վառելանյութերի ջերմապալուրյան ընդունակուրյունը**

Պինդ վառելիք են փայտը, տորֆը, այրվող թերթաքարերը և, իհարկե, քարածուխն ու անտրացիտը (ածխածնով ավելի հարուստ քարածխի տարատեսակ): Երկրի ընդերքում քարածխի նստվածքները ոչ մեծ խորություններում են, այդ պատճառով առաջինը հենց այդ վառելիքն է օգտագործվել մարդու կողմից: Քարածուխը նաև կարևոր քիմիական հումք է, որից ստանում են բազմաթիվ անհրաժեշտ նյութեր:



**Նկ. 4.5 Պահանջվող բնիհանուր էներգիայում տարբեր վառելանյութերի բաժինները (%)**

Քարածխի մեծ քանակությունը ենթարկվում է վերամշակման՝ կորս և այլ արժեքավոր նյութեր ստանալու համար:

Կորսն ստանում են հատուկ վառարաններում՝ առանց օղի մուտքի քարածուխը բարձր ջերմաստիճանում տաքացնելով: Տաքացման համար օգտագործում են գազային վառելանյութ:

Սինչև  $1000^{\circ}\text{C}$  տաքացնելիս, բարդ օրգանական նյութերը, որոնք մտնում են քարածխի բաղադրության մեջ, ենթարկվում են քիմիական փոխարկման: Ածխից անջատվում են տարբեր գազային և

հեղուկ արգասիքներ, իսկ վառարանում մնում է միայն կոքս, որը կազմում է վերցրած քարածխի 60-70%:

Քանի որ բոլոր ցանող նյութերը կոքսից հեռանում են, այն այրվում է առանց բոցի և նրան մետաղահալման գործնքացում դարձնում առավել արժեքավոր:

Ստացված կողմնակի արգասիքները՝ ամնիակաջորը, կոքսագը և խեժը, շատ կարևոր հումք են քիմիական արդյունաբերության համար: Չարածխային խեժը բենզոլի և իր հոմոլոգների ստացման հիմնական աղբյուրներից է: Կոքսագազը պարունակում է մեծ քանակությամբ ջրածին: Կոքսագազի խորը սառեցումից, բացի ջրածնից, բոլոր բաղադրամասերը հեղուկանում են, իսկ գազային ջրածնին ստացվում է մաքոր վիճակում:

Քարածխից ստացված բոլոր նյութերն իրենից արժեքավոր են:

Նավի և գազի համաշխարհային պաշարների նվազման հետ մեծ կարևորություն է ստանում պինդ վառելայնութիւն փոխարկումը գազայինի, որն անվանվում է գազացում:

Հատուկ վառարաններում՝ գազագեներատորներում, ածուխն այրվում է երկու հաջորդական ռեակցիայով: Սկզբից այն լրիվ այրվում է՝ առաջացնելով ածխածնի (IV) օքսիդ.




Անջատված ջերմության հաշվին ածխի շերտը շիկանում է: Շիկացած ածխի շերտի միջով քարձրանալով վերև՝ ածխածնի (IV) օքսիդը փոխարկվում է ածխածնի (II) օքսիդի:



Ստացված գազն անվանվում է **գեներատորային գազ**, որը կազմված է ազոտից և ածխածնի (II) օքսիդից, օգտագործվում է միայն որպես վառելիք:

Եթե գազագեներատորի միջով անցկացնում են ջրային գոլորշիներ, ապա ստացվում է **ջրագազ**.




Ջրագազը ոչ միայն գազային վառելիք է, այլև քիմիական հումք՝ մեծ բվով օրգանական նյութերի ստացման համար:

Գազային վառելանյութ են բնական և նավթային ուղեկից գազերը, ինչպես նաև՝ քիմիական ճանապարհով քարածխից ստացվող վերը նշված գեներատորային գազը և ջրագազը:

**Բնական գազ:** Բնական գազը գագերի խառնուրդ է, որի բաղադրությունը կախված է տեղանքից: Երբեմն այն համարյա մաքոր մեթան է, բայց բնական գազի սովորական կազմն այսպիսին է.  $\approx 75\%$  մեթան՝  $CH_4$ ,  $15\%$  էթան՝  $C_2H_6$ ,  $5\%$  ալրոպան՝  $C_3H_8$ , ազոտ, ածխածնի (IV) օքսիդ, հելիում և բարձր ալկաններ:

Բնական գազն էժան և հարմար վառելիք է, քանի որ այրելիս ծովս ու մուր չի առաջացնում: Մեթանն արժեքավոր քիմիական հումք է: Մեծ նշանակություն ունի բնական գազում պարունակվող մեթանի կատալիտիկ քայլայումը ջրային գոլորշիներով՝ բարձր ջերմաստիճանում: Առաջանում է ջրածնի և ածխածնի (II) օքսիդի խառնուրդ՝ այսպես կոչված **սինթեզ-գազ**.



Կատալիզատորի բնույթից, ճնշումից և ջերմաստիճանից կախված՝ սինթեզ գազից ստացվում են տարրեր օրգանական նյութեր, որոնք օգտագործվում են ամենատարբեր նպատակների համար:

Մեթանը ալկանների հոմոլոգիական շարքի առաջին անդամն է, որի հատկություններին ու կիրառությանը դուր արդեն ծանոթ եք:

Արդյունահանվող ածխաջրածինների՝ ավելի քան 90 % -ը օգտագործվում է որպես վառելանյութ ջերմային էլեկտրակայաններում, ներքին այրման շարժիչներում, բնակարանների ջեռուցման համար և այլն:

Սարդկությունը յուրաքանչյուր տարի օգտագործում է մոտ 7,5 մլրդ տ ածխաջրածնային հումք, որի սկզբնաղբյուրը նավթն է և քարածուխը. բնական գազն օգտագործվում է երկու անգամ քիչ: Թվում է, թե անհանգուտանալու կարիք չկա, քանի որ ածխաջրածինների պաշարները պետք է բավարարեն երկար տարիներ: Հեշտ արդյունահանվող ու տեղափոխվող, քիմիական արդյունաբերությունում որպես վառելանյութ և հումք կիրառվող նավթի ու գազի գումարային մասնաբաժինը կազմում է 70%:

Ավանդական էներգետիկան, որը սպառում է այրվող հանքանյութերը, գտնվում է փակուլու ճանապարհին: Մեկ տարվա ընթացքում համաշխարհային ջերմաէլեկտրակայանները (ԶԵԿ) ծախսում են այնքան ածուխ, նավթ և գազ, որքան բնույթունը կուտակել է մոտ 1 000 000 տարվա ընթացքում:

**Ուղեկից նավթային գազեր:** Ուղեկից նավթային գազերն իրենց ծագումով նույնական բնական գազեր են, հանքաշերտերում գտնվում են նավթի հետ միասին, լուծվում են նավթի մեջ և գտնվում են նավթի վրա՝ առաջացնելով գազային «գդակ»: Այդ գազերի ճնշման տակ նավթը հորանցքով բարձրանում է երկրի մակերես և ճնշման հետևանքով գազերը հեշտությամբ անջատվում են հեղուկ նավթից: Նավթային ուղեկից գազերը ինչպես լավ վառելանյութ, այնպես էլ լավ քիմիական հումք են: Ուղեկից գազերի օգտագործման հնարավորություններն ավելի լայն են, քան բնական գազինը, որովհետև դրանց բաղադրությունն ավելի բազմազան է: Ուղեկից գազերում գգալիորեն

ավելի շատ են էքանը, պրոպանը, բութանը, ուստի, դրանց վերամշակումից կարելի է ստանալ ավելի մեծ թվով օրգանական նյութեր: Որպեսզի ուղեկից գազի օգտագործումն ավելի նպատակահարմար լինի, այն բաժանվում է ավելի նեղ բաղադրամասերի:

**Գազային բենզին** պենտանի, հեքանի և այլ ածխաջրածինների խառնուրդ է: Այն ավելացվում է սովորական բենզինին՝ շարժիչներում բենզինն ավելի լավ բոցավառելու համար:

**Հեղուկ գազը** պրոպանի և բութանի խառնուրդ է, կիրառվում է որպես բարձր կալորիականությամբ փառելանյութ:



Հեղուկ գազը նաև արժեքավոր հումք է քիմիական արդյունաբերության համար:


**Չոր գազը** հիմնականում կազմված է մեթանից և օգտագործվում է ացետիլեն, մուր և այլ նյութեր ստանալու համար, ինչպես նաև՝ որպես վառելանյութ:

Ուղեկից նավթային գազերից քիմիական վերամշակման համար կորզվում են նաև առանձին ածխաջրածիններ՝ էքան, պրոպան, բութան, որոնցից ստանում են չհագեցած ածխաջրածիններ:

### ❖ **Հարցեր և վարժություններ**

1. Ի՞նչ է վառելանյութի ջերմակվության ընդունակությունը:  
Տվեք սահմանումը:

2. Հիդրագինն օգտագործվում է որպես հրթիռային վառելանյութ: Հաշվեք հիդրագինի ջերմակվության ընդունակությունը, եթե դրա այրման ջերմաքիմիական հավասարումն է.



3. Գրեք մեքանի այրման ջերմաքիմիական հավասարումը, եթե մեքանի ջերմակվության ընդունակությունը 55 000 կՋ/կգ է:

4. Ո՞ր վառելանյութն առավելություն ունի՝ պինդ, հեղուկ, թթվային: Հիմնավորեք ձեր պակասականը:

5. Ուղեկից նավթային գազերից անջակված բութանի այրումից անջակվում է մեծ քանակությամբ ջերմություն՝

2654,5 կՇ/մոլ: Ի՞նչ զանգվածով բուրան է այրվել եթև անշարժել է 10618 կՇ ջերմություն:

6. Հիմնականում ո՞ր ալկանների խառնուրդն է հեղուկ զազը, և ի՞նչ կիրառություն ունի այն:

7. Չոր զազն օգտագործվում է ացետիլեն և մուր սպանալու համար: Գրեք ռեակցիանների հավասարումները: Ի՞նչ նպարակով է սպացվում մուրը:

8. Նավքային ուղեկից զազում պարունակվում է պրոպան, որն օգտագործվում է պոլիէթիլեն և պոլիպրոպիլեն սպանալու համար: Գրեք էթիլենի և պրոպիլենի սպացման և դրանց պոլիմերացման ռեակցիանների հավասարումները:

9. Ո՞ր զազը չի պարունակվում բնական զազում.

ա)  $C_2H_6$       բ)  $CH_4$       գ)  $C_2H_2$       դ)  $N_2$

10. Ինչպես են սպանում սինթետ զազը, և ի՞նչ կիրառություն ունի այն:

11. Ո՞ր բորումն է անվանվում չոր: Ի՞նչ դեղի կունենար, եթև բարածություն օդի ներկայությամբ շիկացվեր մինչև  $1000^{\circ}C$ :

12. Ինչո՞ւ է կորսն այրվում առանց բոցի:

13. Ի՞նչ բաղադրություն ունի գեներատորային զազը:



## 4.6 ՆԱՎԹ: ՆԱՎԹԱՅՆՅՈՒԹԵՐ

**Վառել նավթ, դա նույնն է, թէ վառարանը վառել դրամով:**  
**Դ. Մենդելեև**

Նավթը հաճախ անվանվում է «սև ոսկի»: Ինչո՞ւ: Ի՞նչն է դրան այդպիս տարրերում մնացած օգտակար հանածոներից: Հիմնական տարրերությունը բաղադրության մեջ է: Նավթը հարյուրավոր նյութերի խառնուրդ է, որոնք օժտված են երկու կարևոր ընդհանուր հատկությամբ.

1. Այդ նյութերը հարուստ են էներգիայով, որն անշատվում է այրելիս: Այս հատկության վրա է հիմնված նավթի օգտագործումը որպես վառելանյութ:

2. Նավթի բաղադրությունում առկա նյութերի մոլեկուլները կարելի է փոխակերպել տարրեր ձևերով և ստանալ հսկայական քվով օգտակար նյութեր: Այս հատկության վրա է հիմնված նավթի օգտագործումը որպես հումք:


Դուք արդեն զիտեք, որ ածխաջրածինները գազային, հեղուկ և պինա նյութեր են: Դինը և գազային ածխաջրածինները, հեղուկ ածխաջրածիններում լուծվելով, առաջանում են բարդ խառնուրդներ: Նավթը մոտ 1000 քիմիական նյութի խառնուրդ է: Դրանց 80-90 %-ը, ըստ զանգվածի, հեղուկ ածխաջրածիններ են: Նավթի բաղադրության մեջ մտնում են նաև ծծմբի, ազոտի, թթվածնի և որոշ մետաղների միացություններ:

Ոչ ոք կոմերես զիտի, թէ ինչպիս է առաջացել նավթը: Շատ հավանական է, որ այն ստացվել է կենդանական և բուսական օրգանիզմների մնացորդներից, որոնք բնակվել են հին ծովերում մոտ 500 մլն տարի առաջ: Այդ օրգանիզմները մահացել են և ծածկվել նստվածքներով: Ծննդումը, ջերմաստիճանը և միկրոօրգանիզմները փոխարկել են դրանց նավթի, որը թաքնվել է երկրի կեղևուում: Ըստ երևոյթին՝ նավթի առաջացումն ընթանում է ամրնիատ, այն պէսոք է ընթանա նաև մեր օրերում: Բայց նավթագոյացման արագությունն անհամեմատելի դանդաղ է՝ համեմատած նավթահանման և օգտագործման արագության հետ: 1900թ. ամբողջ աշխարհում նավթի արտահանումը կազմել է 20 միլիոն տոննա, իսկ հիմնա՝ մոտ 3 միլիարդ տոննա:



Նավթը հայտնի է եղել դեռևս հին դարերում և օգտագործվել է մոտ 5000 տարի առաջ՝ լուսավորման ու ջեռուցման նպատակով: Սերձավոր Արևելքում հավաքում էին երկրի մակերես դուրս եկած նավթը և օգտագործում նավերի փայտյա մասերի ու ջրանցքների պատերի ներծծման համար՝ անջրաթափանց դարձնելու նպատակով:

Մեր դարաշրջանի առաջին հազարամյակում արարները ոչ բարդ թորման և մաքրման ճանապարհով սկսել են ստանալ կերոսին: Կերոսիննե լամպը շուրջ հարյուր տարի եղել է ամենամատչելի լուսի աղբյուրը (նկ. 4.6.):



#### **Նկ. 4.6 Կերոսինի լամպ**


Ներկա ժամանակներում օգտագործվող էներգիայի կեսն ստացվում է նավթից: Բոլոր փոխադրամիջոցները՝ ինքնարթիոները, նավերը, ավտոմեքենաները, նավթամթերքով են աշխատեցնում իրենց շարժիչները: Նավթի միայն 8 %-ն է օգտագործվում պոլիմերներ, կառչուկներ, սինթետիկ թելեր, լվացող միջոցներ, պարարտանյութեր, դեղամիջոցներ և այլ նյութեր ստանալու համար:

Բոլոր երկրներում փնտրում են էներգիայի այլ աղբյուրներ, բայց նավթը դեռ մնում է էներգիայի հիմնական աղբյուրը: Ամբողջ աշխարհում արդյունահանվող նավթի 90 %-ը օգտագործվում է որպես վառելիքի ստացման հումք:

Նավթի բաղադրությունները՝ ըստ տարրերի՝ հետևյալն է. C՝ 83%, N՝ 13%, O՝ 0,2-0,3%, S՝ 0,1-0,7 %, մոխիր՝ 0,1-0,5%, մետաղներ՝ Y, Ni՝ 0,01%: Նավթը հիմնականում պարունակում է երեք տեսակի ածխաջրածին՝ ալկաններ, ցիկլոպականներ (նավթեններ) և արոմատիկ ածխաջրածիններ, թեև այս ածխաջրածինների հարաբերակցությունը տարբեր բնակավայրերի նավթերի մեջ լինում է տարբեր: Բարձրվի նավթը հարուստ է ցիկլոպականներով, Ռումինիայի նավթը՝ մեթանով, Գրոզնու նավթը՝ մեթանով, պրոպանով, բութանով, պենտանով: Ընդհանուր առմանք՝ նավթի բաղադրությունում առկա են 150 տարբեր ածխաջրածիններ:

Քանի որ նավքը տարբեր նյութերի խառնուրդ է, ուստի, եռման կայուն ջերմաստիճան չունի, իսկ խառնուրդներում նյութերը պահպանում են իրենց հատկությունները, որն էլ հնարավորություն է ընձեռում նյութերը բաժանել և մաքուր վիճակում ստանալ: Նավքի բաղադրության մեջ մտնող նյութերն ունեն իրենց եռման ջերմաստիճանը: Որքան մեծ է նոլեկուլային զանգվածը, այնքան բարձր է եռման ջերմաստիճանը:

Չմշակված նավքն անվանվում է հում նավք, որը յուղանման, կաշուն, սև կամ դարչնագույն, բնորոշ հոսող հեղուկ է: Հում նավքի վերամշակման առաջին փուլը բորումն է: Դիտարկենք նավքի բորումը լարորատորիայում: Եթե նավքը տաքացնենք նկարում պատկերված սարքում (նկ. 4.7), ապա կհամոզվենք, որ այն ածխա-



**Նկ. 4.7 Նավքի բորման լարորատոր սարք**

ջրածինների խառնուրդ է: Այն թորվում է ոչ թե որոշակի ջերմաստիճանում, որը հասուն է մաքուր նյութին, այլ ջերմաստիճանային լայն միջակայքում: Մեղմ տաքացնելիս սկզբում թորվում են փոքր մոլույթներ, այնուհետև ավելի բարձր ջերմաստիճանով ածխաջրածինները, այնուհետև ավելի բարձր ջերմաստիճանում սկսում են թորվել ավելի մեծ մոլային զանգված ունեցող նյութերը:

Քանի որ նավքը տարբեր եռման ջերմաստիճան ունեցող և տարբեր մոլային զանգվածով ածխաջրածինների խառնուրդ է, ապա թորումնով այն բաժանում են առանձին թորամասերի:

Բենզինը, լիզոնինը, կերոսինը և գազոյլն անվանում են թափանցիկ նավքանյութեր:

Թափանցիկ նյութերը թորելուց հետո նավքից մնում է մածուցիկ, սև հեղուկ՝ մազուր, որից կարելի է ստանալ շատ արժեքավոր նյութեր, սակայն այն բայցայլում է  $350^{\circ}\text{C}$  բարձր ջերմաստիճանում: Հայտնի է, որ ճնշումն իջեցնելիս նյութերի եռման ջերմաստիճանն

իշնում է: Այդ սկզբունքից օգտվելով՝ նազուրը հետագա թորման են ենթարկում վակուում տեղակայաներում՝ 50 մմ սնդիկի այան մնացորդային ճնշման տակ և ստանում տարրեր տեսակի քայլողեր, որոնց անվանում են նաև հանքային յուղեր: Նավթի որոշ տեսակներից անջատում են պինդ ածխաջրածինների խառնորդ՝ պարաֆին. հեղուկ և պինդ ածխաջրածինները խառնելով՝ ստանում են վագելին: Այն, ինչ չի թորվում, անվանվում է կուպր և օգտագործվում է ճանապարհների ասֆալտապատման համար:

Վերոնշյալ գործընթացն անվանվում է նավթի առաջնային վերամշակում, որի ժամանակ քիմիական փոխարկումներ տեղի չեն ունենում: Նավթը բաժանվում է թորամասերի, որոնցից յուրաքանչյուրը դարձյալ ածխաջրածինների խառնորդ է, սակայն ավելի «նեղ» բաղադրությամբ: Աղյուսակ 4.2-ում ներկայացված են նավթի թորման արգասիքների որոշ բնութագրեր.

#### **Աղյուսակ 4.2 Նավթի հիմնական բորամասերը**

N	Անվանում	Ածխածնի աստոմների քիվը	Եղանակային շերմաստիճան oC	Ելք, %	Կիրառություն
1	Բենզին	C <sub>5</sub> -C <sub>11</sub>	40- 200	7	Վառելանյոթ ավտոմեքենաների և ինքնարիոնների մխոցային շարժիչների համար: Յուղերի և կառչուկի լուծիչ, գործվածքները մաքրելու միջոց և այլն
2	Լիզորին	C <sub>8</sub> -C <sub>14</sub>	120-240	7	Վառելանյոթ տրակտորների համար
3	Կերոսին	C <sub>12</sub> -C <sub>18</sub>	200-300	13	Վառելանյոթ հրթիռային ինքնարիոնների և հրթիռների համար
4	Գազոյի	C <sub>13</sub> -C <sub>15</sub>	250-370	10	Դիզելային վառելանյոթ
5	Մազուր		> 275	50(25/25)	Հեղուկ վառելիք, քայլողեր և կուպր ստանալու համար

## **Նավթի կրեկինգ**

Նավթի թորումից ստացված բենզինը չի բավականացնում: Բացի դրանից, անհրաժեշտ է նաև լավացնել բենզինի որակը, բարձրացնել ճայրունային կայունությունը:

Նավթի թորման (ռեկտիֆիկացիոն) աշտարակում չի թույլատրվում ջերմաստիճանն գերազանցում  $350^{\circ}\text{C}$ -ից բարձր: Հակառակ դեպքում ածխաջրածինների մոլեկուլները կախեն տրոհվել: Իսկ եթե ամբողջ նավթը ենթարկվում է ջերմային մշակման  $400\text{-}700^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում, ապա նավթի բաղադրությունում պարունակվող ածխաջրածինները սկսում են ճեղքվել փոքր մոլեկուլների. տեղի է ունենում մոլեկուլի ճեղքում՝ կրեկինգ:

Այդպես ծնվում է նավթի մշակման երկրորդ կարևոր գաղափար՝ նավթի կրեկինգը: Կրեկինգի պրոցեսը կարելի է ներկայացնել հետևյալ հավասարումով.



հերսադեկան օկտան օկտեն



օկտան բութան բութեն

Ինչպես տեսնում եք, առաջանում է ավելի փոքր մոլային զանգվածով սահմանային և ոչ սահմանային ածխաջրածինների խառնուրդ, որը համապատասխանում է բենզինին: Կրեկինգի ժամանակ ածխածնային շղթան հիմնականում կիսվում է, որովհետև գծային մոլեկուլի կենտրոնական կապը ամենաքույլն է: Ստացվող նյութերը հետագայում մասամբ կարող են ելի քայքայվել, օրինակ.



բութան եթան եթեն

*Լամ հնարավոր է*



բութան մեթան պրոպեն

**Բարձր մոլային զանգվածով ածխաջրածինների բայրայումն ավելի ցնդող միացությունների անվանվում է կրեկինգ (ճեղքում):**


Կրեկինգը հնարավորություն է տալիս զգալիորեն ավելացնել նավթից բենզինի ստացման ելքը:

Մշակվել է կրեկինգի երկու հիմնական տեսակ՝ **ջերմային և կարսալիպիկ:**

**Չերմային կրեկինգն** իրականացվում է խողովակավոր վառարանում: Նավթանյութը, օրինակ՝ մազութը, քաց են թողնում խողովակավոր վառարան, որտեղ ջերմաստիճանը հասնում է  $470\text{--}550^{\circ}\text{C}$ , իսկ ճնշումը մի քանի տասնյակ մթնոլորտ՝ ածխաջրածինները հեղուկ վիճակում պահելու համար: Այս պայմաններում տեղի է ունենում կրեկինգ, և ստացված հեղուկը ու գազային նյութերի խառնուրդն ուղղվում է թորման աշտարակ: Չերմային կրեկինգը բենզինը տարբերվում է նավթի թորումից ստացվող բենզինից նրանով, որ պարունակում է ոչ սահմանային ածխաջրածիններ: Ոչ սահմանային ածխաջրածինները լավացնում են բենզինի որակը, սակայն դրանք կրկնակի կապի հաշվին պոլիմերվում են և խեժացում: Խեժացումը կանխելու համար ավելացնում են հակաօքսիդիչ նյութեր: Չերմային կրեկինգից առաջացած գազերը պարունակում են ոչ սահմանային ածխաջրածիններ:

**Կատալիստիկ կրեկինգն** իրականացվում է բնական կամ սինթետիկ այլումասիլիկատների առկայությամբ: Կատալիզատորի կիրառումը հնարավոր է դարձնում գործընթացը տանել ավելի մեծ արագությամբ և ցածր ջերմաստիճանում՝  $450\text{--}500^{\circ}\text{C}$ , և ստանալ ավելի բարձրորակ բենզին:

Կատալիտիկ կրեկինգի պայմաններում ճեղքման ռեակցիաների հետ մեկտեղ ընթանում են իզոմերացման ռեակցիաներ՝ շղթայի ճյուղավորում, իսկ ոչ սահմանային ածխաջրածիններն այստեղ ավելի քիչ են ստացվում, քան ջերմային կրեկինգի ընթացքում: Կատալիտիկ կրեկինգը բենզինն ավելի որակով է, քանի որ ճյուղավորված շղթայով ածխաջրածինների ճայրունակայությունն ավելի մեծ է, իսկ չհագեցած միացորյունների պակասը բենզինը դարձնում է ավելի կայուն:



**Ածխաջրածինների արոմատացում, նաև լրանյութերի ոփորմինգ կամ ազնվացում:** Եթե բենզինը տաքացնում են պլատին կատալիզատորի ներկայությամբ, ապա տեղի է ունենում ածխաջրածինների արոմատացում՝ ալկանների և ցիկլոալկանների փոխարկում արոմատիկ ածխաջրածինների և զգալիորեն մեծանում է վառելանյութի որակը:

**Բենզինի դեկոնացիոն (ճայրյունային) կայունությունը:** Բենզինի կարևորագույն հատկանիշներից մեկը դրա ճայրյունային կայունությունն է:

Որպեսզի ճայրյունի երևույթը հասկանալի լինի, իիշենք, քե ինչպես է աշխարում ներքին այրման շարժիքը: Ծարժիք գլանի մեջ ներծծվում է բնագիտի գոլորշիների և օդի խառնուրդը, որը սեղմվում է միոցով և բռնկվում էլեկտրական կայծից: Ածխաջրածինների այրումից սրացված զագերն ընդունակվում են և կարարում աշխարում: Որքան բնազինի գոլորշիների և օդի խառնուրդը ուժեղ է սեղմվում այնքան շարժիք մեծ հզորություն է զարգացնում և համեմատաբար ամերան քիչ վատեղամյութ է ծախատ: Մակայն պարզվել է, որ բնազինի ոչ բոլոր տեսակներն են ուժեղ սեղմման դիմանում: Որոշ ածխաջրածիններ սեղմելիս բռնցառվում են ժամանակակից շուրջ, այրվում շատ արագ և պայրյունով: Պայրյունի՝ միտցին հասցրած հարվածից շարժիքի մասները վաղաժամ մաշվում են, և հզորությունն ընկնում է: Բնազինի պայրյունային այրումն էլ անվանվում է ճայրյուն:

Ճայրյունի նկատմամբ ամենաանկայունը նորմալ կառուցվածքով աշխաներն են: Ծյուղավորված, ինչպես նաև ոչ սահմանային և արուագրիկ ածխաջրածինները ճայրյունի նկատմամբ ավելի կայուն են: Բնազինի ճայրյունային կայունության քանակական բնութագիրը դալու համար մշակվել է օլիգանային սանդղակ: Բնազինի յուրաքանչյուր գիտակ և ածխաջրածին օժիգած է որոշակի օլիգանային բվով: Բարձր ճայրյունային կայունությունն ունեցող իզոոկտանի՝ 2,2,4-եռմերիլպենտանի օլիգանային բիվն ընդունվել է 100, չափազանց հեշտ ճայրյունի ենթարկվող ն-հեկտանի օլիգանային բիվն ընդունվել է 0: Հեկտանի և իզոոկտանի խառնուրդի օլիգանային բիվն հավասար է այդ խառնուրդում պարունակվող իզոոկտանի պարունակությանը (%):

ն-հեկտան	0	24%	5%
իզոոկտան	100%	76%	95%
օկտանային բիվ	100	76	95

Օգրվելով այսպիսի սանդղակից՝ որոշում են բնազինի օլիգանային բիվը: Օրինակ՝ բնազին՝ 95, օլիգանային բիվը 95 է: Դա նշանակում է, որ զանում առանց ճայրյունի բնազինը դիմանում է այնպիսի սեղմման, ինչպես 95% իզոոկտանից և 5% ն-հեկտանից կազմված խառնուրդը:

## Առաջադրանք

1. Դեռևս ճշգրիտ հայրնի չէ, թե ինչպես է հայրնվել նավթը: Գոյություն ունեն նավթի ծագումը բացահայրող լուսական լուսակերպեր: Գրե՛ք ուժքերակը նավթի ծագման վերաբերյալ և դիտարեկե՛ք բոլոր լուսակերպները: Ըստ ձեզ՝ ո՞րն է ճշնարկության առավել մուլ:
2. Կուգենայի՞ք վերադառնալ 100 լուսական հետ: XX դարի սկզբունքները օգտագործվել են ոչ այնպես, ինչպես հիմա: Զեզ պարկերացրեք լրագրութերի թիմում, որի խնդիրն է հարցագրույց վերցնել այն մարդկանցից, ովքեր հիշում են անցած դարի սկզբը: Ի՞նչ հարցերով պետք է դիմեք այդ մարդկանց:

## Հարցեր և վարժություններ

1. Ո՞ր ֆիզիկական երևոյթի վրա է հիմնված նավթի բաժանումը թորամաների:
  2. Ինչպես հայրնի է նավթը թորվում է լայն ջերմաստիճանային միջակայքում, ինչո՞ւ այն որոշակի ջերմաստիճանում չի թորվում:
  3. Ի՞նչ ածխաջրածիններ են պարունակվում նավթում: Բոլոր լուսակերպերն արդյոք նույն բաղադրությունում ունեն:
  4. Մարմանշեք նավթի կարևորագույն հավելությունները:
  5. Անվանեք ձեզ հայրնի նավթամթերքները և դրանց կիրառման ոլորտները:
  6. Մահմանշեք կրեկինզը: Ի՞նչ նպակակով է այն իրականացվում:
  7. Ինչո՞վ են լուսակերպում թորման, ջերմային կրեկինզ և կարավարիկ կրեկինզ բենզիններն իրարից: Որի՞ որակն է առավել լավը և ինչո՞ւ:
  8. Նավթի թորման արգասիքներից ո՞րն է օգտագործվում որպես դիզելային վառելամյութ:
- |           |            |
|-----------|------------|
| ա) բենզին | բ) կերոսին |
| գ) գազոյլ | դ) լիզոռին |

9. Բենզինի որակը բարձրացնելու նպատակով այն դարձնում էն պլատին կարալիզատորի ներկայությամբ: Ի՞նչ քիմիական ռեակցիա է ընթանում: Գրեք այդ ռեակցիայի հավասարությունը:

10. Դասավորեք բենզիններն ըստ որակի լավացման.

1. կարալիփիլ կրեկինգ,
2. բորման,
3. ջերմային կրեկինգ,
4. արունակացված

w) 4 3 1 2      p) 2 3 1 4      q) 1 2 3 4      r) 4 1 3 2

11. Բենզինի շափման միավորը բարելի է (1 բարելը  $\approx 157 \text{ l}$ ): Ամերիկայի Միացյալ Նահանգներում յուրաքանչյուր օր ծախսվում է 18 միլիոն բարել նավթ: Քանի՞ լիդր նավթ է ծախսվում: Հաշվի առնելով, որ՝ որպես հումք, օգտագործվում է նավթի միայն 13 %-ը, հաշվիք մեկ օրվա ընթացքում որպես քիմիական հումք ծախսվող նավթի ծավալը (լ):

## 4.7 ԵՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱՇԱՐՑԵՐԸ

Եներգետիկան շրջակա միջավայրի հիմնական աղբույրողն է:

### Չերմային Էներգետիկա

Չերմային էներգետիկան հիմնված է օգտակար հանածոների այրման վրա, որի ընթացքում ավելանում են շրջակա միջավայրի համար վնասակար արտադրական թափոնները: Ավելանում են նաև ջերմային և ատոմային հզոր էլեկտրակայանները, որոնք էլեկտրաէներգիայի արտադրության հետ վիթխարի քանակով ավելորդ ջերմություն են արձակում և դառնում շրջակա միջավայրի «ջերմային աղտոտման» աղբյուր: Չերմային մեքենայի օգտակար գործողության գործակիցը կազմում է ընդամենը 30-40%, իսկ մնացած ջերմությունն անօգուտ ցրվում է շրջապատում: Այս երևոյթի բացասական ազդեցությունը կլիմայի վրա շոշափելիորեն կարող է դրսնորվել միայն ապագայում:

Ներկայումս առավել մտահոգիչ է օրգանական հանած վառելիքով աշխատող ջերմաէլեկտրակայանների, փոխադրամիջոցների, արտադրական սարքերի կողմից արտանետվող թափոնների խնդիրը (նկ. 4.8):

Վառելիքի այրման ընթացքում մքնողորտ է արտանետվում հսկայական քանակությամբ ածխածնի (IV) օքսիդ, որը նպաստում է ջերմոցային երևույթի ուժեղացմանը:

Մքնողորտում մի քանի գազի կոնցենտրացիայի մեծացումը կարող է հանգեցնել գլոբալ տաքացման, այսպես կոչված՝ «ջերմոցային երևույթի»: Հիմնական «ջերմոցային գազերն» են ածխածնի (IV) օքսիդը և մեթանը:

Մեթանն առաջանում է օրգանական նյութերի անաէրոր (առանց թթվածնի) քայլայումից: Մեթանի պրացակներ առաջանում են ճահիճներում, որի պատճառով էլ ստացել է «ճահճագազ» անունը: Բրնձի դաշտերից անջատվում է մեծ քանակությամբ մեթան:

Մեթանի աղբյուր են նաև որոճող կաթնասունները՝ կովերը, ոչխարները, այծերը, որոնց մարսողական համակարգը հասուլ հարմարեցված է բուսական սնունքը մարսելու համար: Նյութափոխանակության վերջնական արդյունքը մեթանն է, որն անցնում է մքնողորտ: Դա բնական գործընթաց է, սակայն վերջին տարիներին կենդանիների թիվը կտրուկ աճել է, և մեթանը դուրս է մնացել բնական շրջանառությունից: Մեթանի քանակությունը կախված է նաև կերի որակից: Խոշոր եղերավոր անասունների կողմից մքնողորտում հայտնված մեթանը կազմում է նրա ընդհանուր քանակի մոտ 70 %-ը:

Վառելանյութի ոչ լրիվ այրումը հանգեցնում է ածխածնի (II) օքսիդի առաջացմանը, որը համարվում է ուժեղ ռույն: Ներքին այրման շարժիչներում մեկ տ քենդինի ոչ լիարժեք այրումից առաջանում է մոտ 0,5 տ CO: Սիաժամանակ առաջանում են բարդ կառուցվածքով ածխաջրածնային միացություններ, որոնցից շատերը քաղցկեղածին են:

Բնական վառելանյութերը սովորաբար պարունակում են ծծմբի օրգանական և անօրգանական բնույթի միացությունների խառնուկներ, որոնք այրվելիս առաջանում են ծծմբի (IV) օքսիդ: Ծծմբի (IV) օքսիդն անցնում է մքնողորտ և դառնում թթվային անձրևների պատճառ: Վառելիքն այրվում է բարձր ջերմաստիճանում: Այդ պայմաններում հնարավոր է դառնում



**Նկ. 4.8 Պինդ վառելիքի այրումից սպասվող մոխրի և փոշու արտանեկումը մքնողորտ**

մթնոլորտային ազոտի և թթվածնի փոխազդեցությունը, որի հետևանքով առաջանում են ազոտի թունավոր օքսիդներ:

Երկրի մթնոլորտի արդյունաբերական արտանետումների մոտ մեկ քառորդը տալիս են ջերմային էլեկտրակայանները, որոնց խողովակներով տարեկան արտանետվում է մոտ 5 միլիոն տ մոխիք, մոտ 7,5 միլիոն տ ծծմքի օքսիդ և մոտ 2,5 միլիոն տ ազոտի օքսիդներ (նկ. 4.9):

Եներգիայի արտադրման համար պահանջվում է ավելի քիչ մաքուր ջուր, քան արդյունաբերության մյուս ճյուղերի համար: Սակայն վառելիքի օգտագործումն ուղեկցվում է ջրամբարների վտանգավոր աղտոտմամբ: Ներկա ժամանակներում Հանաշխարհային օվկիանոսի 1/5 մասը ծածկված է նավթի թաղանթով, որն առաջացել է նավթ տեղափոխող նավերի վրարից, տարաների լվացումից, նավթի արտահոսքից:

Յանկացած վառելիքում առկա են չայրվող խառնուրդներ: Դրանցով հատկապես հարուստ են պինդ վառելանյութերը՝ ածուխը, այրվող թերթաքարերը, տորֆը: Այրումից ստացվող մոխիքը և փոշին շատ հաճախ արտանետվում է մթնոլորտ: Քարածխի և նավթամթերքների մոխիքը պարունակում է նկատելի քանակով ծանր մետաղների միացություններ, մասնավորապես՝ վանադիումի, նիկելի, և հաճախ՝ ուրանի:

Վերջին տարիներին ամբողջ աշխարհում կրճատվել է պինդ վառելանյութի օգտագործումը, որը որոշակի չափով նվազեցրել է Երկրի մակերևույթի աղտոտումը եներգետիկայի պինդ թափոններով:



Նկ. 4.9 Ջերմային էլեկտրակայան

## **Ավտոմոբիլային փոխադրամիջոցներ**

Տարեցտարի ավելանում է մարդկանց և բեռներ տեղափոխելու վրա ծախսվող էներգիան: Զարգացած երկրներում ավտոմոբիլային փոխադրամիջոցներին բաժին է ընկնում օգտագործվող էներգիայի 25 %-ը: Ավտոմոբիլների քանակի մեծացումը էապես ազդում է բնության վրա:

Ավտոմոբիլը 15 կմ տեղաշարժվելիս ծախսում է ավելի քան 4 կգ թթվածին և մթնոլորտ է արտանետում մոտ 200 նյութ, այդ թվում 3 կգ ածխածնի (IV) օքսիդ, 500 գ ածխածնի (II) օքսիդ, ինչպես նաև՝ ազոտի օքսիդներ, ածխաջրածններ և այլ վնասակար միացություններ:

Ավտոմոբիլային փոխադրամիջոցների արտանետումներն են ծխամազի առաջացման գլխավոր պատճառը:

Երկար ժամանակ որակի լավացման նպատակով բենզինին ավելացնում էին քառաէթիլկապար ( $C_2H_5)_4Pb$ : Վերջին տարիներին կապարի միացություններով Երկրի մակերևույթի աղտոտման վտանգն ստիպեց հրաժարվել էթիլացված բենզինի օգտագործումից: Ավտոմոբենաների շահագործումից Երկրի մակերևույթի վրա էլցվում մեծ քանակությամբ վառելիք և քայլուեր: Դրանց քանակները համարելի են այն նավթամթերքների հետ, որոնք նավթահանման կամ տեղափոխման լինթացքում լցվում են բնական ջրամբարները:


Ավտոմոբիլային փոխադրամիջոցներով շրջակա միջավայրի աղտոտման կանխումը ներկայացված է նկ. 4.10-ում:

Մեծ վտանգ են ներկայացնում քարածխային հանքերում պարբերաբար տեղի ունեցող պայթյունները: Հանքահորերից արտանետվող մեթանն օդի հետ առաջացնում է պայթյունավտանգ խառնուրդներ՝ կայծ և պայթյուն:

Օդագազային խառնուրդը պայթում է ոչ ցանկացած հարաբերության դեպքում: Այրվող գազի (ջրածին, մեթան և այլն) որոշակի սահմանից բարձր կամ ցածր արժեքների դեպքում այդ խառնուրդն անվտանգ է: Մեթանի պայթյունավտանգ խառնուրդների տիրույթը 4,5-14 %-ի սահմաններում է: Այդ խև պատճառով, եթե դուք զգացել եք զազի հոտ, դա դեռ չի նշանակում, որ անհապաղ կհաջորդի պայթյուն: Օդափոխելով սենյակը և փակելով գազի ծորակը՝ կարող եք ձեզ անվտանգ զգալ: Իրականում մեթանը հոտ չունի: Բայց, որպեսզի բնակելի տարածքներում դրա առկայությունն օդում զգացվի, ավելացնում են սուր հոտով միացություն՝ մեթիլմերկապտան՝  $CH_3SH$ , որի հոտն զգալի է արդեն  $2 \times 10^{-8}$  գ/մ<sup>3</sup> կոնցենտրացիայի դեպքում: Համեմատության համար նշենք, որ ամոնիակի զգայնության շեմը կազմում է  $2 \times 10^{-2}$  գ/մ<sup>3</sup>, իսկ ծծմբաջրածնինը՝  $1 \times 10^{-3}$  գ/մ<sup>3</sup>:

Քարածխային հանքերում արտանետվող գազերը պարունակում են ավելի մեծ քանակությամբ մեթան, քան պայթյունավտանգ

## Ավտոմոբիլային փոխադրամիջոցներ



**Նկ. 4.10 Ավտոմոբիլային փոխադրամիջոցներով շրջակա միջավայրի աղտոտման կանխումը**


Խառնուրդի վերին շեմն է, այդ իսկ պատճառով, դրանք անվտանգ են: Վտանգն առաջանում է, եթե հանք է մատակարարվում օդ, որպեսզի այնտեղ հանքափորները կարողանան աշխատել: Սակայն հանքերի օդափոխումը տնտեսական և տեխնիկական տեսակետից անիմաստ է և քանի արժեքը: Ինչպես հայտնի է, մարդու նորմալ շնչառության համար անհրաժեշտ է  $2\text{-}3 \text{ մ}^3/\text{ժ}$  կամ  $2\text{-}3 \text{ կգ}/\text{ժ}$  օդի քանակություն: Ավելի հեշտ է, էժան և անվտանգ սկաֆանդրի օգտագործումը:

Էներգետիկ խնդիրների լուծումը հնարավոր է իրականացնել երկու ճանապարհով:

**Առաջին նոր էներգիայի աղբյուրների հայրայրումն է,** որով հիմնականում զբաղվում է մարդկությունը: Անհմաստ է հույս դնել միայն այնպիսի էներգիայի աղբյուրների վրա, ինչպիսիք են՝ արևային, քամու, մակրոնբացության, տեղատվության և այլ աղբյուրները, որոնք ունեն շատ փոքր տեսակարար հզորություն: Եվ բնապահպանական տեսակետից դրանք ոչնչով առավել չեն: Հաշված է, որ, օրինակ, արևային էլեկտրակայանի կառուցման համար տասնյակ անգամ ավելի շատ ցեմենտ, պողպատ և այլ շինանյութեր են հարկավոր, քան նույն հզորության հիդրոէլեկտրակայանի կառուցման համար: Իսկ դրանց կառուցումը և՛ քանի է, և՛ բնապահպանության տեսակետից՝ ոչ մաքուր:

## **Երկրորդ կապված է Էներգիայի օգտագործման խնամքի հետ:**

Նկար 4.11-ում բերված են տարբեր նյութերի արտադրության լավագույն համաշխարհային տեխնոլոգիաների տվյալները: Դուք տեսնում եք Էներգիայի հսկայական խնամքի պահուստներ: Տեսական հաշվարկներով, նույն էներգիան ծախսելով՝ կարելի է նոտ հինգ



**Նկ. 4.11 Տարբեր նյութերի արտադրության լավագույն համաշխարհային տեխնոլոգիաների տվյալները**

և ավել անգամ մեծացնել արտադրության ծավալը: Վառելանյութի տնտեսումը, ի հաշիվ սպառման տեխնոլոգիաների բարելավման, միակ հեռանկարային ճանապարհն է:

### **❖ Հարցեր և վարժույթուններ**

1. Արդյոք ջրածինն էներգիապես մաքուր վառելանյութ է, եթե այն այրվում է օդում: Բացի ջրից, ի՞նչ նյութերի առաջցում է հնարավոր:
2. Էներգետիկ խնդիրների լուծումը հնարավոր է իրականացնել երկու ճանապարհով: Որո՞նք են այդ ճանապարհները:
3. Անվանեք այն նյութերը, որոնցով ավրովինսադրամիջոցներն աղբուրում են:

  - ա) մքնոլորդը,
  - բ) բնական գրեթը,
  - զ) Երկրի մակերևույթը

4. Ավրովինսադրամիջոցների արդանելումներում պարունակվող  $n^{\circ}$  նյութերն են առաջացնում ծխամա:
5. Գրեթե ավրումներնաների շարժիչներում վառելիքի ( $C_8H_{18}$ ) այրման ռեակցիաների հավասարումները:  
ա)  $CO_2$ -ի առաջացմամբ,      բ)  $CO$ -ի առաջացմամբ:

## 4.8 ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՅԼՇՏՐՈՒԹՎԱՅԻՆ ՍՊՔՅՈՒՐՆԵՐԸ

Ածխաջրածիններն ունեն շատ կարևոր գիտագործնական նշանակություն: Այդ նյութերի կառուցվածքի և հատկությունների մասին պատկերացումները հիմք են օրգանական միացությունների մյուս դասերի ուսումնաժրման համար, քանի որ ցանկացած օրգանական նյութի նոյենու ածխաջրածնային կառուցահատված է պարունակում: Ածխաջրածինների հատկությունների իմացությունը բույլ է տալիս հասկանալ այդ միացությունների բացառիկ արժեքը որպես սկզբնանյութ՝ մարդու կողմից օգտագործվող ամենատարբեր օրգանական նյութերի սինթեզի համար:

Ածխաջրածինները պարունակում են երկրի կեղևում՝ նավթի, քարածիսի և գորշ ածուխի, բնական և նավթին ուղեկցող գազերի, թերթաքարերի և տորֆի կազմում: Այդ օգտակար հանածոնների պաշարները Երկիր նոլորակի վրա անսահման չեն: Սակայն դրանք՝ որպես վառելանյութ, ծախսվում են ներքին այրման շարժիչներում, ջերմային էլեկտրակայաններում, կաթսայատներում, կենցաղում և շատ քիչ մասն է օգտագործվում որպես քիմիական արդյունաբերության հումք: Այսպես՝ արդյունահանված նավթի մինչև 85 %-ը ծախսվում է վառելիք և քայլուղեր ստանալու համար և միայն մոտ 15 %-ը օգտագործվում է որպես քիմիական հումք: Այդ պատճառով գլխավոր խնդիրը համարվում է էներգիայի այլընտրանքային աղբյուրների փնտրումը և վերամշակումը, որոնք բույլ կտան ավելի ռացիոնալ օգտագործել ածխաջրածնային հումքը:

Այժմ համաշխարհային էներգետիկան հիմնվում է ածխի, նավթի վրա և փոքր չափով՝ հիդրոէներգիայի վրա: Սակայն ածխի և նավթի պաշարները, թերևս, մեծ են, բայց անսահման չեն: Ի դեպ, ոչ բոլոր երկրներն են դրանով հարուստ: Սպագայում՝ նույնիսկ ոչ շատ հեռավոր, մարդկությունը լրջորեն կզբաղվի էներգիայի աղբյուրների լուծման հիմնախնդրով: Բացի այրվող օգտակար հանածոններից, գոյություն ունեն էներգիայի մի շարք այլ աղբյուրներ՝ վերևսից հոսող ջուրը, քամին, մակընթացությունները, տաք ստորերկրյա ջրերը, արեգակնային լույսը: Սակայն դրանց ներդրումն արտադրվող և օգտագործվող էներգիայի ընդհանուր քանակում աննշան է:

Իհարկե, կարելի է օգտագործել, այսպես կոչված, դեղին ածուխը՝ արեգակնային ճառագայթների անսպառ էներգիան: Հայտնի է, որ Երկրի մակերևույթի մեկ քառակուսի կիլոմետրի վրա միջին հաշվով Արեգակը սփռում է մոտ 1 մլն կՎտ հզորությամբ ճառագայթների հոսք: Թիվով մոտավոր է, քանի որ այն կախված է տեղանքի աշխարհագրական դիրքից, տարվա և օրվա ժամանակից, մթնոլորտի

վիճակից՝ պարզ երկինք և ամպամածություն: Ինժեներները կարող են լույսը և ջերմությունը վերածել էլեկտրականության: ստեղծվել են ջերմա- և լուսանուցիչներ 7-10% ՕԳԳ-ով: Եթե ՕԳԳ-ը հասցվի մինչև 30-40% և ցամաքի մինչև 5 %-ը ծածկվի ֆոտոէլեկտրական թաղանթով, ապա կստացվի տասնյակ հազարավոր անգամ ավելի շատ էներգիա, քան այն, ինչ այժմ արտադրվում է ամբողջ աշխարհում, 1000 անգամ ավելի շատ, քան անհրաժեշտ է նարդուն ֆիզիկական ծանր աշխատանքից ազատելու համար:

Էներգիայի երկրորդ՝ հեռանկարային և շատ շուայլ աղբյուրը ստորերկրյա ջերմությունն է: Մեր մոլորակի ընդերքում ջերմաստիճանը 1000°C է և ավելի բարձր: Մենք ձեզ հետ ապրում ենք, կարծես թե, հսկա վառարանի՝ մոլորակի երեսվածքի վրա: Իսկ ինչպես երեսվածքի տակից հանել խոր ընկած տաքությունը: Հնարավորությունն առայժմ բնական ճեղքերի օգտագործումն է, որտեղից այդ տաքությունը դուրս է գալիս ինքն իրեն՝ հեյզերներ, ստորերկրյա տաք ջրեր, տաք գոլորշիներ: Սակայն տեխնիկայի համար դրանց ջերմաստիճանը ցածր է: Գուցե հնարավոր է օգտագործել հրաբուխները՝ այդ բնական օդանցքները, որոնք ժայթքում են հալված քարերի «գետերի»նման: Սակայն հրաբուխները հանդիպում են ոչ ամենուրեք, մոլորակի միայն առանձին, երբեմն սակավաբնակ շրջաններում: Իսկ ստորերկրյա ջերմությունն ամեն տեղ կա: Յանկացած տեղում 30 կիլոմետրանոց հորանցք հորատելով՝ կարելի է հասնել պատրաստի բնական կարսայատան, կարելի է դնել շոգետուրքին կամ ջերմությունը հավաքել ջերմաէլեմենտներով:

Եվ վերջապես, նարդկության ունեցած ամենաշոայլ աղբյուրներից երրորդը սպիրական ջուրն է: Այն կազմված է ջրածնից և թթվածնից, իսկ ջրածնի մեջ յուրաքանչյուր 6800 ատոմին բաժին է ընկնում մեկ ատոմ ծանր ջրածնի՝ դեյտերիում, իսկ 1 գ դեյտերիումը հելիումի վերածելով, կարող է տալ այնքան էներգիա, որքան տալիս է 10 տ ածուխը: Ոչ մեծ ջրամբարի՝ ջրից հանված ջերմամիջուկային էներգիան հավասարաթեր է ներկայումս արդյունահանված ողջ ածխին: Սակայն առայժմ այդ հրապուրից գանձը մեր ձեռքը չի ընկնում: Ջերմամիջուկային ռեակցիաներն ընթանում են տասնյակ և հարյուր միլիոնավոր աստիճան ջերմաստիճանում. ցանկացած վառարան այդպիսի տաքությունից վերածվում է գոլորշու:

«Վառարանը գոլորշիացնող» կրակը՝ այդ դժվար հիմնախնդիրը կանգնած է ջերմամիջուկագետ կոնստրուկտորների առջև: Գիտնականներն առաջարկել են միջուկային կաթայի պատերը շրջափակել մագնիսական դաշտով:

Այսպես թե այնպես, արդեն կարելի է երազել, որ համեմատաբար մոտ ժամանակներում ջրից հանված էլեկտրական էներգիան մուտք կգործի մեր տները, դաշտերն ու գործարանները: Այդ ժամանակ

Էներգիան կրավականացնի բոլորին՝ ջուրը քաղցրահամ դարձնելու և քիմիական սինթեզի համար, ջերմոցների ու հողի տաքացման համար:

### **Միջուկային էներգետիկա**

Արեգակը, ինչպես նաև բոլոր աստղերը, լոյս են ճառագում ի հաշիվ դրանցում ընթացող միջուկային ռեակցիաների: Տիրապետելով աստղային միջուկների գաղտնիքներին՝ մարդիկ ստացան էներգիայի առյուր՝ արեգակնային ճառագայթումից անվախ: Ուստի այս տարրերի աստղների միջուկների ճեղքումից անջատվում է հսկայական չափով էներգիա, որը կարելի է փոխարկել էլեկտրականի: Ասումային էլեկտրակայաններում առկա գործընթացների հիմքում ընկած է, այսպես կոչված, «դանդաղ նեյտրոններով» ուրանի միջուկի տրոհումը: Այն արդեն իրականացվում է մի շարք զարգացած երկրներում, ինչպես նաև՝ Հայաստանում (նկ. 4.12): Մոտակա ժամանակներում Մեծամորում կառուցվելու է նոր խոշոր աստղակայան՝ 1200 ՄՎտ հզորությամբ: Նման էլեկտրակայաններում որպես հումք օգտագործվում է  $^{235}\text{U}$  իզոտոպով հարստացված բնական ուրան:



**Նկ. 4.12 Մեծամորի ԱԷԿ**

գավոր: 1986թ. Չերնոբիլի ԱԷԿ-ում միջուկային ռեակցիան դրվագ եկավ վերահսկումից և պատճառ դարձավ մեծ թվով մարդկային զոհերի, մեծ վնաս պատճառեց մարդկանց առողջությանն ու տնտեսությանը Ռուսականացում, Բելոռուսիայում և Ուստաստանում: Սենք ականատես եղանք նաև Շապոնիայում Ֆոկուսիմայի ԱԷԿ-ի վթարին, որի պատճառած վնասներն արդեն իսկ երևում են (ծնվել են անոնմալ զարգացած ճագարներ):

Մեծ էներգետիկայի հեռանկարը, իհարկե, առաջին հերթին կապվում է միջուկային և ջերմամիջուկային էներգիաների օգտագործման հետ: Սակայն էներգիայի ստացման այս առատ ալբյուրի հետ է առնչվում երկրագնդի տաքացման խնդիրը: Որպեսզի չսահստվի մոլորակի ջերմային հավասարակշռությունը, ջերմամիջուկային էներգիայի արտադրությունը չպետք է գերազանցի արևից ստացվող ջերմության 5 %-ը:

Այնուամենայնիվ, մարդկությունը չի կարող շրջանցել միջուկային էներգիայի օգտագործումը:

### **Չրածնային էներգետիկա**

Որպեսզի կրաստվի արժեքավոր հումքի օգտագործումը, նավթամթերքներ օգտագործողներն աստիճանաբար անցնում են այլընտրանքային վառելանյութի:

Վերջին տարիներին էներգետիկների ուշադրությունը բևեռվել է ջրածնի վրա: Չրածնային վառելիքն էկոլոգիապես անվտանգ է. այրելիս միայն ջուր է առաջանում.



Չրածնի այրման ջերմությունը, մեկ կգ նյութի հաշվարկով, մի քանի անգամ մեծ է ցանկացած այլ վառելանյութի այրման ջերմությունից: Մյուս կողմից, եթե ջրածնի համար՝ որպես հումք, դիտարկենք ջուրը, ապա կհասկանանք, որ ջրածնի պաշարները Երկրի վրա անսպաս են:

Չրածնի զագր բունավոր չէ և օժտված է մեծ ջերմատվությամբ: Չրածնի մեկ գրամի այրումից ստացվում է 120 կՋ ջերմություն, մինչդեռ նույն քանակի բենզինից՝ 46 կՋ: Ըստ որում՝ մթնոլորտն աղտոտող վնասակար նյութ չի առաջանում, որն անխուսափելի է վառելիքի ցանկացած այլ տեսակի պարագայում: Միակ վերջանյութը ջուրն է, ուստի, ջրածնն էկոլոգիապես մաքուր և իդեալական վառելանյութ է: Ինչն է, սակայն խանգարում ջրածնի՝ որպես մաքուր վառելիքի, ավելի լայն կիրառությանը: Գլխավոր խոշընդոտը, վառելիքի մյուս տեսակների համեմատությամբ, ջրածնի բարձր ինքնարժեքն է՝ պայմանավորված այդ յութի ստացման դժվարությամբ:

### **Կենսագույն էներգետիկա**

Երկար տարիներ կարծում էին, որ բնական զագի, նավթի և ածխի պաշարները Երկրի վրա բավարար քանակությամբ են, և այլընտրանքային էներգիայի աղբյուրներ փնտրելու կարիք չկա: Կենսաէներգետիկայի և այլընտրանքային էներգիայի այլ աղբյուրների որոնումն արժևորվում էին որպես հետաքրքրասեր գիտնականների զբաղմունք: Սակայն XXI-րդ դարի սկզբում, այնուամենայնիվ, այդ բնագավառը գրավիչ դարձավ բիզնեսի համար, և այսօր արդեն էլեկտրաէներգիայի արտադրությունը վերականգնված պաշարների (ուսուր) օգտագործմամբ համարվում է հեռանկարային և արագ զարգանում է: Մասնավորապես պարզվեց, որ կենսագույն ստացման սարքավորումները բավականին շահավետ են ինչպես խնայողության, այնպես էլ էկոլոգիայի տեսանկյունից: Կենսագույն

ստացվում է օրգանական միացությունների խմբումից և Էներգիայի անվճառ աղբյուր է բնության ու մարդու համար: Հատկապես կենագագի ստացումն ու Էներգիայի հետագա արտադրությունը, ինչպես նաև ջերմության ստացումը, համարվում են հիմնական խնդիրները.

### օրգանական թափոններ → կենսագազ → Էներգիա → ջերմություն

Եթե ձեռնարկության աշխատանքի ընթացքում ստացվում են մեծ քանակով օրգանական թափոններ, ապա դրանք օգտագործվում են կենսագագի ստացման համար, որը զարգեներատորային էլեկտրակայաններում փոխարկվում է Էներգիայի, ապա՝ ջերմության:

Գործարանն աշխատում է առանց թափոնների և սեփական Էներգիայի հաշվին: Այս եղանակն առավել հեռանկարային է, քանի որ, որպես սկզբնաղբյուր, հնարավոր է նաև կենցաղային աղբի օգտագործումը: Կենցաղային աղբը պարունակում է մինչև 50% օրգանական նյութեր: Հեռանկարային է բոլոր ածխածին պարունակող թափոնների (որոնք այժմ աղտոտում են Երկրի մակերևույթը) վերամշակումից վառելիքի տարբեր տեսակների ստացումը:

### ▣ Գիտե՞ք արդյոք

XIX դարի վերջում սկսելով են ջերմային շարժիչներ, որոնցում օգլագործվել է ջրածնի այրման էներգիան: 1920թ. ջրածնն օգլագործվել է ներքին այրման շարժիչներում: 1928թ. այդպիսի շարժիչ գեղադրվել է դիրիժարլաների վրա: Երկրորդ աշխարհամարտի վարիժներն շրջափակված Լենինգրադում ջրածննը որպես վառելամյուր օգլագործվել է ավտոմեքենաների շարժիչներում, որոնց օգնությամբ բարձրացրել և իջեցրել են ուսումնական օդապարիկները: Երկար տարիներ ջրածնային շարժիչները մոռացվեցին և միայն մեր ժամանակներում, երբ մքննուրսի գլոբալ աղբուբումն իրական սպառնալիք է, գիրնականները կրկին վերադարձել են ջրածնային շարժիչների գաղափարին:

### ❖ Հարցեր և վարժություններ

1. Ի՞նչ գործոններ են հարկադրում մարդկանց այլ լնարանքային վառելամյուր վնասինելու:
2. Միջուկային էներգետիկայում ինչի՞ն հաշվին է ստացվում էլեկտրական էներգիան:

3. Հայաստանի ԱԷԿ-ում ո՞ր միջուկային ռեակցիան է դրված էլեկտրական էներգիայի սրացման հիմքում: Փորձեք զրել այդ ռեակցիայի հավասարությունը:
  4. Ի՞նչ առավելություններ և բերություններ ունի միջուկային էներգետիկան ջերմային նկատմամբ:
  5. Ինչո՞վ է բացարրվում ջրածնային էներգետիկայի հեռանկարային լինելը:
  6. Միավոր զանգվածի վրա հաշվե՛ք և համեմատե՛ք մեթանի և ջրածնի այրման ջերմությունները:
  7. Ինչո՞ւ մինչև հիմա ջրածնային էներգետիկան լայն կիրառություն չի գրնում:
  8. Օրգանական քաղուններից ինչպե՞ս է սրացվում էլեկտրական էներգիա:
  9. Ո՞ր այլրնգրանքային մեթոդն է և՝ գլուխապես շահավետ, և անվճառ:
- ա) ջրածնային  
 բ) միջուկային  
 գ) օրգանական քաղունների խմորման  
 դ) արևային:

## 4.9 ՍՊԻՐՏՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՎԱՐԵԼԻՔ

Գոյություն ունեն մեծ թվով օրգանական միացություններ, որոնց մոլեկուլի կազմում ածխածնից ու ջրածնից բացի, նտնօւմ են նաև թթվածնի ատոմներ: Թթվածնի ատոմները պարունակվում են տարբեր ֆունկցիոնալ խմբերում:

**Ֆունկցիոնալ խումբ է անվանվում միացություններին բնորոշ քիմիական հավելությունները պայմանավորող արոմատիկ խումբը, որը որոշում է միացության պարկանելիությունը որոշակի դասի:**

Հիդրօքսիլային OH ֆունկցիոնալ խումբ պարունակող միացությունները պատկանում են սպիրտների դասին: Կախված հիդրօքսիլային խմբերի թվից՝ լինում են միատոմ, երկատոմ, եռատոմ և բազմատոմ սպիրտներ:

Կախված ածխաջրածնային ռադիկալի բնույթից՝  $\text{OH}$  ֆունկցիոնալ խումբ պարունակող միացությունները քաժանվում են երկու մեծ խմբի՝ **սպիրալներ՝  $R-OH$ , ֆենոլներ՝  $Ar-OH$** , որտեղ  $R$ -ը ալկիլ ռադիկալ է, օրինակ՝ մեթիլ ( $\text{CH}_3-$ ), իսկ  $Ar$ -ը՝ արոմատիկ է, օրինակ՝ ֆենիլ ( $\text{C}_6\text{H}_5-$ ):

### Միագում պարզագույն սպիրալներ

Պարզագույն սպիրալներ		
Անվանումը	Բանաձևը	Մոդելը
Մեթիլ սպիրալ (մեթանոլ)	$\text{CH}_3\text{-OH}$	
Եթիլ սպիրալ (եթանոլ)	$\text{CH}_3\text{CH}_2\text{-OH}$	

Մեթանոլը և եթանոլն այրվում են կապտավուն, հազիվ նկատելի բոցով՝ անջատելով մեծ քանակությամբ ջերմություն.



Մեթանոլը և եթանոլը համարվում են ներքին այրման շարժիչների համար առավել հեռանկարային այլընտրանքային վառելանյութեր, որոնք էլեկտրոֆիզալիք մաքուր են: Այրումից ստացվում են ջուր և ածխածնի (IV) օքսիդ, որոնք բունափոր չեն և չեն աղտոտում մթնոլորտը: Մեթանոլը և եթանոլն ունեն բարձր օկտանային թիվ և կարող են օգտագործվել ավտոմեքենաների շարժիչներում՝ մաքուր ծևով կամ բենզինի հետ խառնված: Էթանոլը՝ որպես վառելանյութ, օգտագործվում է նաև լարորատորիաներում՝ սպիրտայրոցներում:

Էթանոլի գլխավոր առավելությունը ստացման մեթոդի պարզությունն է: Ստացման եղանակներից մեկի հումքը փայտանյութն է՝ փայտի թեփը, որը փայտամշակման արդյունարերության բափոն է համարվում: Ծծմբական թքի ներկայությամբ բջջանյութը հիդրոլիզվում է՝ փոխարկվելով գլուկոզի.



Ստացված գլյուկոզը միկրոօքանիզմների ազդեցությամբ ենթարկվում է սպիրտային խմորման.




Փայտանյութի պաշարներն արագ վերականգնվում են ծառերի աճի հաշվին:


## Գիտե՞ք արդյոք

Մեկ գուննաւ չոր փայլից կարելի է սրանալ 150 կը էքանոլ:

Սեծ քանակությամբ էքանոլ են ստանում էքիլենի հիդրատացումից: Ուժակցիան իրականացվում է 70-80 մթն ճնշման, 280-300°C ջերմաստիճանի և ֆուֆորական թթվի կատալիտիկ ազդեցության պայմաններում.




Սեթանոլը թունավոր է (մահացու չափաբաժինը 30 գ է), այնուամենայնիվ, այն ստանում են հսկայական քանակներով սինթեզ գաղց՝ ածխածնի (II) օրսիդի և ջրածնի խառնուրդից՝ ցինկ-քրոմային կատալիզատորի առկայությամբ, 300 °C ջերմաստիճանի և բարձր ճնշման պայմաններում.



Սինթեզ գազի ստացման համար հումք կարող է ծառայել ցանկացած ածխածին պարունակող միացություն՝ բնական գազ, նավթային մնացորդներ, ածուխ: Սեթանոլն օգտագործվում է մեծ թվով այլ օրգանական նյութերի սինթեզի համար, սակայն շատ հաճախ այն օգտագործվում է որպես բենզինի հավելուկ և որպես վառելանյոթ՝ նավթային հումքը խնայելու նպատակով:

### Հարցեր և վարժություններ

1. Ո՞ր սպիրտի ջերմագվությունն է առավել բարձր՝ մեթանոլի՝, թե՞ էքանոլի: Պարասախանը հասկապե՞ք հաշվարկով:
2. Բենզինի (օլյուս) և մեթանոլի խառնուրդը պարուսապել է 1:1 մոլային հարաբերությամբ: Այդ խառնուրդում հաշվեք մեթանոլի զանգվածային բաժինը (%):
3. Օղին էքիլ սպիրտի 40 %-անց ջրային լուծույթ է: Որքա՞ն ջերմություն կարանա մարդու օրգանիզմը, եթե նա ընդունի 50 գ օդի: Ենթադրեք, որ օղին լարդում օրիդանում է մինչև վերջ:
5. Ո՞ր նյութի գնդաչողային մոդելն է ներկայացված:



- ա) մեթանոլ      բ) էքանալ  
գ) էքանոլ      դ) պրոպանոլ



**Յուրի Յովսեյի Հովհաննեսյան (1933):** Ուսասալանի ազգային ակադեմիայի (ՌԱՍ) ակադեմիկոս, Դուռը այս միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի միջուկային ռեակցիաների լաբորատորիայի գիրական ղեկավար: ՀՀ ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ է և ԵՊՀ պատվավոր դոկտոր:

Գիրնականների խումբը, ակադեմիկոս Յու Հովհաննեսյանի ղեկավարությամբ, սինթեզել է 6 ծանր մետաղ, այդ թվում՝ 107-րդ քիմիական բարրը՝ բորիում: 1982թ. և 1986թ. Յու Հովհաննեսյանի ղեկավարած լաբորատորիայում սինթեզել են Սենդելենի աղյուսակի 114 և 116 բարրերը: 2009թ. հուլիսից մինչև 2010թ. գիրնականների խումբը սինթեզել է 117-րդ գերծանը բարրը, որը ըստ Յու Հովհաննեսյանի, հնարավոր է, որ անվանվի «ԱՐՄԵՆԻՈՒՄ»:



**Կերպիկ Մակարի Թառոյան (1905-1985):** Գիրական հետազոտությունները վերաբերում են անալիզի մերկուրունիցիուրիկ և ֆուրունիցիրիկ եղանակների մշակմանը: Ավարտել է Թքիլիսի պետական համալսարանը (1929): ԵՊՀ-ի կենտրոնական լաբորատորիայի վարիչ, ԵՊՀ ամբիոնի վարիչ (1938-1942, 1946-1954, 1962-1977): Ք.դ. (1954), պրոֆեսոր (1956): ՀԱՀ բղբակից անդամ (1956): ՀԽՍՀ գիրության վասրակավոր գործիչ (1961): Պարգևաբարվել է «Պատվո նշան» շքանշանով:



**Լորի Ալեքսանդրի Ռուբինյան (1879-1964):** Հայաստանում բարձրագույն քիմիական կրթության հիմնադիրներից է: Գիրական հետազոտությունները սկզբնական շրջանում վերաբերել է առանձին միացությունների ֆիզիկաքիմիական հավելությունների ուսումնասիրություններին: Հետազայում հետազոտություններն ընթացել են հետերոգեն հավասարակշռության բնագավառում, ուսումնասիրել է կրկնակի դիսպերսիա համակարգերի հավելություն-բաղադրություն դիագրամները:

1921թ. Ռուբինյանը կազմել է Հայաստանում քիմիական և էլեկտրաքիմիական արդյունաբերության զարգացման ծրագիր: 1923թ. L. Ռուբինյանը նշանակվել է Երևանի համալսարանի վերլուծական ու ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչ: Քիմիական գիրությունների դոկտոր (1948, առանց պաշտպանության), պրոֆեսոր (1949), Հայաստանի ՍՍՀ գիրության և գեներալիկայի վասրակավոր գործիչ (1961):

## ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

### Աղնիվ գազեր

VIII խմբի գլխավոր ենթախմբի տարրեր (He, Ne, Ar, Kr, Xe, Rn)

### Աղնիվ մետաղներ

Աս, Ag, Pt և պլատինային շարքի մետաղներ

### Ալղեհիդային խումբ

ֆունկցիոնալ խումբ H- CHO

### Ալղեհիդներ

մոլեկուլում ալղեհիդային ֆունկցիոնալ խումբ պարունակող օրգանական միացությունների դաս

### Ալկաղիններ

$C_nH_{2n-2}$  ընդհանուր բանաձևով չհագեցած ածխաջրածիններ, որոնց մոլեկուլում առկա են երկու կրկնակի կապ

### Ալկաղիններ (կամ հագեցած ածխաջրածիններ)

$C_nH_{2n+2}$  ընդհանուր բանաձևով ածխաջրածիններ, որոնց մոլեկուլում միայն միակի կամ հասարակ կովալենտային կապեր են պարունակվում

### Ալկեններ (կամ էրիլենային ածխաջրածիններ)

$C_nH_{2n}$  ընդհանուր բանաձևով չհագեցած ածխաջրածիններ, որոնց մոլեկուլում առկա է մեկ կրկնակի կապ

### Ալկիններ (կամ ացետիլենային ածխաջրածիններ)

$C_nH_{2n-2}$  ընդհանուր բանաձևով չհագեցած ածխաջրածիններ, որոնց մոլեկուլում առկա է մեկ եռակի կապ

### Ալյումափիլկատներ

բնական և արհեստական սիլիկատներ, որոնց բարդ անիոնը ալյումին և սիլիցիում տարրեր է պարունակում

### Ածխաջրածիններ

օրգանական պարզագույն միացություններ, որոնց մոլեկուլը կազմված է ածխածին և ջրածին տարրերից

### Աղաքրու

քլորաջրածնի ջրային լուծույթ

### Աղեր

- բարդ նյութեր, որոնց մոլեկուլը կազմված է մետաղի ատոմից և թթվածին մնացորդից

- էլեկտրոլիտներ, որոնք դիտում են առաջացնում են մետաղի կամ  $(NH_4)^+$  կատիոններ և թթվային մնացորդի անիոններ

### Աղի հիդրոխիզ

աղի ու ջրի մոլեկուլների միջև ընթացող իոնափոխանակման ռեակցիա, որի հետևանքով միջավայրում փոխվում են  $H^+$  կամ  $(OH)^-$  իոնների քանակները՝ թույլ էլեկտրոլիտի առաջացման ճանապարհով

### Ամինային խումբ

ֆունկցիոնալ խումբ -  $NH_2$

## **Ամինաթթուներ**

մոլեկուլում ամինային և կարբօքսիլային ֆունկցիոնալ խմբեր պարունակող օրգանական միացությունների դաս

## **Այրում**

ջերմության և լուսի անջատմամբ ուղեկցվող օքսիդացման ռեակցիա

## **Անին**

դեպի անողը ձգվող, բացասական լիցքավորված իոն

## **Արոմատիկ պարզագույն միացություններ**

մոլեկուլում թենգուային օղակ պարունակող ածխաջրածիններ և դրանց ածանցյալներ

## **Ատոմ**

նյութի փոքրագույն, քիմիապես անբաժանելի մասնիկ

## **Ատոմային զանգված**

մեկ ատոմի զանգվածն՝ արտահայտված ածխածնային միավորներով (ածխածնային միավորը կամ զանգվածի ատոմային միավորը ածխածնի ատոմի զանգվածի  $1/12$  մասն է և հավասար է  $1,66 \cdot 10^{-24}$ գ)

## **Ատոմային համար**

տարրի կարգարիվ պարբերական աղյուսակում կամ պրոտոնների թիվ ատոմի միջուկում

## **Ատոմային բյուրեղացանց**

պինդ նյութ, որի բյուրեղացանցի հանգույցներում գտնվում են միմյանց հետ կովալենտային կապով կապված ատոմներ

## **Ացետատ իոն**



## **Ավոգադրոյի օրենք**

տարրեր իդեալական գազերի հավասար ծավալներում միատեսակ ջերմաստիճանի և ճնշման պայմաններում պարունակում են նույն քովզ մոլեկուլներ

**Ավոգադրոյի հաստատուն** ( $N_A$ , կարևորագույն հիմնարար ֆիզիկական հաստատուն)

մասնիկների (ատոմ, մոլեկոլ, իոն) թիվն է մեկ մոլ նյութում և հավասար է  $6,0220 \cdot 10^{23}$  մոլ<sup>-1</sup>

## **Բետա (b) մասնիկներ**

էլեկտրոններ, որոնք առաքվում են ռադիոակտիվ տրոհման ընթացքում

## **Բոցավառման ջերմաստիճան**

որոշակի ջերմաստիճան, որն անհրաժեշտ է տվյալ նյութի այրումն սկսելու համար

## **Գազային վիճակ**

վիճակ, որում նյութը չունի ո՞չ իր ձևը, ո՞չ ծավալը

## **Գազի խտություն (r)**

գազի մոլային զանգվածի (M) և մոլային ծավալի ( $V_m$ ) հարաբերությունն է

## **Գազի հարաբերական խտություն**

ցույց է տալիս, թե միատեսակ պայմաններում մի գազը քանի անգամ է մյուսից ծանր (կամ քերև)

## **Գամմա ճառագայթներ**

բարձր էներգիայով օժտված էլեկտրամագնիսական ճառագայթում, որոնք առաջվում են ռադիոակտիվ տրոհման ընթացքում

## **Դեկիդրման ռեակցիաներ**

օրգանական մոլեկուլի ջրածնազրկում, որը, բարձր ջերմաստիճանային կատալիտիկ բարդ, դարձելի գործընթաց է

## **Դեղին ածուխ**

արեգակնային ճառագայթների անսպառ Էներգիա

## **Դեյտերիում**

ջրածնի ծանր իզոտոպը

## **Դիսցման աստիճան (α)**

իոնների տրոհված մոլեկուլների թվի (n) հարաբերություն լուծված մոլեկուլների ընդհանուր թվին (N)

## **Զանգվածային բաժին (ω)**

- տվյալ նյութի զանգվածի հարաբերություն ամբողջ համակարգի զանգվածին
- լուծված նյութի զանգվածի՝ m (ն-թ) հարաբերությունն է լուծույթի զանգվածին՝ m (լ-թ)

## **Էլեկտրոդներ**

թիթեներ գրաֆիտից, մետաղից կամ այլ հաղորդչից, որոնք ծառայում են էլեկտրոլիտի լուծույթը կամ հալույթը արտաքին էլեկտրական շղային միացնելու համար

## **Էլեկտրոլիզ**

էլեկտրական հոսանքով նյութի քայլայումը լուծույթում կամ հալույթում

## **Էլեկտրոլիտներ**

որոնց ջրային լուծույթներն ու հալույթներն էլեկտրական հոսանքի հաղորդիչներ են

## **Էլեկտրոլիտային դիսցում**

էլեկտրոլիտի արոհումն իոնների այն ջրում լուծելիս կամ հալելիս

## **Էլեկտրոլիտներ ուժեղ**

որոնք ջրում լուծվելիս գրեթե լրիվ դիսցում են իոնների

## **Էլեկտրոլիտներ բույլ**

որոնք ջրում լուծվելիս քիչ են տրոհվում իոնների

## **Էլեկտրոն**

բացասական լիցքավորված մասնիկ, որը մտնում է ատոմի կազմի մեջ

## **Թթուներ**

- բարդ նյութեր, որոնց մոլեկուլը պարունակում է մետաղի ատոմով տեղակալվելու ընդունակ ջրածնի ատոմներ

- էլեկտրոլիտներ, որոնց դիսցումից ստացվում են ջրածնի կատիոններ ու թթվային մնացորդի անհոններ

## **Իոնափոխանակային ռեակցիաներ**

էլեկտրոլիտների լուծույթներում իոնների միջև ընթացող քիմիական ռեակցիաներ, որոնց ընթացքում իոնների լիցքերի փոփոխություն տեղի չի ունենում

## **Իզոմերիա**

Առյուն մոլային զանգվածով և միատեսակ քաղադրությամբ տարբեր նյութերի գոյության հնարավորություն

### **Լիտր**

ծավալի միավոր, 1 դմ<sup>3</sup>, մեկ կիլոգրամ ջրի զքաղեցրած ծավալը 0 °C

### **Լուծելիություն**

տվյալ ջերմաստիճանում հագեցած լուծույթ առաջացրած նյութի զանգվածի՝ m(ն-թ), հարաբերությունը լուծիչի զանգվածի՝ m(լ-չ), կամ ծավալին V(լ-չ)

### **Լուծելիության կորեք**

ջերմաստիճանից լուծելիության կախվածության գրաֆիկական պատկերում

### **Լուծույթ**

լուծիչի ու լուծվող նյութի համասեռ խառնուրդ կամ

ֆիզիկաքիմիական միատարր համակարգ՝ լուծիչի և լուծվող նյութի մասնիկներից ու դրանց փոխազդեցության արգասիքներից կազմված

### **Լուծույթ խիտ**

պարունակում է լուծված նյութի համեմատաբար մեծ քանակություն՝ այնպես, որ լուծիչի և լուծվող նյութի քանակությունները համաչափելի են

### **Լուծույթ հագեցած**

որում լուծվող նյութի նոր բաժիններ տվյալ պայմաններում այլևս չեն լուծվում

### **Լուծույթ նոսր**

պարունակում է լուծված նյութի համեմատաբար փոքր քանակություն՝ այնպես, որ լուծիչի և լուծվող նյութի քանակությունները անհամաչափելի են

### **Լուծույթ շիազեցած**

որում տվյալ պայմաններում հնարավոր է լուծվող նյութի նոր բաժիններ լուծել

### **Խառնուրդ**

նյութերի համակցություն, որում յուրաքնչյուր նյութ պահպանում է իր անհատականությունը

### **Կատիոն**

դեպի կարող ձգվող, դրական լիցքավորված իոն

### **Կառչուկ**

1,3-դիենային ածխաջրածինների պոլիմերացման ռեակցիայի արգասիք

### **Հալոգեններ** (աղածիններ)

ընդհանուր անվանմամբ միավորված պարբերական համակարգի VIIA խմբի տարրեր

### **Համամոլորակային հիմնախնդիրներ**

որոնք իրենց էությամբ շոշափում են ամբողջ մարդկության շահերը և աշխարհի բոլոր հիմնական տարածաշրջաններում հանդես են զալիս որպես հասարակության զարգացման գործոններ

## **Համաշխարհային օվկիանոս**

Խողագնդի 3/4-ը ծածկող, անընդհատ ու ամբողջական ջրային տարածք  
**Հայտանյութեր՝ բրվակիմնային**

Այութեր, որոնք  $H^+$  և  $(OH)^-$  իոնների ներկայությամբ փոխում են իրենց գույնը  
**Հանրային յուղեր**

նավթից ստացվող յուղանման թորամասեր

## **Հանրային ջուր**

բնական ջուր, որի մեկ լիտրում լուծված աղերի պարունակությունը մեկ գրամից ավելի է

## **Հիդրատներ**

ջրային լուծույթներում գոյություն ունեցող, ջրի հետ նյութի առաջացրած, փոփոխական քաղաքությամբ, միացություններ

## **Հիդրօման ռեակցիա**

ջրածնի միացում չհազեցած կապին, որն ընթանում է կատալիզատորի ներկայությամբ և բարձր ջերմաստիճանում

## **Հիմքեր**

- քարդ նյութեր, որոնց մոլեկուլը կազմված է մետաղի ատոմներից և մեկ կամ մի քանի հիդրօքսիդ ( $OH^-$ ), խմբերից
- էլեկտրոլիտներ, որոնց դիտցումից առաջանում են մետաղի կատիոններ ու հիդրօքսիդ ( $OH^-$ ), անիոններ

## **Մքնոլորտ**

Երկիր մոլորակի օդային քաղանք

## **Մոլ**

նյութի քանակ, որում պարունակվում է այդ նյութի  $6,02 \cdot 10^{23}$  կառուցվածքային մասնիկ (ատոմ, մոլեկուլ, իոն, էլեկտրոն և այլն)

## **Մոլային գանգված**

նյութի մեկ մոլի գանգված՝ գրամներով ( $g/mol$ ), կամ

տվյալ նյութի  $6,02 \cdot 10^{23}$  մոլեկուլի գանգված

## **Մոլային ծավալ**

մեկ մոլ գազի զբաղեցրած ծավալ(նորմալ պայմաններում ցանկացած իներտ գազի մոլային ծավալը հավասար է  $22,4 \text{ l}$ )

## **Մոլային կոնցենտրացիա**

լուծված նյութի քանակի ( $n$ ) և լուծույթի ծավալի (V, լիտրերով) հարաբերությունն է, չափողականությունը, մոլ/l (մոլ/ $\text{լ}^3$ )

## **Մոլեկուլ**

փոքրագույն մասնիկ, որը պահպանում է նյութի հիմնական քիմիական հատկությունները

մասնիկ, որը կազմված է երկու կամ ավելի ատոմներից, որոնք միացած են կովալենտային կապերով

## **Նորմալ պայմաններ (ն.պ.)**

$0^\circ\text{C}$  և 1 մթն ճնշում

## **Ոչ էլեկտրոլիտներ**

որոնց ջրային լուծույթներն ու հալույթներն էլեկտրական հոսանքի հաղորդիչներ չեն

## **Չեզոքացման ռեակցիա**

թթվի և հիմքի միջև ընթացող ռեակցիա, որի հետևանքով աղ և ջուր են առաջանում

## **Պոլիմերացման ռեակցիա**

ցածրամոլեկուլային միացությունների բազմաթիվ մոլեկուլներ (մոնոմերներ) միանում են՝ առաջացնելով երկար շղթաներ՝ բարձրամոլեկուլային միացություններ, որոնք անվանվում են պոլիմերներ

## **Ռադիոակտիվություն**

ասումների անկայում միջուկների ինքնարերար ճեղքում

## **Չերմամիջուկային էներգիա**

անջատվում է ռադիոակտիվ տարրերի միջուկների տրոհումից

## **Չերմանջատիչ գործընթացներ**

որոնք ուղեկցվում են ջերմության անջատումով

## **Չերմականիչ գործընթացներ**

որոնք ուղեկցվում են ջերմության կլանումով

## **Չրոլորտ**

համաշխարհային օվկիանոսի, ցամաքի, մքնողորտի և ստորերկրյա ջրի առաջացրած Երկիր մոլորակի միասնական ջրային թաղանքը

## **Չուր**

համընդհանուր լուծիչ

## **Սևանա լիճ**

Հայաստանի Հանրապետության քաղցրահամ ջրի խոշորագույն ջրամբար, որը պայմանավորում է տարածաշրջանի կլիման

## **Սպիրտներ**

ածխաջրածինների ածանցյալներ, որոնց մոլեկուլում ջրածնի մեկ կամ մի քանի ատոմ տեղակալված են հիդրօքսիլային (OH) խմբերով

## **Վերականգնում**

Էլեկտրոնների միացման քիմիական գործընթաց

## **Տաքք քիմիական**

միջուկի դրական միևնույն լիցքն ունեցող ասումների համախումք

## **Ցիկլոալկաններ**

հագեցած ածխաջրածիններ, որոնցում ածխածնի ասումները օղակ են առաջացնում և ունեն  $C_nH_{2n}$  ընդհանուր բանաձև

## **Քիմիական նշան**

քիմիական տարրի լատինական կամ հունական անվանումների սկզբնաւտաերն են՝ գլխատառերով գրված: Եթե մի քանի տարրի անվանումների սկզբնաւտաերը նույնն են, ապա Բերցելիուսի առաջարկով առաջին տարրի մոտ փոքրատառով գրվում է հաջորդ տառերից որևէ մեկը

## **Օդ**

տարրեր զագերի համասեռ խառնուրդ

## **Օքսիդներ**

մոլեկուլում թթվածնի ատոմ պարունակող երկտարր այն միացությունները, որոնցում թթվածնի ատոմներն անմիջականորեն միացած են մեկ այլ տարրի ատոմների հետ, իսկ միմյանց հետ միացած չեն

## **Օրսիդներ հիմնային**

որոնց հիդրատները հիմքեր են կամ որոնք փոխազդում են թթուների հետ՝ առաջացնելով աղ և ջուր

## **Օրսիդներ թթվային**

որոնց հիդրատները թթուներ են կամ որոնք փոխազդում են հիմքերի հետ՝ առաջացնելով աղ և ջուր

## **Օրսիդներ ամֆոսներ**

որոնք փոխազդում են և՛ թթուների, և՛ հիմքերի հետ՝ առաջացնելով աղ և ջուր

## **Օրսիդներ անտարբեր**

որոնք աղ չեն առաջացնում, չեն փոխազդում ո՛չ թթուների, ո՛չ հիմքերի հետ

## **Ֆունկցիոնալ խումբ**

միացությունների բնորոշ քիմիական հատկությունները պայմանավորող ատոմների խումբ, որը որոշում է միացության պատկանելիությունը որոշակի դասի

## **ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. Хаускрофт К., Констебл Э. Современный курс общей химии: в 2 ч.-М.: Мир, 2002.
2. О.С. Габриелян, Ф.Н. Маскаев, С.Ю. Панамарев, В.И. Теренин. “Химия” 10 класс.- М.: Дрофа, 2005.
3. Л.Ю. Аликберова Занимательная химия.-М.: АСТ-ПРЕСС, 1999.- 560 с.
4. Большая детская энциклопедия. Химия / Под ред. Б.Д. Степина и Л.Ю. Аликберовой.-М.: 2000.- 640 с.
5. Ревель П., Ревель Ч. Среда нашего обитания: В 4 кн. (Пер. с англ.).- М.: Мир, 1995.- кн 1-4.
6. Степин Б.Д., Аликберова Л.Ю., Рукк Н.С. Домашняя химия: Химия в быту и на каждый день.-М.: РЭТ, 2001.-288 с.
7. Սահակյան Լ., Ավետիսյան Ա., Փիրումյան Գ., Նավասարդյան Ս. Քիմիա 9.-Եր.: Արևիկ, 2009.-223 էջ:
8. Սահակյան Լ.Ա., Խաչատրյան Ա.Գ. Քիմիա 11.-Եր.: Զանգակ, 2010.- 220 էջ:
9. Խաչատրյան Ա.Գ., Սահակյան Լ.Ա., Քիմիա 10.-Եր.: Զանգակ, 2010.- 220 էջ:
10. Савинкина Е.В., Логинова Г.П. Химия 10.- М.: АСТ-ПРЕСС ШКОЛА, 2005.-143 с.
11. Химия и общество: пер. с англ./под ред. проф. М.Г. Гольдфельда.- М.: Мир, 1995.-543 с.
12. Фримантл М. Химия в действии: в 2 ч.-М.: Мир, 1998.

# **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Նախաբան ..... 3

## **Գլուխ 1. ՔԻՄԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:** **ՔԻՄԻԱՅԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԷՎՈԼՅՈՒՅԻՆ**

1.1 Քիմիայի զարգացման համառոտ պատմություն .....	5
1.2 Ասուների և մոլեկուլների մասին պատկերացումների զարգացումը .....	9
1.3 Քիմիական տարր և քիմիական նշաններ .....	13
1.4 Քիմիայի հիմնական օրենքները .....	17
1.5 Քիմիայի ժամանակակից ուղղությունները .....	21

## **Գլուխ 2. ԾՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՔԻՄԻԱՆ: ԶՐՈԼՈՐԾ**

2.1 Ծրջակա միջավայրի աղտոտման բնական և արհեստական պատճառները .....	26
2.2 Զրոլորտ: Զուրը որպես կարևորագույն բնական պաշար .....	31
2.3 Զրի աղտոտման պատճառները և պայքարը դրանց դեմ .....	36
2.4 Խմելու ջրի համամոլորակային խնդիրը .....	45
2.5 Զրի մաքրումը .....	48

## **Գլուխ 3. ՄԹՆՈԼՈՐՏԻ ՔԻՄԻԱՆ**

3.1 Օդ, որը մենք շնչում ենք: Մթնոլորտի բաղադրությունը ....	51
3.2 Մթնոլորտը և կլիման .....	56
3.3 Օզոն: Օզոնային շերտ, օզոնային ճեղքերի առաջացման վտանգավորությունը .....	59
3.4 Մթնոլորտի աղտոտման հիմնական աղբյուրները .....	63
3.5 Ծրջակա միջավայրի աղտոտման խնդիրները և ժամանակակից կենսաձևը .....	66
3.6 Գործնական աշխատանք. ածխածնի (II) և (IV) օքսիդների ստացումը և հատկությունների ուսումնասիրումը .....	69

## **Գլուխ 4. ՔԻՄԻԱՆ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՆ**

4.1 Ածխաջրածիններ: Ընդհանուր բնութագիրը.....	71
4.2 Հագեցած ածխաջրածիններ .....	75
4.3 Չհագեցած ածխաջրածիններ՝ ալկեններ, ալկիններ, ալկաղիններ .....	79
4.4 Բենզոլ. կառուցվածքն ու բնորոշ հատկությունները .....	82
4.5 Ածխածին պարունակող նյութերը որպես էներգիայի աղբյուր.....	85
4.6 Նավթ: Նավթանյութեր .....	92
4.7 Էներգետիկայի էկոլոգիական հիմնահարցերը .....	100
4.8 Էներգիայի այլընտրանքային աղբյուրներ .....	106
4.9 Սպիրտները որպես վառելիք .....	111
Բացատրական բառարան .....	115
Գլուխանության ցանկ .....	121

## ՍԱՀԱԿՅԱՆ ԼԻԳԱ

# ՔԻՄԻԱ

## 10

### ԴԱՍԱԳԻՐՔ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔԻ ՀԱՄԱՐ

Հրատ. Խմբագիր՝  
Տեխն. Խմբագիր՝  
Համակարգչային  
ձևավորումը՝  
Կազմի ձևավորումը՝

Լիանա Չորանյան  
Արարատ Թովմասյան  
Նառա Վարդանյանի  
Գաղիկ Սարոյանի



«Անտարես» հրատարակչատուն, ՀՀ, Երևան- 0009, Մաշտոցի փ. 50ա/1  
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, Հեռ. / ֆաքս՝ (+374 10) 58 76 69  
[antares@antares.am](mailto:antares@antares.am), [www.antares.am](http://www.antares.am)

Հանձնված է տպագրության 11.08.11թ.: Տառատեսակը՝ DallakTimeNew: Զափը՝ 70x100 1/16:  
Տպագրությունը՝ օֆսեթ: 7.75 պայմ. տպագր. մամոլ: Տպաքանակ՝ 5000 օրինակ: Տպագրված է  
«Անտարես Նան պրինտ» տպարանում, Բագրատունյաց փ. 2-րդ հրբ. 23:Պատվեր՝ № 75: